1488

Пушкин

Арапский

2(075)
П-29

03 AUG 2009

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. Պ. ԵԱՂԻՇԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿԵՐՔԻ

ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Կ.Ս.Հ. ԱՄՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI-1922
ԱԿՍՈՒԱ, ՄԱՍՆԻԿՈՎԱ

Գ. ԽԱՉԿՈՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ՔԱՐՏԻՍԱՒՈՐ

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄ

ԾԱՆՕԹԷՆ ԱՆԾԱՆՕԹԸ, ԹԱՆՁՐԱՅԵԱԼԷՆ ՀԱՒԱՏԱԼԻՔԸ,
ԴԷՄՅԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ՈՒ
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

19699

ՄԻՋԻՆ ԳԱՍԼԸՆԹԱՑՔ
ԵՐԿԱՄԵԱՑ ՇՐՋԱՆ
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ՈՒ ՀՈԽԱՑԱԾԸ

Ա. Պ. ԵԱՂԻՇԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
A. B. YAZIJIAN LIBRARY

Ն. ՊԱՏԱԿ

աւանդել Հայ Քրիստոնէութիւնն եւ սիրելի ընծայել
իր Մայրենի Եկեղեցին

ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
220
Գ84-Խկ

«Լուսով Աստուածաթեանդ քո, Քրիստոս,
Լուսաւորեցեր աւուրս պնկեղեցի,
Պահեա՛ զսա՛ անշա՛րժ յաւիտեան»

«Ուրախ լե՛ր, սուրբ Եկեղեցի,
Քանզի Քրիստոս արքայն երկնից
Այսօր պսակեաց զՔեզ խաչիւ իւրով
Եւ զարդարեաց զամուրս քո
Սքանչելի փառօք իւրովք»

Շարակն

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1909

08.05.2013
1488

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՑ
Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Թիւ 27, Ֆինանսիոյար եօգուշու, Կ. Պոլիս

ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ
ՊԱՏԿ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԷՆ

220
584-ԽԿ
2(075)
Խ-29 ստ.
2.146

1896Ի ԱՊՐԻԼԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԳԱՓԻՐ ՆՈՒԷՐ

ԽԱՉԱԿԻՐ ՈՒ ԽԱՉԱԿՐՕՆ

Դ. ԽԱՉԿՈՆՑ

☞ ՅԱՌԱՔԱԲԱՆ

ՄԵԹՈՏ

ՆՊԱՏԱԿ

Տե՛ս Տարրական Դասընթացք

ԶԵԿՈՅՑ

«Կրօնի Ուսման Միջին Դասընթացքի»ը հիմնովին բարեփոխուած ու նորացած է: Միայն կէս մը կայ որուն վրայ կը հրաւիրենք կրօնուսոյցներու ուշադրութիւնը: Ազգային եկեղեցական պատմութեան քանի մը դրուագները հարկ էր աւելցնել այս Ազատագրուած շրջանին, բայց որովհետեւ անոնք Ազգային պատմութեան մեկ կարեւոր մասն ալ կը կազմեն, յարմարագոյն դատեցինք վերապահել զանոնք մեր Պատկերազարդ ու Քարտիսաւոր Հայոց Պատմութեան Միջին Դասընթացքին:

ԱՇԽԱՏԱՍՏԻՐՈՂԸ

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄ

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԹԷՍԱԳԻՐ

ՄՇԱԿՈՒԱԾ ՆԻՒԹԵՐՈՒ

Ա. Քրիստոնէական, Բ. Սրբազան պատմ., Գ. Եկեղեց. պատմ.
(Դարաբական Բ ժամ)

ԾԱՆՕԹԷՆ ԱՆՏԱՆՕԹԸ, ԹԱՆԶԲԱՑԵԱԼԷՆ ՀԱՒԱՏԱԼԻՔԸ
ԴԷՄՑԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ՈՒ
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶՕՐԳԱՑՈՒՄ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՔ

Ա. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ա. Աստուածպաշտութիւն. — Կարգը, Սահմանողը, Եղանակը, Լեզուն, Հասարակաց ու Մասնաւոր Աստուածպաշտութիւն, Կոչնակ, Զանգակ։

Բ. Աստուածպաշտութեան ծէսեր. — Սրբազան գործողութիւններ, Նիւթական եկեղեցւոյ կազմակերպութիւն, Եկեղեցւոյ նուիրապետութիւն, Անօթներ ու Սպասներ, Զգեստներ ու Զարդեր, Աստուածպաշտութեան Ս. Գիրքերը, Հասարակաց կարգ աղօթից՝ ինն ժամ, Ս. Պատարագի Ծիսական բացատրութիւն, Ս. Պատարագի երգեր, Եկեղեցւոյ եօթը սրբարար խորհուրդները, Սրբազան արարողութիւններ, Բարեպաշտական աւանդութիւններ։

Գ. Քրիստոնէական հաւատալիք. — Հաւատոյ Հանգանակի բացատրութիւն, Փառք ի Բարձունս, Աղօթքներ։

Դ. Քրիստոնէական բարոյական. — Տասն Պատուիրանի բացատրութիւն և Տարբ. Դասընթացքի Նահապետներու, Առաքելոց բարոյականը։ Ամբողջացնել Քրիստոնէական կրօնի բարոյականի ընդհանուր սկզբունքը։

Բ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Ուսիֆ, Պահիի օրեր. — Կերակուրի պահք, Եկեղեցւոյ պահք, Պահքի խումբեր, Մեծ պահքի կիրակիները, Կիրակի օր, Լուր օր, Նաւակատիք ու իր օրերը, Բարեկենդաններ. Մեռելոց օր։

2. Տօներ. — Անշարժ, Շարժական տօներ։

3. Տաղաւար.— Տարի. Դասընթացքի նիւթերն ընդլայնուած, Հինգ տաղաւարներ՝ պատմական տօնակարգ, Շարականք։

4. Տէրունի միւս տօներ. — (Պատմ. տօնակարգ շար.), Խաչի տօներ (Պատմ. տօնակարգ շար.), Եկեղեցւոյ տօներ (Պատմ. տօնակարգ շար.), Ս. Աստուածածնի տօներ (Պատմ. տօնակարգ շար.)։

5. Սրբոց տօներ. — **Ա. Աւագ տօներ** (Պատմ. տօն. շար.), Դաւիթ Մարգարէ, Ստեփանոս Նախամկայ, Որդիք Որոտման, Ս. Թադէոս ու Ս. Բարթողիմէոս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ։ **Բ. Ս. Լուսաւորչի հետ կապուած ազգային տօներ՝** Առաջաւորաց պահք, Ս. Հռիփսիմեանք ու Ս. Գայիանեանք, Հոզակաթ, Տապանակ, Երկրորդ Ծաղկազարդ, Ս. Լուսաւորչի որդիք ու թոռունք, Ս. Թարգմանիչք, Ղեւոնդեանք և Ս. Վարդանանք։ **Գ. Սրբոց միւս տօներ՝** Երկոտասան Մարգարէք, Եօթանասուն երկու աշակերտք, Զորս Աւետարանիչներ, Հրեշտակապետք, Ս. Յակոբ Մծբնայ, Տիեզերական Ժողովներ — Նիկիոյ, Կ. Պոլսոյ, Եփեսոսի — Նախահարք ու Մարգարէք՝ Մեծ ու Փոքր։

Գ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Տարի. Դասընթացքի Նահապետներու, Թագաւորներու թելադրութիւնները կրկնել իրենց բարոյականով։

2. Միջին Դասընթացքի մէջ յիշուած բառերու, կշիռներու, դրամներու բացատրութիւն, ժամանակագրական տախտակ, աշխարհագրական տեղերու ծանօթութիւն։

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՄ

Ա. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՀԱՅ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ա. ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Աղօթք. — *Աստուծոյ երկիւղածութեամբ դիմելն ու անոր հետ խօսիլը կը կոչուին Աղօթք։*

1. *Աղօթքով կը խնդրենք Աստուծմէ ինչ որ մեզի անհրաժեշտ է։* 2. *Աղօթքով շնորհակալութիւն կը յայտնենք անոր՝ իր ողորմութեան ու շնորհած բարիքներուն համար։* 3. *Աղօթքով կը փառաբանենք Աստուած իր կատարելութեանց համար։*

Աղօթքի տեսակներ. — *Այս պատճառաւ աղօթքները կ'ըլլան 1. Խնդրողական, 2. Գոհաբանական, 3. Փառաբանական։*

Բայց եթէ մեր հոգւոյն բոլոր զգացումները միահաղոյն միացած ու խառնուած՝ արտայայտուին մեր աղօթքներու մէջ, աղօթքները կ'սկսին գոհաբանականով, յետոյ կ'անցնին փառաբանականի ու կը վերջանան մեր պէտքերուն համար խնդրուածքով։

Աղօթելու եղանակ. — *Աղօթած ատենիս ուղիղ ու երկիւղածութեամբ կենալու ենք. եթէ պատկեր կայ, պատկերի առջև, և եթէ չկայ, երեսնիս դէպի արեւելք դարձնելով ու խաչակնքելով՝ ուշադրութեամբ ու ծանր պիտի ըսենք մեր աղօթքը: Վերջանալէ ետք դարձեալ կը խաչակնքենք երեսնիս ու երկրպագութիւն կ'ընենք:*

Աստուածպաշտութիւն. — *Աստուծոյ մեր մատուցած ծառայութիւնը կը կոչուի Աստուածպաշտութիւն:*

Աստուածպաշտութեան կարգ. — *Եկեղեցիներու մէջ հրապարակաւ կատարուած արարողութիւններն ու ծէսերը կը կազմեն Աստուածպաշտութեան կարգը:*

Աստուածպաշտութեան սահմանողը. — *Յիսուս Քրիստոս հիմնեց Աստուածպաշտութիւնն և առաքեալները սահմանեցին:*

Իսկ մեր Հայ. եկեղեցւոյ Աստուածպաշտութեան կարգերն ու արարողութիւնները հիմնուեցան Ս. Թադէոս ու Ս. Բարթողիմէոս առաքեալներու ձեռքով: Ս. Գր. Լուսաւորիչ, Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ ճոխացուցին Աստուածպաշտութեան կարգերը, Գիւտ կաթողիկոս, Ս. Յովհան Մանդակունի ու Ս. Ներսէս Շնորհալի հայրապետները զարդարեցին զանազան երգերով ու ընթերցուածքներով:

Աստուածպաշտութեան տեսակներ. — *Երկու տեսակ է Աստուածպաշտութիւնը՝ Մասնաւոր ու Հասարակաց:*

Մասնաւոր Աստուածպաշտութիւն. — *Յիսուս պատուիրեց. «Մտի՛ր սենեակդ ու ծածուկ աղօթէ.» Արդ՝ պարտաւոր ենք առանձին պաշտել Աստուած, մեր հոգին բանալով Անոր առջև, յայտնելով մեր պէտքերը, աղօթելով և կարդալով Անոր խօսքը:*

Մասնաւոր = Առանձնական Աստուածպաշտութիւն *կը կոչուին այն աղօթքն ու պաշտամունքը զոր կը կատարենք տունը՝ մեր ընտանիքին հետ, գերդաստանին*

մէջ՝ վառ պահելու բարեպաշտութեան զգացումն և Աստուծոյ օրհնութիւնն ստանալու համար:

Հասարակաց Աստուածպաշտութիւն. — *Մասնաւոր աղօթքէն զատ միաբանութեամբ Աստուծոյ պաշտօն մատուցանելու ենք եկեղեցիներու մէջ՝ հասարակաց բարօրութեան ու խաղաղութեան համար:*

Հասարակաց Աստուածպաշտութիւն *կը կոչուի այդպիսի աղօթք մը որ կը կատարուի հաւատացեալներու ներկայութեան ու նշանակուած պաշտօնեայներու ձեռքով:*

Միաբանական = Հասարակաց Աստուածպաշտութիւնը գեղեցիկ միջոց մըն է հաւատքի մէջ յառաջդիմելու և հաւատացեալներու մէջ արծարծելու և զօրացընելու բարեպաշտութեան ու մարդասիրութեան զգացումը:

Աստուածպաշտութեան եղանակ. — *Աստուածպաշտութեան արտաքին նշաններն են խաչակնքել, ծնրադրել, որ խոնարհութեան նշան է, երկրպագել որ հպատակութեան նշան է Աստուծոյ առջև, և կարդալ, սաղմոսել, բարձրաձայն աղօթել:*

Իսկ եթէ այս արարողութիւնները կապուած չեն մեր ներքին հոգեկան պաշտօնին հետ, այդ Աստուածպաշտութիւնը ճշմարիտ չէ, այլ ձեւական բան մը միայն: Հետեւապէս Աստուածպաշտութիւնը կատարուելու է խորին յարգանքով, ուշադրութեամբ, հաշտ սրտով, մարմնի մաքրութեամբ ու ջերմեռանդութեամբ:

Կոչնակ ու Զանգակ. — *Հասարակաց Աստուածպաշտութիւնը հրաւիրելու համար՝ հին ատեն կար Կոչնակ. ատիկա փայտէ կամ երկաթէ տախտակաձև գործիք մըն էր որուն վրայ թակ զարնելով՝ հաւատացեալներն եկեղեցի կը հրաւիրէին:*

Կոչնակը կը յիշեցնէ մեզի Հրեշտակապետի փողն որ

աշխարհի կատարածին պիտի կանչէ բոլոր ողջերն ու մեռեալներն Աստուծոյ ահեղ դատաստանի առջև։



Կոչնակ

Վերջերս կոչնակին յաջորդեց Զանգակը։ Իրաքանչիւր ժամերգութենէ, Ս. Պատարագէն առաջ ու յուղարկաւորութեան ատեն Եայլն զանգակը կը զօղանջէ։

Աստուածպաշտութեան լեզուն. — Հայ. Եկեղեցւոյ Աստուածպաշտութիւնը կը կատարուի Հին հայերեն = Գրաբար լեզուով որով գրուած են մեր եկեղեցական բոլոր գրուածները։ Աշխարհաբար = Նոր հայերէն լեզուով կատարել թոյլատրուած չէ։

Միայն Հայ Բողոքականներն աշխարհաբար լեզուով կը կատարեն իրենց Աստուածպաշտութիւնը ժողովարաններու մէջ։

Աստուածպաշտութեան ծեսեր. — Աստուածպաշտութեան արտաքին նշանները կը կոչուին ծես ու արարողութիւն։

Հայ. եկեղեցւոյ գլխաւոր ծէսերն են.

Ա. Սրբազան գործողութիւններ
Բ. Նիւթական եկեղեցւոյ կազմակերպութիւն
Գ. Ս. խորհուրդներ կատարելու ծեսեր
Դ. Հոգեւոր սովորութիւններ
Ե. Քրիստոսի Ս. Խաչի, Սրբոց մասունքներու եւ պատկերներու յարգութիւն
Զ. Պահք ու Ծոմապահութիւն
Է. Տօներ

Թելադրութիւններ. — Ի՞նչ է աղօթքը. — Աղօթքով ի՞նչեր կը խնդրենք Աստուծմէ. — Քանի՞ տեսակ աղօթք կայ. — Ի՞նչպէս է աղօթելու եղանակը. — Ի՞նչ է Աստուածպաշտութիւնը. — Ի՞նչ է Աստուածպաշտութեան կարգը. — Ո՞վ սահմանեց Աստուածպաշտութիւնը. — Որո՞նք սահմանեցին մեր եկեղեցւոյ Աստուածպաշտութիւնը. — Քանի՞ տեսակ է Աստուածպաշտութիւնը. — Ե՞րբ կ'ըլլայ Մասնաւոր — Ինչու կը կատարենք. — Ո՞ր աղօթքը կը կոչուի Հասարակաց. — Ի՞նչ է կոչնակը, Զանգակը. — Կոչնակն ի՞նչ կը յիշեցնէ. — Ո՞րն է Աստուածպաշտութեան լեզուն. — Որո՞նք են Աստուածպաշտութեան արտաքին նշանները։

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՒԹԵԱՆ ԾԷՍԵՐ

Բ. ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Աստուածպաշտութեան ատեն կը կատարուին հետեւեալ սրբազան գործողութիւնները։

1. Խաչակնքելով կը յիշենք խաչի վրայ մեր Փրկչին մահը մարդոց փրկութեան համար և կը խնդրենք Աստուծոյ ողորմութիւնը։ Եկեղեցւոյ մէջ կը խաչակնքենք մեր անձը, քանի անգամ որ Յիսուս Քրիստոսի անունը կ'արտասանուի։ Կը խաչակնքենք նաև առ հասարակ ո՛և է գործի ձեռնարկելէ առաջ։

Սապէս կը խաչակնքենք. աջ ձեռքի երեք մատները միացնելով՝ նախ կը դնենք մեր ճակտին վրայ, յետոյ կուրծքի, ապա ձախ ու աջ թեւերու մօտ, վերջն ալ մէջտեղը՝ կուրծքի վրայ։

2. Երկրպագելով ու գլուխ խոնարհեցնելով ցոյց կուտանք մեր ծառայութիւնն ու հեզութիւնն Աստուծոյ առջև և կը խոստովանինք թէ մեղաւոր ենք։ Երկրպագութիւնը նշան է նաև թէ մենք կը մասնակցինք Աստուածպաշտական աղօթքներուն և խնդրուածքներուն։

3. Ծնրադրելով ցոյց կուտանք մեր անպայման խոնարհութիւնն Աստուծոյ առջև, ու հնազանդութիւն՝ Անոր կամքին։ Կը ծնրադրենք Վերարերման ու Սրբասացութեան ատեն և ամեն անգամ որ «Աստուծոյ երկիրպագեսցուք» կ'ըսեն սարկաւագն ու քահանայն։

4. Խնկարկելով այսինքն խունկ ծխելով մեր յարգանքներն ու նուէրները կը մատուցանենք Աստուծոյ, քանի որ անձամբ չենք կրնար մօտենալ Անոր։

Խնկարկելով կը փափաքինք որ Աստուծոյ օրհնութիւնն իջնէ մարդոց վրայ, և իւրաքանչիւրին աղօթքը խունկի ծխի նման բարձրանայ դէպի Աստուած։

Խնկարկութիւնն երկու նշանակութիւն ունի. մէկը նշան է Աստուածպաշտութեան, միւսը՝ ջերմեռանդ աղօթքի։

Եկեղեցւոյ մէջ կը խնկարկենք, երբ ժամերգութեան սկիզբը։

1. «Տէ՛ր, զի բազում» կ'ըսեն։
2. Ս. Աւետարան կը կարդացուի,
3. «Օրհնութեան» շարականի սկիզբը, և «Հոգեգալստեան» շարականին,
4. «Փա՛ռք ի բարձունս» երգելու ատեն,
5. «Լոյս զուարթ»ի երկրորդ մասի «Եկեալքս»ին,
6. «Ս. Աստուած» երգելու ատեն,
7. Ս. Պատարագի սպասը դնելու ատեն,
8. Վերարերման, գլխաւոր երգերու և աղօթքներու ժամանակ,
9. Անդաստանի, տեառնագրութեան ատեն,

5. Օրհնել խաչով, աւետարանով ու սրբոց մասունքներով նշան է Տիրոջ օրհնութեան։

6. Թափօրի, Անդաստանի ատեն կը տեառնագրուին աշխարհիս չորս կողմերը։ Ատիկա կը կատարուի Տէրունի հանդիսաւոր տօներուն, բոլոր աշխարհի վրայ Աստուծոյ օրհնութիւնը մաղթելով և նաև երաշտութեան ու մահտարաժամի առաջքն առնելու բարեպաշտութեամբ։

7. Նախատօնակ. — Հայ. եկեղեցւոյ հաշուով այս իրիկունէ մինչև յաջորդ իրիկունն օրը սկսելուն համար՝ եկեղեցին Տէրունի ու նշանաւոր սրբոց նախատօնախմբու-

թեան նախընթաց իրիկունն առանձին տօն կը կատարէ՝ զգեստաւորուած ու եկեղեցական սպասներով։ Այդ միջոցին կ'երգուի յաջորդ օրուան շարականներու մէկ մասը։ Ատիկա կը կոչուի Նախատօնակ։

8. Հսկում. — Տէրունի մեծ տօներու նախընթաց գիշերը կը կատարուի յաջորդ օրուան ժամերգութեան մէկ մասը։ Ատիկա կը կոչուի Հսկում, այսինքն Արթնութիւն։

Թելադրութիւններ — Աստուածպաշտութեան ատեն ո՞ր սրբազան գործողութիւնները կը կատարուին. — Ի՞նչպէս կը խաչակնքենք. — Ի՞նչ կը յիշենք. — Ի՞նչ կը խնդրենք. — Ե՞րբ կը խաչակնքենք. — Երկրպագելով, խոնարհելով՝ ի՞նչ կը խոստովանինք.— Ծնրադրելով՝ ի՞նչ ցոյց կուտանք. — Խնկարկելով՝ ի՞նչ կը մատուցանենք Աստուծոյ. — Ինչի՞ կը փափաքինք. - Ինչի՞ նշան է. — Ե՞րբ կը խնկարկենք եկեղեցւոյ մէջ — Ս. Խաչով օրհնել ինչի՞ նշան է.— Ի՞նչպէս կը տեսնենք գրուին աշխարհիս չորս կողմերը. — Հայ. եկեղեցւոյ հաշուով ե՞րբ կ'սկսի օրը. — Ե՞րբ կը կատարուի Նախատօնակը — Ինչե՞ր կ'երգուին. — Ե՞րբ կը կատարենք Հսկումը։



Կաթողիկէ Ս. Էջմիածին, Գարեգին ձեւ Հայ եկեղեցւոյ



1004
19699
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Научная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ս. ԱՍԻՆԻ ԱՆՎԱՆ

Եկեղեցւոյ յատակագիծ

1. Մատթեոս — 2. Մարկոս — 3. Ղուկաս — 4. Յովհաննէս — 5. Պետրոս — 6. Անդրէաս — 7. Փիլիպպոս — 8. Գր. Լուսաւորիչ — 9. Բարթողիմէոս — 10. Սիմոն Կանանացի — 11. Մատաթիա — 12. Թադէոս — 13. Յակոբոս Ալփեայ — 14. Թովմաս — 15. Յակոբոս Ղեբէոս — 16. Պօղոս — 17. 18. 19 20. Կաթողիկէն կրող չորս սիւները. — 21. Կոզակ — 22. Աւագ խորան — 23. Զախակողմեան խորան — 24. Բեմ — 25. Աջակողմեան պաշտարան — 26. Աւագան — 27. Զախակողմեան պաշտարան — 28. Դաս — 29. Ատեան — 30. 31. Սիւներ — 32. Աջակողմեան գաւիթ — 33. Զախակողմեան գաւիթ — 34. Անգաստակ — 35. Աւագ = Արևմտ. դուռ — 36. Խորշրդանոց — 37. Աջակողմեան խորան

360 — Կ. Ի Ո—ՍՍ Մ Ի Ջ Ի Ն

Գ. ՆԻԻԹԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

—

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ = ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցի. — *Աստուածպաշտութեան գլխաւոր տեղը Եկեղեցին է որ կը կոչուի նաև Տաճար։ Եկեղեցին կ'օրհնուի ու Ս. Միւռոնով կ'օծուի եպիսկոպոսին ձեռքով։ Եկեղեցւոյ մէջ կը կատարուին եկեղեցւոյ Ս. Խորհուրդներն ու արբագործութիւնները։ Եկեղեցիէն դուրս բացառիկ պարագայներու մէջ կարելի է կատարել Աստուածպաշտութեան քանի մը մասերն ու խորհուրդները։*

Եկեղեցին հաւատացեալներու ժողովն է։ Հաւատացեալները միաւորուած են մէկ հաւատքով և կը գտնուին մէկ հոգեւոր Հովուապետի հովանաւորութեան տակ։

Եկեղեցւոյ ձեւը. — *Հայ եկեղեցին կը չինուի երկար ու քառանկիւն, մեծ մասամբ խաչաձեւ։ Եկեղեցւոյ Խորանը կը գտնուի արեւելեան կողմը, որովհետև ինչպէս արեւելքէն կը ծագի արեւը, այնպէս ալ արեւելքէն պիտի ըլլայ Քրիստոսի Երկրորդ գալուստը։*

Եկեղեցւոյ Մայր-դուռը կը չինուի արեւմտեան կողմը, որովհետև հեթանոսական խաւարէն կու գանք դէպ ի Աստուածային լոյսը։

Եկեղեցւոյ գլուխը չորս գլխաւոր սիւներու վրայ կը հաստատուի վեղարաձև գմբէթը = Կաթողիկէն որուն ծայրը կը փայլի Քրիստոսի Ս. Խաչը։

Եկեղեցին օծուելու ատեն կը նուիրուի ի պատիւ Տէրունի ա՛ և է տօնի կամ ա՛ և է սուրբի անունին։

Եկեղեցւոյ մասերը. — *Եկեղեցին երեք մաս ունի, գաւիթ, ատեան, բեմ։*

Գաւիթ. — *Բուն եկեղեցւոյ արեւմտեան պատին կից կը գտնուի Գաւիթն իր աջ ու ձախ բաժանումներով։ Հին ատեն գաւիթին մէջ կ'աղօթէին մեղաւոր ապաշխարողները։ Գաւիթին վրայ կը գտնուի Վերնատունը։*

Ատեան. — *Ժողովրդին աղօթած տեղն Ատեան կը կոչուի։*

Դաս. — *Ատեանին առջեւի այն մասն որ կցուած է բեմին՝ կը կոչուի Դաս։ Սովորաբար դասը քանի մը մատ բարձր է եկեղեցւոյ յատակէն, և աջ ու ձախ կողմերը վանդակապատ են։ Դասը յատկացուած է միայն Աստուածպաշտութեան. հոս կը կենան հոգեւորականներն ու դպիրներն եւ կը կատարուի ժամերգութիւնը դաս առ դաս, իսկ հանդիսաւոր տօներուն՝ Նախատօնակը։ Անդաստանի ատեն ժամերգութիւնը կը կատարուի ատեանին մէջտեղը։*

Աջ կողմի դասը կը կոչուի Աջակողմեան = Վերի դաս ուր կը դրուի Քարոզչին կամ Առաջնորդին աթոռը և կամ Հայրապետական աթոռը։ Եթէ ատենք չըլլան, Աւագերէցը կը կենայ առանց աթոռի։ Ատենց ներկայութեան Աւագերէցը Զախակողմեան դասը՝ Վարի դասը կ'անցնի։

Աւազան. — *Եթէ եկեղեցին կողմնակի տաճարներ չունի, աջակողմեան դասին պատին հիւսիսային արեւմտեան կողմը կը զետեղուի Մկրտուրեան քարէ Աւազանը՝ հաւատացեալներու զաւակներն ու երախայները մկրտելու համար։ Եպիսկոպոսը կ'օրհնէ ու Ս. Միւռոնով կ'օծէ Աւազանը։ Մկրտուելով Աւազանին մէջ՝ կը ծնինք Յաւիտենական կեանքին մէջ։*

Բեմ. — *Եկեղեցւոյ արեւելեան կողմը դասի առջեւ կը բարձրանայ եօթն աստիճաններով Բեմը. ասոր վրայ կը կատարուին Ս. Պատարագի արարողութիւնները, հոգեւորականներու ձեռնադրութիւնը, Խզա-*

բերից աւետարանի ընթերցումը, նաև քարոզութիւնը։ Բեմին վրայ կը բարձրանան միայն ատիճան ունեցող հոգեւորականները։

Սեղանը բեմին վրայ ամրացած է դէպի արեւելք վէմ քարի վրայ։ Ասոր վրայ կը մատուցուի Ս. Պատարագը։ Սեղանին կրնան մօտենալ միայն եկեղեցւոյ հոգեւոր պաշտօնեայները։ Սեղանը կ'ըլլայ քարէ, հաստատուն և Ս. Միւռոնով կ'օծուի։

Սեղանը խորհրդանշան է Գողգոթա լերան ուր խաչուեցաւ Քրիստոս և այն այրին՝ ուր թաղուեցաւ Անիկա։

Սեղանին վրայ մէջտեղը կը դրուին Ս. խաչ և Ս. աւետարան, Տէրունական պատկեր մը, Մատնատուփ և Ս. Միւռոն և տասներկու մոմ։

Վարագոյրը Բեմին վրայ կը կախուի մէկ կողմ. սեղանը կը ծածկուի վարագոյրով հետեւեալ պարագայներու մէջ։

1. Ս. Պատարագի սպասը դնելու ատեն,
2. «Տէր, ողորմեա» երգելու ատեն,
3. Երեք տիեզերական ժողովներուն տօներուն «Ո՛վ հրաշալի» շարականն երգելու ատեն,
4. «Դռնբացէք»ի կարգը կատարելու ատեն,
5. Քառասնօրեայ պահքի օրերուն,
6. «Ճրագալոյցի Իրիկունները,
7. Աւագ Եչ. ապաշխարողներու կարգը կատարելու ատեն մինչև Ս. Պատարագի սկզբնաւորութիւնը։

Խաչկալ. — Աւագ խորանի սեղանի վրայ, պատկերէն վեր, Սեղանին ուղղութեամբ կը բարձրանայ Խաչկան որ փայտէ՝ ոսկեզօծ չինուած է. գլուխը կը կանգնի խաչ մը. ասկէ է իր անունը։

Աւագ սեղանին աջ կողմը կը գտնուի Աջակողմեան խորանը, ձախ կողմն ալ կը գտնուի Ձախակողմեան խորանը։ Ասոնց վրայ երբեմն Ս. Պատարագ կը մատուցուի։

Ընծայարան. — Սեղանին հիւս. պատին մէջ փորուած է խորշ մը որ կը կոչուի Ընծայարան = Խորհրդանոց։ Հոս կը դրուի Ս. Պատարագի Սպասը՝ այսինքն Նշխարն ու Գինին և այս տեղէն կը վերաբերեն Ս. Պատարագի ատեն։

Ընծայարանը կը յիշեցնէ Հին ուխտի Առաջաւորութեան սեղանն ու այն այրն՝ ուր ծնաւ Քրիստոս։

Սարկաւագատուն = Սրբատուն = Աւանդատունը Եկեղեցւոյ կից ձախակողմեան չէնք մըն է, կամ երբեմն ալ եկեղեցւոյ տակ յարկ մը ուր կը պահուին եկեղեցւոյ անօթներն ու զգեստները։ Հոս կը զգեստաւորուին եկեղեցւոյ բոլոր պաշտօնեայներն Աստուածապաշտութեան կարգ կատարելու համար։

Թելադրութիւններ. — Աստուածպաշտութեան գլխաւոր տեղն ո՞րն է։ — Ինչ կ'ըլլայ եկեղեցին։ — Ինչէ՞ր կը կազմուին հոն։ — Եկեղեցիին դուրս ե՞րբ կարելի է կատարել զանոնք։ — Ամենքն ալ կարելի՞ է։ — Ինչ է եկեղեցին։ — Հաւատացեալներն ինչո՞վ միացած են։ — Ինչ ձև ունի Հայոց եկեղեցին։ — Խորանն ո՞ր կողմն է։ — Մայր-դուռն ո՞ր կողմնէ։ — Ինչո՞ւ։ — Ո՞ւր կը գտնուի Կաթողիկէն։ — Եկեղեցին ե՞րբ կը նուիրուի։ — Եկեղեցին քանի՞ մաս ունի։ — Ո՞ւր է գաւիթը։ — Վերնատո՞ւնը։ — Ո՞ւր է Ատեանը։ — Դա՞ռը։ — Որո՞նք կը կենան դռան։ — Քանի՞ դաս կայ։ — Ո՞ւր է Աւազանը։ — Եպիսկոպոսն աւազանն ինչ կ'ընէ։ — Ինչո՞ւ կը մկրտուինք։ — Ո՞ւր է Սեղանը։ — Ինչ նիւթէ է։ — Որո՞նք կրնան մօտենալ Սեղանին։ — Ինչ եղած է Սեղանը։ — Ո՞ւր է Աջակողմեան խորանը։ — Ձախակողմեան խորանը։ — Ինչի՞ նուիրուած են։ — Ո՞ւր կը գտնուի Ընծայարանը։ — Ինչ կը յիշեցնէ։ — Ո՞ւր է Աւանդատունը։ — Ինչ բանի յատուկ է։

Դ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՅՆԵՐԸ

—

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Նուիրապետութիւն. — *Եկեղեցւոյ պաշտօնեայներուն զանազան աստիճաններու դասակարգութիւնը կը կոչուի Նուիրապետութիւն։*

Քրիստոս հաստատեց եկեղեցւոյ նուիրապետութիւնը, երբ որ ընտրեց տասներկու առաքեալներն իբրև իրեն մշտնջենաւոր հետեւողներ։

Սկզբան անոնք կը կատարէին ամէն պարտականութիւն Աստուածպաշտութեան առեն, ինչպէս որ ո և է եկեղեցւոյ մէջ գտնուած մէկ քահանայն ինք ամէն բան կը կատարէ։ Բայց երբոր հաւատացեալներու թիւն աճեցաւ, և առաքեալներն այլեւս չէին հասներ ամէնուն, անոնք եկեղեցւոյ կառավարութիւնը յանձնեցին առանձին ընտրուած անձերու որ ձեռնադրուելով սարկաւագ, երեց, եպիսկոպոս անունը կրեցին։ Այսպէս մեր Առաջին լուսաւորիչները Հայ եկեղեցւոյ կառավարութեան գործը յանձնեցին իրենցմէ ձեռնադրուած եպիսկոպոսներուն և քահանայներուն։

Հայ եկեղեցւոյ Նուիրապետութեան աստիճաններ են.

1. Հայրապետ, 2. Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս, Բորեպիսկոպոս, 3. Ծայրագոյն Վարդապետ, Վարդապետ, 4. Քահանայ, 5. Սարկաւագ, Կիսասարկաւագ, 6. Դպիր, 7. Զանրնկալ, Երգմնեցուցիչ, Դռնապան։

1. Հայրապետ. — *Հայ. եկեղեցւոյ Ծայրագոյն պետը, տէրն ու կաթողիկոսն է Հայրապետը. անոր անունը կը յիշուի Հայոց բոլոր եկեղեցիներու մէջ. Անոր գերիշխանութեան կը հնազանդին բոլոր Հայ հոգեւորականները։ Հայրապետը կը կառավարէ Հայաստանեայց եկեղեցին, կը կարգադրէ հոգեւոր գործերը, իր թեմերուն կը ձեռնադրէ եպիսկոպոսները, կ'օրհնէ Ս. Միւռոնը, կը գումարէ Ազգ. եկեղեցական ընդհ. ժողով, կը դրկէ Կանոնական թղթեր, Կոնդակներ, կը վարձատրէ կամ կը պատժէ, կը թոյլատրէ Կրօնական գիրքերու հրատարակութիւնը։*

Օծում, Քող. — *Հայոց Հայրապետը կ'ընտրուի ամբողջ ազգին կողմէ։ Ս. Էջմիածնի տաճարին մէջ աստուածադիր օրէնքները, Հայ եկեղեցւոյ դաւանութիւնն ու Հայրապետական կանոններն անխախտ պահել ուխտելէն ետք, կ'օծուի տասներկու եպիսկոպոսներու ձեռքով։ Ասոնք Ս. Միւռոնով կ'օծեն հայրապետին գագաթը ու վրան կը ձգեն Հայրապետական քողն որ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ՝ կը գործածուի իբրև նշան Հայրապետութեան։ Քողը կը յիշեցնէ Իսրայելացւոյ ծայրագոյն առաջնորդ Մովսէս մարգարէին դէմքն Աստուծոյ հետ խօսելու ատեն լուսաւորիչն որու ոչ մէկը կրցաւ նայիլ։ Հայրապետն իբրև ծայրագոյն պետ Հայ ժողովրդին՝ կուտայ Աստուածային պատգամները։ Աթոռն է Ս. Էջմիածին։*

Երկու սարկաւագներ Հայրապետական սպիտակ ոսկեթել քողը Հայրապետի առջեւէն հանդէսներու ատեն կը տանին։

Ս. Էջմիածնի Հայրապետը կը կոչուի նաև Եպիսկոպոսապետ, Ծայրագոյն Պատրիարք, Քահանայապետ ու Կաթողիկոս ամենայն Հայոց։ Տիրոջոն է Ն. Ս. Օծութիւն, Վեհաշնորհ Ս. Հայրապետ։

Ս. Էջմիածնի Հայրապետէն զատ կան երկու Մասնաւոր կաթողիկոսներ ալ — Սսի ու Աղթամարի — որ ենթարկուած են Մայր-Աթոռ Ս. Էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսին իշխանութեան։

Պատրիարքներ. — Կան երկու պատրիարքներ՝ Երուսաղեմի ու Կ. Պոլսոյ որոնք Արքեպիսկոպոսներ են միայն:

Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս, Քորեպիսկոպոս.— Ցունարէն է եպիսկոպոս բառն որ կը նշանակէ տեսուչ:

Եպիսկոպոսին պաշտօնն է վիճակին առաջնորդ ըղլալ, վարդապետ, քահանայ, սարկաւագ եւայլն. պաշտօնեայներ ձեռնադրել, եկեղեցի ու անօթներ օծել, հսկել իր հօտին հոգեւոր ու կրթական գործերուն:

Եպիսկոպոսը կ'ընտրուի իր թեմի ժողովրդին ու հոգեւորականներուն հաւանութեամբ և Ազգ. Կեդր. Վարչութեան վաւերացումեն ետք, կը ներկայացնեն Կաթողիկոսին ձեռնադրութեան համար:

Կաթողիկոսն ընտրուածը կը ձեռնադրէ Ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ՝ անոր տալով հովուական գաւազան և դնելով անոր ճկոյթ մատին եպիսկոպոսական մատանին՝ հովուական իշխանութեան նշան որ ԺԲ դարէն սկսած է:

Եպիսկոպոս ձեռնադրելու իրաւասութիւնը կը պատկանի Ս. Էջմիածնի Ընդհանրական կաթողիկոսին, բայց Սսի ու Աղթամարի կաթողիկոսներն ալ կը ձեռնադրեն իրենց թեմին համար:

Արքեպիսկոպոսն ու Քորեպիսկոպոսն եպիսկոպոսին աստիճանն ունին, միայն առաջինն աւագութեան տիտղոսն է, իսկ վերջինը հին ատեն գոյութիւն ունէր և վարչական կոչում էր, գաւառակի մը հովիւն էր՝ եպիսկոպոսին իշխանութեան ենթարկեալ:

Հայրապետն Արքեպիսկոպոսութիւնը կուտայ Օրենուրեան կոնդակով:

Վարդապետ, Ծայրագոյն վարդապետ. — Քահանայի ձեռնադրութիւնն ունի Վարդապետը, միայն քարոզելու իշխանութեամբ անկէ կը տարբերի: Վարդապետը քահանայէն կ'որոշուի նաև իր գլուխը ծածկած վեղարով որ կրօնաւորութեան ու Ամբիծ կեանքի նշան է:

Վարդապետին կոչումն է քարոզել եկեղեցւոյ մէջ Աստուծոյ խօսքը, օրէնքն ու հաւատքը:

Ծայրագոյն վարդապետ կը կոչուին անոնք որ Վարդապետական ծայրագոյն իշխանութիւն ստացած են և կը կրեն Օձագլուխ գաւազան՝ օրինակ Մովսէսի գաւազանին որ օձ դարձաւ: Ոչ-ծայրագոյն վարդապետներն ալ կը կրեն:

Քահանայ. — Երեց ալ կը կոչուի Քահանայն. եպիսկոպոսէն կ'օծուի Ս. մրուռոնով, կ'ընդունի Ս. Հոգւոյն շնորհը, որով կը դառնայ Ժողովուրդի հովիւ ու եկեղեցւոյ Ս. խորհուրդները կատարող:

Հին տիպերուն Քահանայ

Քահանայական կարգն եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է որ կը կատարուի եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի ատեն Սեղանի առջև, Բեմին վրայ, և ունի եօթն աստիճան—Դռնապանութիւն, Երգմնեցուցչութիւն, Զանգնկալութիւն, Դպրութիւն, Կիսասարկաւագութիւն, Սարկաւագութիւն, Քահանայութիւն:

Քահանայացուն հաշտանդամ ըլլալու չէ, ունենալու է ուսում, հոգեւոր կոչում և հոգեւորական ըլլալու ձգտում:

Քահանայն ժողովրդէն կ'ընտրուի, ինչպէս բոլոր եկեղեցականներն ալ:

Քահանայն ամուսնացեալ ըլլայ, թէ կուսակրօն,

ձեռնադրուելէ ետք, քառասուն օր կը փակուի իր խուցն որ Քրիստոսի անապատն առանձնանալուն նշան է, աղօթքով ու ապաշխարութեամբ կը սորվի յաղթել իր պաշտօնին դժուարութեանց և կը մտնէ իր Առաքելական պաշտօնին մէջ։

Սարկաւագին պաշտօնն է սպասաւորել Ս. Պատարագին՝ այսինքն կարդալ Աւետարան, ըսել Հաւատքի հանգանակն և Ս. Խորհուրդն Ընծայարանէն վերաբերելով՝ մատուցանել ժամարար քահանային։

Սարկաւագը հին ատեն եպիսկոպոսի փոխանորդութեան պաշտօն ալ կը վարէր, ինչպէս Խաղ սարկաւագը Մեծն Ներսէսի հիմնած բազմաթիւ Բարեգործական հաստատութեանց վերատեսուչի պաշտօնը կը վարէր իբր անոր փոխանորդ։

Եպիսկոպոսը կը ձեռնադրէ Սարկաւագը Ս. Պատարագի ատեն՝ անոր ձախ ուսին վրայ ձգելով Ուրար որով կ'որոշուի եկեղեցւոյ միւս պաշտօնեայներէն։ Ուրարը նշան է Քրիստոսի լուծը կիսով չափ կրելուն։

Կիսասարկաւագն օգնական է Սարկաւագին. անոր պաշտօնն է զգեստաւորել ժամարար քահանայն, դասարկ Սկիհը Խորհրդանոց տանիլ ու սպասաւորել Ս. Պատարագին։

Եպիսկոպոսը կը ձեռնադրէ Կիսասարկաւագը՝ հագցընելով անոր հոգեւորական սքեմը, անոր ձախ բազուկին ձգելով Բազկուրար=Երկծալ ուրար որ կը նշանակէ թէ Քրիստոսի լուծն ամբողջովին կրելու դեռ անկարող է, այլ անոր միայն մէկ մասը։ Ձեռնադրելու ատեն ձեռքը կու տայ դատարկ Սկիհ, Մաղզմայ, Պատարագի զգեստն ու Խորհրդատետրը։

Եկեղեցւոյ միւս պաշտօնեայները. — Եկեղեցւոյ ջահերը վառելու, Նշխարք թխելու, Բաժակը պատրաստելու պաշտօնը կը կոչուի Ջահընկալութիւն որ քահա-

նայութեան Գ. աստիճանն է։ Քահանայէն զատ այս աստիճանն ունեցող անձեր ալ կան որ սովորաբար Լուսարար=Տիրացու ալ կը կոչուին։

Երդմնեցուցիչը Մկրտութեան ատեն կը կարդայ Հրաժարիմը։ Ջահընկալը կը կատարէ Երդմնեցուցչութեան պաշտօնը։

Դպիրը կը կարդայ մարգարէներուն և առաքելներուն գիրքը, կ'երգէ չարական, տաղ և իր աստիճանը կ'ստանայ եպիսկոպոսէն։

Դռնապանը ժամկոչ ալ կը կոչուի և իր աստիճանը կ'ստանայ եպիսկոպոսէն։ Դռնապանը կը բանայ, կը փակէ եկեղեցւոյ դռները, կ'աւլէ, կը մաքրէ և այլն։

Թելադրութիւններ.— Ի՞նչ է Նուիրապետութիւնը։— Ո՞վ հաստատեց։ — Ե՞րբ հաստատուեցաւ։ — Որո՞նք են Նուիրապետութեան աստիճանները։ — Ո՞վ է Հայրապետը։ — Անոր անունն ի՞նչ կ'ըլլայ։ — Ո՞ւր։ — Հայրապետին պաշտօնն ի՞նչ է։ — Ո՞վ կ'ընտրէ Հայրապետը։ — Օծումն առաջ ինչե՞ր կ'ուխտէ։— Ո՞ւր։ — Ինչո՞վ կ'օծուի։ — Ինչո՞ւ կ'օծուի։ — Ի՞նչ բանի նշան է Քօղը։— Ո՞ր Հայրապետն ի՞նչ արտաքսներ ունի։ — Որո՞նք են Մատնաւոր կաթողիկոսները։ — Անոնք որո՞ւն իշխանութեան ենթարկուած են։ — Քանի՞ Պատրիարք կայ։ — Աստիճանաւ ի՞նչ են։ — Ի՞նչ կը նշանակէ Եպիսկոպոս։ — Ի՞նչ է պաշտօնը։— Արքեպիսկոպոսն ու Քորեպիսկոպոսն ինչո՞վ կը տարբերին Եպիսկոպոսէն։ — Վարդապետն որո՞ւ պէս կը ձեռնադրուի։ — Ինչո՞վ կ'որոշուի Քահանայէն։— Օձագլուխ դասուզան ի՞նչ կը նշանակէ։ — Քահանայն ի՞նչ կը կոչուի։ — Ի՞նչ է պաշտօնը։— Ուրկէ՞ կ'ընտրուի։ Ո՞վ կը ձեռնադրէ զայն։ — Ի՞նչ է Սարկաւարդին պաշտօնը։ — Հին ատեն ուրիշ ի՞նչ պաշտօն ունէր։ — Կիսասարկաւարդն ի՞նչ պաշտօն ունի։ — Ի՞նչպէս կը ձեռնադրուի։— Որո՞նք են եկեղեցւոյ միւս պաշտօնեայները։

Ա. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցէ՛ք հետեւեալները.

Աղօթք... — Կ'աղօթենք սապէս... — Աստուածպաշտութիւն կը կոչուի... — Մասնաւոր Աստուածպաշտութիւնը կը կատարենք ... — Հասարակաց Աստուածպաշտութիւնը կը կատարենք... — Աստուածպաշտութեան արտաքին նշաններն են... — Աստուածպաշտութեան տաճն կը կատարենք սա՛ սրբազան գործողութիւնները... — Խաչակնքելով կը յիշենք... — Կը խաչակնքենք սապէս... — Սրկրպագութիւնը նշան է... — Կը ծնրադրենք... — ... տաճն ։ — Խնկարկելով կը փափագինք... — Եկեղեցւոյ մէջ կը խնկարկեն... — Թափոր կը կատարուի... — Անդաստան... — Հայ եկեղեցւոյ օրը կ'սկսի... — Նախատօնակ կը կոչուի... — Հայ եկեղեցւոյ ձեւն է... — Աստուածպաշտութիւնը կը կատարուի եկեղեցիին դուրս... — Եկեղեցւոյ մասերն են... — Գաւիթին մէջ կ'աղօթէին... — Դասը յատկացուած է ... — Աւազանը կը գտնուի... — Բեմը յատկացուած է... — Սեղանը... — Վարագոյրը կը գոցուի ... — Խաչկալը կը բարձրանայ... — Ընծայարան կը կոչուի... — Աւանդատուն... — Նուիրապետութիւն կը կոչուի... — Նուիրապետութեան աստիճաններն են... — Հայրապետին պաշտօնն է... — Հայրապետը կ'ընտրուի... — Կ'օծուի... — Կը կոչուի... — Հայոց երկու Մասնաւոր կաթողիկոսներն են... — Հայերն ունին երկու Պատրիարք... — Եպիսկոպոսին պաշտօնն է... — Եպիսկոպոսը կ'ընտրուի ... — Կը վաւերացուի... — Կը ձեռնադրուի... — Արքեպիսկոպոսութիւնը կը տրուի ... — Վարդապետն ունի... — Ձեռնադրութեամբ միայն կը տարբերի... — Վարդապետին կոչումն է... — Մայրապետն վարդապետ կը կոչուին... — Քահանայն կ'ընտրուի... — Կ'օծուի... — Ունի... — Աստիճանները... — Ունենալու է... — Ձեռնադրութենէն եաք... — Սարկաւագին պաշտօնն է... — Հին տաճն... — Կիսասարկաւագն օգնական է... — Կը ձեռնադրուի... — Դպիրին պաշտօնն է... —

Ե. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՆՕԹՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՍՆԵՐԸ

—

Աստուածպաշտութեան կարգը կատարելու համար անհրաժեշտ են սա՛ սրբազան անօթները։

Սկիհ

Բաժակամաճ

Սկիհ. — Արծաթէ կամ ոսկիէ սրբազան բաժակն է Սկիհն ուր կը սրբագործուի Սպասի Գինին ու Հացը պատարագի միջոցաւ ու կը դառնայ Քրիստոսի Ճշմարիտ Մարմին ու Արիւն։

Սկիհը նշանակ է Յիսուսի Զարչարանքի բաժակին ու Խորհրդական ընթրիքի բաժակին։

Մաղզմայ. — Արծաթէ կամ ոսկիէ բոլորակ ափսէ կամ սկիհի ծածկոց է Մաղզմայն որուն վրայ կը դրուի Սպասի Նշխարը։

Սրբատուփ

Մաղզմայ կը նշանակէ Փրկչի Ծննդեան մսուրն ու այն Գերեզմանն որու մէջ թաղուեցաւ անոր Ս. Մարմինը։

Սրբատուփ. — Արծաթէ կամ ոսկիէ փոքրիկ տուփ մըն է որուն մէջ կը պահուի Ս. Խորհուրդի սրբագործուած մասը՝ հիւանդներու ճաշակ տալու համար։

Բաժակաման. — Արծաթէ անօթ մըն է որուն մէջ



Տապանակ Հին ուխտի

կը պատրաստուի Ս. Խորհուրդի գինին։ Բաժակամանի գինին կը բերեն Սկիհի մէջ Ս. Պատարագէն առաջ։

Խնկանոց, Բուրվառ. — Հին ատեն խունկ ծխելու համար կը գործածուէր Խնկանոց որ փոքր կրակարանի ձև ունէր առանց շղթայներու։ Հիմայ կը գործածուի Բուրվառ որուն շղթայներէն կախուած են մանր բոժոժներ։

Բուրվառը Հին ուխտէն առնուած է։

Տապանակ. — Արծաթէ արկղ մըն է Տապանակը, վրան չորս խաչերով ու զարդարուած մոմակալով։ Տապանակը կը գործածուի խունկ և կնդրուկ պահելու համար։ Տապանակն ալ Հին ուխտէն առնուած է։

Խաչվառ. — Զողաբարձ ու խաչագլուխ դրօշակ մըն է Խաչվառն որուն վրայ նկարուած կ'ըլլան Խաչելութեան ու Ս. Աստուածածնի պատկերները։ Խաչվառը կը տանին ե-



Բուրվառ

Խնկանոց

Խնկանոց

կեղեցական մեծ հանդէսներու ատեն, ինչպէս Անդաստանի, Թափօրի և այլն։

Քշոց. — Արծաթէ բոլորչի գործիք մըն է Քշոցը՝ եզերքները բոժոժներով զարդարուած ու երկու երեսներն ալ բարձրաքանդակ վեցթեւեան սերովբէներու պատկերներով։ Քշոցն անցուած է երկայն ձողի վրայ ուրկէ կը բռնէ սարկաւագը և կը շարժէ Ս. Պատարագի ատեն Ս. Խորհրդի վրայ։

Խաչվառ



Քշոց

Քշոցը նշան է հրեշտակներու հովանաւորութեան, սերովբէներու սաւառնելուն և Ս. Հոգւոյն իջնելուն Ս. Պատարագի նուէրներուն վրայ։

ՀԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐ

Ա. Նուագարան ադիբոյ

Բ. Փչելու նուագարաններ





Գ. Զարնուելով՝ ձայն հանող նուագարաններ

1. Քնար։ 2. Տաւիղ։ 3. Տասնաղի։ 9. Եղջիւր։ 11. Շեփոր։ 13. Սրինգ։ 14. Երկփող սրինգ։ 15—16. Հովուական սրինգ։ 17. Դափ, Թմբուկ։ 18. Բոժոժ։ 19. Զեռքի ու մատներու Ծնծղայ եւ Թմբուկ։ 20. Եռանկիւն։ 21. Քշոց (հին)։

Քչոցը կը չարժեն Ս. Պատարագի միջոցին։

«Ս. Աստուած» երգելու ատեն։

Ս. Խորհրդի վերաբերման։

«Սուրբ, Սուրբ»ի ատեն։

«Հոգի Աստուծոյ», «Հայր Մեր» և «Միայն Սուրբ»ի ատեն։ Նաև եկեղեցական ուրիշ հանդէսներու ատեն, ինչպէս Ս. Միւռոն ու Սրբոց մասունքներ վերաբերելու, Թափօրի, Խաչվերացի իրիկունը, «Այսօր դասք»ին, «Փառք ի բարձունս»ի ատեն ևն.։

Խաչ.— Խաչը նիւթական ձևը կամ պատկերն է Խաչափայտին որուն վրայ խաչուեցաւ Քրիստոս։ Հայացի խաչը պարզ քառակուսի ձև ունի՝ յար և նման Յիսուսի Խաչափայտին։

Խաչի կերպեր



Ծնծղայ

1. Խաչին նշանակութիւնը մեծ է Քրիստոնէական եկեղեցւոյ համար. կը գործածուի Աստուածպաշտութեան ատեն։

Իբրև երկրպագելի պատկեր որ կը յիշեցնէ Քրիստոսի փրկագործ տնօրինութիւնը։

2. Խաչով կը տեսանադրեն և կ'օրհնեն Եկեղեցւոյ բոլոր խորհուրդներն ու արարողութիւնները։

3. Վերամբարձ կը տարուի եկեղեցական բոլոր նշանաւոր հանդէսներու և Թափօրի ատեն։

4. Խաչն իբրև պատուական ու գերագոյն նշան հաւատքի, շուքի ու պատուի՝ կը գործածենք եկեղեցւոյ գմբէթներու և Թագերու գլուխը և հաւատացեալները իրենց կուրծքէն կը կախեն իբրև քրիստոնէական զարդ։

Ս. Միւռոնով կ'օրհնուի ու կ'օծուի Խաչն իբրև երկրպագելի նշան։

Աղաւնի. — Արծաթէ կամ ոսկիէ անօթ մըն է

Միւռոնամաղ

Աղաւնի

Աղաւնին = Միւռոնաշիշն որ աղաւնոյ նմանութիւն ունի, և նշան է Ս. Հոգւոյն աղաւնակերպ իջման։ Անոր մէջ կը պահուի Ս. Միւռոնը։

Զանազան սպասներ. — Ժամարար քահանայի՝

ձեռքերը լուալու համար՝ կը գործածեն Փարչ ու Կոնիֆ և ձեռքերը մաքրելու համար Դենջակ՝ որ նշան է մաքրութեան։

Ասոնցմէ զատ Աստուածպաշտութեան ատեն կը գործածուին.

Պատկեր՝ հաւատացեալներու սրտին վրայ տպաւորելու սրբացած անձերու առաքինի գործերը։ Պատկերներու վրայ տէրունական նշան մը կ'ըլլայ զոր կ'օծեն։

Աշտանակ Հին Ուխտի

Պատկերները պէտք է ըլլան Տէրունի, Աստուածամօր, Առաքելական ու Սզգ. արբոց պատկերները։

Պատկերները շատ անդամ կը զարդարենք զանազան զարդերով, անոնց առջև աշտանակով, մոմ ու կանթեղով իւղ կը վառենք ի պատիւ Ս. Երրորդութեան։

Աշտանակ՝ մեծ ու փոքր լուսաւորութեան համար։

Կերոն = Իւղաբերից մոմ՝ աւետարան կարդալու եւ մեծ հանդէսներու ատեն։ Մոմի գործածութիւնը Հին Ուխտի ատենն ալ կար՝ լուսաւորելու, հանդէսի շուք ու պայծառութիւն տալու համար։

Վառած մոմը նշան է Քրիստոսի՝ Աշխարհի լոյս ըլլալուն, Աստուծոյ նկատմամբ մեր վառ ու բորբոքեալ սիրոյն և կ'արտայայտէ մեր հաւատքի լոյսը։

Մոմ վառելը սովորական է ամէն ատեն, բայց մա-

նաւանդ անհրաժեշտ է վառել Ս. Աւետարանը կարդալու և եկեղեցական ամէն հանդէսի ատեն։

Գրական Աւետարանի

Գրականը փայտէ ծալածոյ գործիք մըն է որուն վրայ կը դրուին եկեղեցական գիրքերն Աստուածպաշտութեան ատեն։

Թելադրութիւններ.— Աստուածպաշտութեան կարգը կատարելու համար պէտք սրբազան անօթներն անհրաժեշտն են։ — Ի՞նչ է Սկիհը։ — Ինչի՞ նշանակ է։ — Ինչէ՞ շինուած է Մաղզմայն։ — Վրան ի՞նչ կը դրուի։ — Ինչի՞ նշանակ է։ — Սրբասասո՞ւփը։ — Բաժակամա՞նը։ — Ի՞նչի յատուկ է Բուրվառը։ — Ի՞նչ ձև ունի։ — Տապանակն ինչի՞ յատուկ է։ — Վրան ինչի՞ կան։ — Ուրիշ՞ առնուած է։

— Ի՞նչ է խաչվառը։ — Ե՞րբ կը գործածեն։ — Ինչի՞ յատուկ է։ — Ի՞նչպէս շինուած է Քշոցը։ — Ե՞րբ կը շարժենք։ — Ինչի՞ նշան է։ — Խաչն ինչի՞ նշան է։ — Հայացի խաչն ի՞նչ ձև ունի։ — Ե՞րբ կը գործածուի։ — Ինչո՞վ նուիրական կը դառնայ։ — Որո՞նց պատկերը կան եկեղեցւոյ մէջ։ — Ինչո՞ւ։ — Ինչո՞վ նուիրական կը դառնան։ — Ինչի՞ կը գործածուի Կերոնը։ — Ինչի՞ նշանակ է վառած մոմը։ — Ե՞րբ մոմ կը վառենք։ — Ինչի՞ կը գործածուի Գրոկոլը։ — Ո՞ր անօթներն ու պատներն առնուած են Հին Ուխտէն։ — Ի՞նչ ձևական տարբերութիւն կայ անոնց միջև։ — Ի՞նչ կը նշանակէ Հին Ուխտ, Նոր Ուխտ։

Զ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԶԳԵՍՏՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԴԵՐԸ

Առաքեալներն իրենց քարոզութեան ատեն, երբ եկեղեցւոյ խորհուրդները կը կատարէին, տարբեր զգեստներ կը հագնէին ժողովուրդէն որոշելու համար։ Ուստի սովորութիւն եղաւ որ հոգեւորականներն Աստուածապաշտութեան ատեն գործածեն առանձին զգեստներ։

Հայ եկեղեցին ալ ընդունեց այդ սովորութիւնը, բայց տուաւ անոնց աւելի տուիմային տարազ մը։

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԳԵՍՏՆԵՐ

Սքեմ. — Սարկաւագէն սկսեալ մինչև Կաթողիկոսը սովորական հագուստին է Սքեմ = Վերարկու, որով անոնք կը տարբերին աշխարհականներէ։

Վեղար. — Կուսակրօն հոգեւորականներն ամուսնացած կղերէն կը տարբերին Վեղարով որուն գագաթը սրածայր է Կաթողիկէի նման։

Փիլոն. — Սովորական ժամերգութեան ատեն Կաթողիկոսէն սկսեալ մինչև քահանայն բոլոր հոգեւորա-

կանները կը կրեն Փիլոն որ սովորաբար սեւ է։ Վարդապետին ու եպիսկոպոսին փիլոնը կրնայ ըլլալ մանիշակագոյն։

Վերարկու

Գաւազան. — Կուսակրօն հոգեւորականներու հովուական նշանն է Գաւազանն որ երկու տեսակ կ'ըլլայ։

Ա. Երկգլխեան օձազարդ գաւազանը կը կրեն Կուսակրօն քահանաները — Վարդապետները, Ծ. Վարդապետները։ Օձագլուխ գաւազանը կը յիշեցնէ Մովսէսի գաւազանն և այն ձողն որուն վրայ օձը բարձրացոյց անապատի մէջ Քրիստոսի Խաչին իբրև օրինակ։

Բ. Հովուական գաւազանը կը կոչուի նաև Լուսաւորիչի որ ունի հովուի ցուպի ձև, կոր գլխով. ասիկայ յատուկ է միայն Կաթողիկոսի որ բոլոր ժողովրդին Հովուապետն է, բայց կը կրեն նաև եպիսկոպոսները։

Մատանի. — Հայրապետն իբրև հոգեւոր իշխանութեան նշան՝ մատնեմատը կը դնէ մատանի, իսկ Եպիսկոպոսը՝ ճկոյթ մատը։

Հողաթափ. — Եկեղեցւոյ մէջ բոլոր հոգեւորականները կը հագնին հողաթափ որ նշան է այն պատուէրին

զոր Յիսուս տուաւ առաքեալներուն՝ ոտնակոխել թշնամւոյն բոլոր զօրութիւնը։

Քահանայն հոգեթափը կը հանէ «Մի՛ ոք յերախայից»ի ատեն։



Գաւազան
Վարդապետական

Վեղար

Հողաթափ

2. ՍԱՐԿԱՒԱԳԻ, ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻ, ԴՊԻՐԻ ԶԳԵՍՏՆԵՐ

Դպիրը, Կիսասարկաւագն ու Սարկաւագն եկեղեցւոյ մէջ շապիկ կը հագնին։ Շապիկը նշան է Սրբութեան ու Անարատութեան։

Կիսասարկաւագը նաև ձախ բազուկը կը կրէ Բազկուրար, Սարկաւագն ալ ձախ ուսին՝ Ուրար։

Ուրարը կը նշանակէ հրեշտակներու թեւերը։ Սարկաւագը կը կատարէ հրեշտակի պաշտօն։

3. ՔԱՀԱՆԱՅԻ ԶԳԵՍՏՆԵՐ

Ս. Պատարագի ատեն քահանայն կը գործածէ հետեւեալ զգեստները։



Սաղաւարտ

Ուրար

Սաղաւարտն է Ահարոնեան խոյրն որ գլխակէ կամ կերպասէ ասեղնագործ եւ մարգարտայեռ ու արծաթապատ գլխանոցն է. գագաթը փոքրիկ խաչ մը կայ։ Սաղաւարտին չորս կողմը նկարուած են տէրունական պատկերներ։

Փորուրար ու Գօտի

Հին ուխտի ատեն ալ կը գործածուէր Սաղաւարտն որ Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ կը նշանակէ Փրկչին կրած փուշէ պսակն ու վարշամակը, և կը գործածուի իբրև զրահ թշնամւոյն զօրութեան դէմ պատերազմելու։

Շապիկ. — Ահարոնի պատմուճանին օրինակն է Շապիկը. պիտի ըլլայ սպիտակ՝ նշանակ Յիսուսի գերեզմանին վրայ նստած հրեշտակին սպիտակ հանդերձին և այն հանդերձին՝ որով Հերովդէս ծածկեց Յիսուսը։ Սպիտակութիւնը նշանակ է նաև Փրկչին անախտ Ծընընդեան ու անարատ կեանքին։

Փորարն առջեւէն կը կախուի պարանոցէն վար մինչեւ կուրծքը և կը նշանակէ այն ծանր լուծը զոր քահանայն կ'առնէ իրեն վրայ։ Նշան է խոնարհութեան, հեզութեան, արդարութեան, որով քահանան զարդարելու է իր սիրտը, նաև Յիսուսի հնազանդութեան՝ իր կենսագործ անօրինութիւնները կատարելու համար։

Գօտին լայն ժապաւէն մըն է. առջեւը, մէջտեղն ունի արծաթէ կամ ոսկիէ ակնայեռ ու մարգարտազարդ գլուխ իբրև ճարմանդ։ Հին ուխտի ատեն ալ կար գօտին։ Նշանակ է հոգեւորական քաջութեան ու Յիսուսի ողջախոհութեան։

Ղենջակ. — Քահանայն գօտւոյն հետ կը կրէ նաև Ղենջակ, օրինակ այն ղենջակին՝ որով Յիսուս սրբեց աշակերտներու ոտքերը։ Քահանայն ղենջակով կը սրբէ իր ձեռքերը։

Բազպան

Բազպան. — Քահանային չապիկին թեղանիքը պատած կ'ըլլան թեւնոցներով որոնք Բազպան կը կոչուին։ Բազպանը նշանակ է Յիսուսի ձեռքի կապանքներուն և բազկի զօրութեան՝ թշնամւոյն դէմ պատերազմելու։

Վակաս. — Քահանային ուսանոցն է որ կիսաբոլորակ կը պատէ քահանայի պարանոցը թիկունքի կողմէն։ Սովորաբար ծալածոյ կամ ասեղնագործ կ'ըլլայ ոսկեհուռ անկուածով։ Վրան տասներկու առաքեալներու պատկերներ ու մէջտեղը Յիսուսի պատկերը նկարուած են։

Վակասն Ահարոնի վակասին օրինակն է, և նշան է մոլորեալ ոչխարին զոր Յիսուս ուսին վրայ կրեց։ Նշանակ է նաև արդարութեան և կը յիշեցնէ Քրիստոսի խոստացած քաղցր լուծն ու թեթև բեռը։

Շուրջառ. — Փիլոնաձև, երկայն, անթև է Շուրջառն որ Նափորs ալ կը կոչուի։ Կը գործածուի Ս. Պատարագի, Սրբազան խորհուրդներու, Նախատօնակի, Թաղման ու Ս. Աւետարան կարդալու առեն։

Շուրջառ = Նափորs

Շուրջառն իբրև հոգևոր զրահ կը նշանակէ Յիսուսի անկար քղամիան ու այն ծիրանին զոր Զարչարան-

քի օրը ձգեցին անոր վրայ։ Նշանակ է նաև չնորհաւիրութեանն ու լրումն ամեն առաքինութեանց որով զարդարուած էր Յիսուսի մարդկութիւնը։

4. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

Եպիսկոպոսը քահանայի զգեստներէն զատ կը կրէ նաև Սաղաւարտի տեղ Խոյր = Թագ, Արտախուրակներ, Եմիփորոն ու Գաւազան։



Վակաս ու Արտախուրակներ

Խոյրն երկփեղկեան գլխարկ է ակնակուռ ու գոհարազարդ։ Հին ուխտի ատեն ալ կար, որ նշանակ է Հին ու Նոր Կտակարանի գիտութեան և այն իմաստութեան

Հովուական Գաւազան

Խոյր

զոր եպիսկոպոսը պէտք է ունենայ։

Արտախուրակներ Խոյրի եռեւէն կախուած կէս կանգուն երկայնութեամբ զարդարուն կապերն են։ Հին ուխտի ատեն կար զոր Հրէից քահանայապետը կը կրէր ապարօշի ձեւով (Տե՛ս էջ 25, Հին Ուխտի քահանայն)։

Եմիփորոնը լայն ու հինգ խաչով զարդարուած ուրարն է զոր Եպիսկոպոսը կը կրէ Շուրջառին վրայ. ասիկա ուսերու վրայէն կը տարածուի կուրծքին ու մէջքին վրայ մինչև ոտքերը։

5. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

Կաթողիկոսը բաց ի եպիսկոպոսական զգեստներէ կը գործածէ նաև Կոնքեռ որ խաչաձեւ ու եռանկիւն զարդ է՝ մէկ ծայրէն գօտիէն կախուած իբրև հովուական մախաղ և նշանակ է Յիսուսի Ղենջակին ու բոցեղէն սրոյ։

Կոնքեռն իբրև նշան գերագոյն յարգանքի կը տրուի նաև պատրիարքներու և արքեպիսկոպոսներու որոնց Ս. Հայրապետը կ'արտօնէ կրել։

Արծուեգորգ. — Արծիւն իբրև բարձրաթռիչ



Հրէական Լանջապանակ

Եմիփորոն

ու սրատես՝ եկեղեցական տեսութեամբ մաքուր և ուղիղ վարդապետութեան նշան կը համարուի։ Հայրապետը

արծուի պէտք է նմանի իր կոչման ու հոգեւոր կեանքին մէջ։ Արծուեղորդը կը ձգուի Հայրապետին ոտքերուն առջեւ։

Ասա. — Կաթողիկոսը Հայրապետարանէն դուրս կելլելու ատեն ձեռքը կը կրէ Հայրապետական Ասա=Ցուպ, անոր առջեւէն ալ կը տանին խաչ ու գաւազան։ Պատրիարքներն ու առաջնորդներն ալ փոխանորդաբար կը կրեն Ասա։

Ասա

Թելադրութիւններ. — Առաքեալներն ե՞րբ տարբեր զգեստներ կը հագնէին. — Հայ եկեղեցին ընդունած է՞ այդ սովորութիւնը. — Որո՞նք են ընդհանուր զգեստները. — Որո՞նք կը կրեն Աբեմ. — Վեղարը՞. — Փիլոնը՞. — Քանի՞ տեսակ Գաւազան կայ. — Ո՞վ կը կրէ Օձագլուխը, Հովուականը. — Որո՞նք կը կրեն Մատանի. — Հայրապետն ո՞ր մասը կը կրէ. — Եպիսկոպո՞սը. — Որո՞նք կը հագնին շապիկ. — Բազկուրա՞ը. — Ուրարն ինչի՞ նշան է. — Որո՞նք են քահանային զգեստները. — Ինչէ՞ շինուած է Սաղաւարտը. — Ինչի՞ նշան է. — Ինչի՞ օրինակ է. — Շապիկն ինչի՞ օրինակ է. — Ինչո՞ւ սպիտակ պիտի ըլլայ.— Ո՞ւրկէ կը կախուի Փորուրաը. — Ինչի նշանակ է. — Գօտին ո՞ւրկէ կը կախեն և ինչի նշանակ է. — Վենջա՞կը. — Բազպա՞նը. — Վանան ինչէ շինուած է. — Ո՞ւրկէ կ'անցնեն. — Ինչի օրինակ է. — Ինչ նշան է. — Ինչ ձեւ ունի Շուրջառը. — Ե՞րբ կը գործածուի. — Ինչի նշանակ է. — Որո՞նք են եպիսկոպոսական զգեստները. — Ինչի նշանակ է Խոյրը. — Արտախուրակնե՞ը. — Եմիսորան ո՞ւր կը կրէ. — Որո՞նք են Հայրապետական զգեստները.— Ինչի նշանակ է Կանքեռը. Արծուեղո՞ւրդը. — Ասա՞ն. — Որո՞նք առնուած են Հին Ուխտէն. — Որո՞նք Քրիստոնէութեան յատուկ են։

Է. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ Ս. ԳԻՐՔԵՐԸ

—

Աստուածպաշտութիւնն ու Եկեղեցական Սրբազան խորհուրդները կատարելու համար՝ կը գործածուին հետեւեալ գիրքերը.

1. Աւետարան, Գործք Առաքելոց և Թուղթք
2. Ժամագիրք
3. Շարական
4. Ճաշոց
5. Խորհրդատետր
6. Տաղարան
7. Տօնացոյց
8. Մաշտոց
9. Կանոնագիրք
10. Յայտմաւուրք
11. Նարեկ

Ս. Աւետարան. — Համօրէն քրիստոնեայ ժողովուրդներու ամէնէն սիրելի գիրքն է Աւետարանն որ կը պատմէ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները—Ծնունդը, Մկրտութիւնը, Քարոզութիւնը, Խաչելութիւնը, Մահը, Թաղումը, Յարութիւնն ու Համբարձումը, և կը սորվեցնէ այն ուղիղ բարոյականն որուն հիմն է Աստուծոյ ու ընկերոջ նկատմամբ Սէր։

Մատթէոս, Մարկոս, Ղուկաս ու Յովհաննէս աւետարանիչները խմբագրեցին Ս. Աւետարանը։

Գործք Առաքելոց ու Առաքելական թուղթք կը պատմեն թէ ինչպէս հիմնուեցաւ Քրիստոնէական եկեղեցին և թէ ինչպէս Հոգին Սուրբ առաջնորդեց և օրհնեց Քրիստոսի առաջին հետեւողները։

Գործք Առաքելոց գիրքը կը պատմէ Քրիստոսի երկինք համբառնալէն մինչև Սուրբ Հոգւոյն գալուստը, նաև Պօղոսի դարձն ու կոչումն եւ անոր առաքելական եռանդը։

Առաքելական Թուղթ նամակի ձեւով գրուածքներ են զորոնք առաքեալները գրած են նախնի հաւատացեալներուն՝ զանոնք յորդորելու, խրատելու ևն. և Ս. Աւետարանի յայտնած փրկութեան ճամբայն ցուցնելու։

Աւետարանի, Գործք Առաքելոցի, Առաքելական Թուղթերու և ամբողջ Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնը կատարուեցաւ Ե. դարուն երանաշնորհ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ թարգմանիչներու և իրենց աշակերտներու ձեռքով։

Ժամագիրք. — Օրուան ժամերուն վրայ Եկեղեցւոյ մէջ կատարուելի Հասարակաց Աստուածպաշտութեան վերաբերեալ աղօթքները, մաղթանքները, քարոզներն ու երգերը կը գտնուին Ժամագրքին մէջ։

Երանաշնորհ Թարգմանիչները գրած ու թարգմանած են զանոնք և Դիւս, Յովհան Մանդակունի ու Ներսէս Շնորհալի հայրապետները կարգաւորած ու գրած են միւս մասերը։

Շարականը կը բովանդակէ Հայ Եկեղեցւոյ հոգեւոր երգերն որոնք կ'երգուին Հասարակաց Աստուածապաշտութեան ատեն։

Երբ դեռ Հայերէն գիր չէր գտնուած, հոգեւոր երգերը յոյն և ասորի լեզուներով էին, ինչպէս նաև ծէսերն ու արարողութիւնները։ Իսկ Ե. դարուն, գիրը գտնուելէն ետք, թարգմանիչները, յետագայ հոգեսէր ու հոգենուագ վարդապետները յօրինեցին շարականները։

Շարականները չորս կարգի բաժնուած են. Տէրունական, Սրբոց, Ապաշխարութեան = Պահոց ու Հանգստեան։

Այս չորս կարգ շարականները կ'երգուին սա ութ ձայն եղանակներով.

Առաջին ձայն = ա՛ն.	Երկրորդ ձայն = գ՛ն.
Առաջին կողմ = ակ.	Վառ ձայն = գկ.
Երկրորդ ձայն = բ՛ն.	Չորրորդ ձայն = դ՛ն.
Աւագ կողմ = բկ.	Վերջ ձայն = դկ.

Ասոնցմէ զատ երկու ձայն ծանր եղանակներ կան, 1. Ստեղի, 2. քանի մը Զարտուղի = դարձուած ձայնով շարականներ։

Շարականներն ունին սա տեսակները.

Օրհնութիւն = Ս.	Մանկունք = Մկ.
Հարց = Հ.	Ճաչու = Ճչ.
Մեծացուսցէ = Մ.	Համբարձի = Հմ.
Ողորմեա = Ո.	Ստեղի = Ստ.
Տէր յերկնից = Տ.	

Ճաչոց. — Հին ու Նոր կտակարաններու քաղուածոյ գիրքն է Ճաչոցը — իւրաքանչիւր օրուան համար ըստ պաշտաման դասաւորուած — Հասարակաց Աստուածպաշտութեան ատեն կարդացուելու նպատակաւ։

Ճաչոցի մէջ առնուած են նաև մեր նշանաւոր հայրերու և վարդապետներու հոգեւորալիս աղօթքներն որոնք կը կարդացուին նշանաւոր ծէսերուն։

Խորհրդատետր. — Պատարագամատոյց ալ կը կոչուի Խորհրդատետրը։ Ժամարարն այդ գիրքէն կը կարդայ ծածուկ ու ձայնով՝ նշանակուած յատուկ աղօթքները Ս. Պատարագի արարողութեան ատեն։

Խորհրդատետրը ժամարարին աջ կողմը կը դրուի Սեղանին վրայ Ս. Պատարագի ժամուն։

Ս. Յակոբոս Տեառնեղբայրը գրած է մեր Խորհրդատետրը, յետոյ լրացուցին ու ճոխացուցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Յովհան Ոսկեբերան, Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ս. Յովհան Մանդակունի ու Ս. Գրիգոր Նարեկացի։

Տաղարան.—Գիրք մընէ Տաղարանն որ կը պարունակէ Ս. Պատարագի մեղեդիները, երգերը, քարոզները զորս կ'երգեն սարկաւարգներն ու դպիրները։

Զանազան վարդապետներ գրած են Տաղարանին մասերը։

Տօնացոյց.— Հրահանգի գիրք մընէ Տօնացոյցն որ ցոյց կուտայ Հայ եկեղեցւոյ տօնները, այդ տօներուն երգուելու չարականները, երգերը, սաղմոսները, ընթերցուածներն և առհասարակ ամէն տեսակ հանդիսակատարութիւնները։

Տօնացոյցին հետևողութեամբ կը պատրաստուի բուն Օրացոյցը։ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ յօրինեցին Տօնացոյցը, յետոյ կարգի դրին մեր նախնի հայրապետները։ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի վերջնականապէս կարգաւորեց Տօնացոյցը։

Մաշտոց.— Ծիսարան ալ կը կոչուի Մաշտոցն որուն մէջ դրուած են Հայ եկեղեցւոյ Աստուածապաշտութեան Ս. Խորհուրդներն ու հոգևոր ծէսեր կատարելու բոլոր պաշտամունքը, կարգերն ու կանոնները։

Ս. Մեսրոպ Ե. դարուն Ծիսարանը Հայերէնի թարգմանեց ու կարգաւորեց որ իր անունով կոչուեցաւ Մաշտոց։ Յետոյ մեր նախնի Ս. Հարք ճոխացուցին Ծիսարանը՝ զանազան աղօթքներ յօրինելով։

Երեք Մաշտոց կայ. Ձեռաց Մաշտոց, Մայր Մաշտոց ու Հայր Մաշտոց։ Ձեռաց Մաշտոցը Մայր Մաշտոցի քաղուածքն է։ Իսկ Հայր Մաշտոցը կը պարունակէ թագաւոր ու հայրապետ օծելու ծէսերն ու աղօթքները։

Կանոնագիրքի մէջ հաւաքուած են Առաքելական ու երեք Ժողովներու՝ Նիկիոյ, Եփեսոսի ու Կ. Պոլսոյ կանոնները, ինչպէս նաև Հայ. եկեղեցւոյ եկեղեցական Ժողովներու կանոնները՝ որոնք սահմանուած են եկեղեցւոյ կառավարութեան ու բարեկարգութեան համար։

Ցայսմաւուրքը կը պատմէ Փրկչին փրկագործ տնօրինութիւնները, Աստուածահաճոյ սուրբերու նախանձելի ու օրինակելի վարքն ու բարքը, եւ սուրբ վկայներու նկարագիրը։

Ցայսմաւուրք կը նշանակէ «Այս օրուան տօն կամ ընթերցում»։

Ցայսմաւուրք կը կարդան ամէն երեկոյ Հասարակաց աղօթքը սկսելէն առաջ։ Այդ սովորութիւնը չատ հին է. Առաքելական դարերուն հաւատացեալները կը պատմէին սրբոց գործերն որ լսողները հետևին անոնց արիական գործերուն ու առաքինի կեանքին։

Գրիգոր Վկայասէր թարգմանած է մեր Ցայսմաւուրքը յոյն ու ասորի լեզուներէ. այնուհետև մեր եկեղեցական հայրերը լրացուցին ու զտեցին։

Նարեկ.— Ս. Գրիգոր Նարեկացւոյն հոգեբուխ աղօթագիրքն է Նարեկն որ կը պարունակէ Փառատրական ու Գոհաբանական աղօթքներ, Զղջման, Խոստովանութեան, Ապաշխարութեան, Բժշկութեան, ու այլ և այլ բարի խնդրուածքներու կատարման վերաբերեալ պաղատանքներ որոնք կը կարդացուին Ս. եկեղեցւոյ մէջ։

Թելադրութիւններ.— Որո՞նք են Աստուածպաշտութեան Ս. Գիրքերը։ — Աւետարանն ի՞նչ կը պատմէ, ի՞նչ կը սովրեցնէ։— Որո՞նք գրեցին Աւետարանը։— Գործք առաքելո՞ց։— Որո՞նք թարգմանեցին Ս. Գիրքը։ — Ժամագիրքն ինչե՞ր կը պարունակէ։ — Որո՞նք գրեցին։ — Քանի՞ կարգի կը բաժնուին։ — Շարակա՞նը։ — Ճաշոցն ինչե՞ր կը պարունակէ։ — Խորհրդատե՞ասը։ — Որո՞նք գրեցին։ — Քահանայի ե՞ռը կը կարդայ։ — Տաղարանն ինչե՞ր կը պարունակէ։ — Տօնացոյցն ինչե՞ր կը պարունակէ։ — Որո՞նք կարգաւորեցին։ — Մաշտոցն ինչե՞ր կը պարունակէ։ Քանի՞ տեսակ Մաշտոց կայ։— Որո՞նք գրեցին ու ճոխացուցին։— Ինչո՞ւ կը կոչուի Մաշտոց։ Ի՞նչ կը պարունակէ Կանոնագիրքը։ — Որո՞նք գրեցին։ — Ցայսմաւո՞ւրքը։ — Ի՞նչ կը նշանակէ։ Ո՞վ թարգմանեց։— Նարեկն ինչե՞ր կը պարունակէ։— Ո՞վ գրած է։

Ը. ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՐԳ ԱՂՕԹԻՑ

—

Շաբթուան իւրաքանչիւր օրը կը կարդացուի Հասարակաց կարգ աղօթիցը= Կանոնական ժամերգութիւնը։

Կանոնական ժամերգութիւնը գրուած է ժամագիրքին մէջ։

ԻՆՆ ԺԱՄ. — Հայ եկեղեցին սահմանած է օրական ինն անգամ Հասարակաց աղօթք՝ օրինակ ինն դաս հրեշտակներու որոնք անդադար Աստուած կը փառաբանեն։ Ուստի ժամերգութիւնը բաժնուած է ինն մասի։

Ա. Գիշերային ժամ
Բ. Առաւօտեան ժամ
Գ. Արեւագալի ժամ
Դ. Երրորդ ժամ
Ե. Վեցերորդ ժամ
Զ. Իններորդ ժամ
Է. Երեկոյեան ժամ
Ը. Խաղաղական ժամ
Թ. Հանգստեան ժամ

Հին ատեն Աստուածպաշտութեան ինն կարգը կը կատարուէր առանձին առանձին որոշուած ժամերուն, իսկ վերջին դարերուն միմիայն օրն երկու անգամ, առաջին վեցը՝ Ա.—Զ. ժամերը առաւօտեան, իսկ վերջին երեքը՝ Է.—Թ ժամերն իրիկունը։ Կան վանքեր որ հնաւանդ ձեւը պահած են։

Քառասնորդական պահոց լուր օրերը միայն կը կատարուին Արեւագալի և Ճաշու ժամերգութիւնները։

Իւրաքանչիւր ժամու՝ սկզբնաւորութիւնը կ'ըլլայ Տէր-ունական աղօթքով ու սաղմոսով։

Ա. ԳԻՇԵՐԱՊԱՇՏՕՆ

Գիշերային ժամը Գիշերապաշտօն ալ կը կոչուի։ Գիշերային ժամու աղօթքը կ'ուղղենք Հօր Աստուծոյ և

նախամարդուն պատուիրազանցութեան խորհուրդն ունի։ Ուստի մենք գիշերանց արթննալով՝ կը խոստովանինք մեր մեղքերը, համարձակութիւն կը խնդրենք Հօր Աստուծոյ առջև մեր բերանը բանալու և աղօթելու սապէս. «Տէր, եթէ զչարթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։»

Այդ ժամերգութիւնը գիշերը կը կատարենք նաեւ այն պատճառաւ որ Քրիստոս գիշերը յարութիւն առաւ։

Բ. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄ

Կը մատուցուի Որդւոյն Աստուծոյ, և Յիսուսի Յարութեան խորհուրդն ունի, որովհետև այդ ժամուն յարութիւն առաւ և երեւցաւ նախ իւղաբեր կիներուն, յետոյ աշակերտներուն և հետզհետէ ուրիշ շատերու, և զանոնք լցուց խնդութեամբ։ Ուստի Առաւօտեան աղօթքի սկիզբն իբրև նշան ուրախութեան կ'ըսենք սա սաղմոսը, «Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։» և կը վերջանայ «Սրարչութեան» երգով։

Գ. ԱՐԵՒԱԳԱԼ

Արեւագալի աղօթքը կ'ուղղենք Ս. Հոգւոյն։ Արեւագալ կը կոչուի Աստուածպաշտութեան այդ կարգը, որովհետև ժամերգութեան բոլոր երգերով, քարոզներով Ս. Հոգիէն կը խնդրենք ծագել Արդարութեան իմանալի Արեգակն որ է Յիսուս և լուսաւորել մեր հոգին իմանալի Արեգակով։ Արեգակը մեր Փրկչին նմանութիւնն ունի որ Արեւելքէն ծագելով՝ կը լուսաւորէ մարդկութիւնը։

Արեւագալ կը կարդացուի Քառասնորդական պահքին, բացի շաբաթ օրէն։ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետը գրած է Արեւագալի հոգեշունչ երգերը։

Դ. ԵՐՐՈՐԴ ԺԱՄ

Երրորդ ժամը կը կոչուի նաև Ճաշու. այս ժամուն աղօթքը կ'ուղղենք Ս. Հոգւոյն որ երբ Պենտեկոստէի օրերը լրացան, ինք Ս. Հոգին Գ. ժամուն իջաւ Վերնատունն առաքեալներու վրայ։

Ասկէ զատ այս ժամուն Ադամ ստեղծուեցաւ, Եւան խաբուեցաւ, ասոնք Ս. Հոգւոյն շնորհքներէն զրկուեցան, և այս ժամուն Տէրը Խաչին բեւեռուեցաւ ու աւազակը դրախտ տարաւ։

Ճաշու ժամը կ'սկսի «Օրհնեա՛լ հոգիդ սուրբ՝ Աստուած» (երեք անգամ) փառաբանութեամբ և «Ողորմեա՛ ինձ Աստուած» Սաղմոսէն ետք կ'երգուին Ս. Ներսէս Շնորհալւոյն երգերը յաջորդաբար։

Մեծ պահքի օրերուն կ'աւելնան Մեծ քառոգներն ու աղօթքները զոր գրած է Ս. Յովհան Մանդակունի, և «Ցիլեա՛, Տէր, զպաշտօնեայս» քարոզը զոր գրած է Յովհաննէս սարկաւագ վարդապետը։

Երրորդը ժամուն կ'ըսենք «Ս. ողորմեա»ն.

Ե. ՎԵՑԵՐՐՈՐԴ ԺԱՄ

Զ. ժամու աղօթքը կ'ուղղենք Հօր Աստուծոյ՝ խնդրելով օգնականութիւն մեր տակաւ բնութեան։ Նաև կը մատուցուի Աստուածորդւոյն որ այս ժամուն ճաշակեց Խաչին վրայ քացախով խառնուած լեղին։

Զ. ժամուն կ'ըսենք «Ռ. ողորմեա»ն։

Զ. ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄ

Իններորդ ժամուն կ'աղօթենք Աստուածորդւոյն, որովհետև ինք այս ժամուն Խաչին վրայ Իր հոգին աւանդեց Հօր Աստուծոյ ու Մեղքի մեռելութենէ կենդանացուց մեզ։

Իններորդ ժամուն կ'ըսենք «վերջին Գ. ողորմեա»ն։ Մեծ պահքին իններորդ ժամուն կը յաջորդէ Երեկոյեան ժամը։

Է. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄ

Երեկոյեան ժամուն կ'աղօթենք Աստուածորդւոյն և ա՛ս անոր Թաղման խորհուրդն ունի։ Այդ ժամուն թաղուեցաւ Յիսուս։

Յայսմաւուրքէն ետք կ'սկսի երեկոյեան ժամերգութիւնը «Ես առ Աստուած կարդացի» Սաղմոսով։

Ը. ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄ

Խաղաղական ժամը Քրիստոսի՝ դժոխք իջնելու խորհուրդն ունի։ Այս ժամուն Յիսուս դժոխքի մէջ իրեն սպասողները աղատեց։

Այս ժամուն աղօթքը կը մատուցուի Որդւոյն Աստուծոյ։

Այս ժամուն երգերն են «Շնորհեա՛ մեզ, Տէր» որ առաջին անգամ երգուեցաւ Սեւանայ վանքին մէջ, և «Նայեա՛ց սիրով» ու «Ի քէն հայցեմք» զոր երգեց Ս. Շնորհալի։

Այս ժամուն քարոզով ու աղօթքով կը խնդրենք որ Աստուած մեզ պահպանէ դիւերը։

Թ. ՇԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄ

Հանգստեան ժամու Հասարակաց աղօթքը կը մատուցուի Հօր Աստուծոյ որ Իր Միածնի աջով մեզ պահպանէ դիւերն ու ամէն ատեն։

Այս ժամերգութիւնը դիւերը քնանալէ առաջ կատարելուն՝ կը կոչուի Հանգստեան. կը կոչուի նաև Եկեսցե, որովհետև կ'սկսի «Եկեսցէ» սաղմոսով։

Շատ տեղ երեկոյեան ճաշէն ետք տան մէջ կը

մատուցանեն այս ժամերգութիւնն ու յետոյ կը հնչեն։
Օրինակելի բարեպաշտական սովորութիւն մը։

Թելադրութիւններ. — Կանոնական ժամերգութիւնը=Հասարակաց կարգ աղօթից ո՞ւր գրուած է։ — Հայ. Եկեղեցին Աղօթքի քանի՞ ժամ ունի։ — Որո՞նք են։ — Հին ատեն ի՞նչպէս կը կատարուէր։ — Հիմա ի՞նչպէս։ — Իւրաքանչիւր ժամ ինչո՞վ կ'սկսի։

Գիշերապաշտօնն որո՞ւն նուիրուած է։ — Ի՞նչեր կ'աղօթենք։ — Ինչո՞ւ գիշերը կը կատարուի։ — Առաւօտեան ժամն որո՞ւն կը մատուցուի։ — Ինչո՞ւ։ — Աղօթքին սկիզբն ինչ կ'ըսենք։ — Ո՞վ գրած է Արարչականը։ — Որո՞ւն կ'ուղղենք Արեւագայլ։ — Ի՞նչ կը խնդրենք։ — Ե՞րբ կ'երգենք Արեւագայի երգը։ — Ինչո՞ւ։ — Երբորդ ժամն ի՞նչ կը կոչուի։ — Ի՞նչ կը խնդրենք։ — Ինչի նշանակ է։ — Ի՞նչով կ'սկսի։—Ե՞րբ կը կարդացուին մեծ քարոզները։ — Աղօթքները։ — Ո՞վ գրած է։ — Զ. ժամու աղօթքն որո՞ւն կ'ուղղենք։ — Ի՞նչ կը խնդրենք։ — Ինն երորդ ժամուն որո՞ւն կ'աղօթենք։ — Ի՞նչով կ'սկսի։ — Հին ատեն ե՞րբ Մեսիդի կ'ըսէին։— Խաղաղական ժամն ինչի՞ խորհուրդն ունի։ — Որո՞ւն կ'աղօթենք։ — «Շնորհեա մեզ, Տէր» Ա. անգամ ո՞ւր երգուեցաւ։ — Հանգստեան ժամն որո՞ւն կ'աղօթենք։— Ի՞նչ կը կոչուի։ — «Եկեսցէ՛ն նաև ո՞ւր կրնաք կատարել։ — Ո՞ր ժամերուն Հօր Աստուծոյ կ'աղօթենք։ — Որդւոյն Աստո՞ւծոյ։ — Ս. Հոգւո՞յն։ —

Բ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցիչ հեռեւեալներ.

Աստուածպաշտութեան սրբազան անօթներն են...։ — Աբեմն է...։ — Նշանակ է...։ — Սրբատուփը...։ — Բաժակամանը...։ — Խնկանոցն Բուրվառն կը տարբերի...։ — Տապանակը...։ — Խաչվառը...։ — Քշոցը...։ — Նշան է...։ — Քշոցը կը շարժեն...։ — Հին տաճարաշինութեան ազիրով նուագարաններն են...։ — Փչելու նուագարաններն են...։ — Զարնուելով ձայն տուող նուագներն են...։ — Հին քշոցը կը տարբերի նորէն...։ — Խաչը նիւթական ձեւն է...։ — Խաչով կը տեսնուի...։ — Երկրպագելի նշան կը դառնայ...։ — Աղաւնին...։ — Պատկեր կը գործածենք...։ — Մոմ...։ — Մոմը նշան է...։ — Գրակալը...։ — Աբեմ կը հագնին...։ — Վեղար կը դնեն...։

— Կղերականները Փիլոն կը գործածեն...։ — Սև է...։ — Մանիշակագոյն է...։ — Երկղլխեան օձազարդ գաւազան կը կրեն...։ — Հովուական գաւազան...։ — Հոզաթափ կը հագնին...։ — Մատնի կը դնեն...։ — Կը կրէ բազկաւոր...։ — Կը կրէ ուրար...։ — Բահանային զգեստներն են...։ — Սաղաւարտն է...։ — Շապիկն է...։ — Փորուրարը նշանակ է...։ — Գոտին է...։ — Նշանակ է...։ — Բազպանն է...։ — Նշանակ է...։ — Վակասն է...։ — Նշանակ է...։ — Շուրջառն...։ — Կը գործածուի...։ — Նշանակ է...։ — Եպիսկոպոսական զգեստներն են...։ — Խոյրն է...։ — Նշանակ է...։ — Արտախուրակներն են...։ — Եմիփորոնն է...։ — Ասա կը կրեն...։ — Կոնքեռը կը կրէ...։ — Նշանակ է...։ — Աւետարանը կը պատմէ...։ Խմբագրեցին...։ — Գործք առաքելոցը կը պատմէ...։ — Առաքելական թուղթերն են...։ — Հին ու Նոր կտակարանը Հայերէնի թարգմանեցին...։ — Ժամագիրքը կը պարունակէ...։ — Գրած ու թարգմանած են...։— Շարականը կը բովանդակէ...։ — Երբ դեռ Հայերէն գիր չէր գտնուած...։ — Շարականները...։ — ...։ Կարգ են — Կ'երգուին...։ — ...եղանակներով։ — Շարականի տեսակներն են...։ — Ճաշոցը...։ — Կը բովանդակէ նաև...։ — Խորհրդատեսարն է...։ — Գրած են...։ — Տաղարանը...։ — Տոնացոյցն է...։ — Ասոր հետեւողութեամբ...։ — Մաշտոցը...։ — Կանոնագիրքը կը պարունակէ...։— Ցպամաւուրքը կը պատմէ...։ — ...Թարգմանած է։ — Նարեկն է...։ — Հայ. եկեղեցւոյ ինն ժամերն են...։ — Գիշերապաշտօնը կը մատուցանենք...։ — Առաւօտեան ժամը...։ — Արեւագայը...։ — Գ. ժամը...։ — Ե. ժամուն կ'աղօթենք...։ — Թ. ժամուն...։ — Երեկոյեան ժամուն...։ — Խաղաղական ժամն է...։ — Հանգստեան ժամուն կ'աղօթենք...։

Թ. Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Պատարագ. — Քրիստոսի Մարդեղութեան Խորհուրդն է Ս. Պատարագը, զոր Ինք Քրիստոս սահմանեց Մատնութեան իրիկունը Վերնատան մէջ հաց առնելով՝ օրհնեց ու ըսաւ իր աշակերտներուն։

«Առէք, կերէ՛ք, այս է մարմին իմ.

Եւ առնելով բաժակը՝ նոյնպէս օրհնեց ու ըսաւ։

«Արբէ՛ք ի սմանէ, ամենեքեան, այս է արիւն իմ Նորոյ ուխտի։» Եւ աշակերտները մասնակից ընելով՝ պատուիրեց. «Զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի։»

Եւ այդ իսկական պատարագն է Իր անձը զոր յաջորդ օրն Ինք Խաչին վրայ մատոյց Հօր Աստուծոյ՝ մարդոց փրկութեան համար։ Այնուհետև Քրիստոնեայ եկեղեցին սրբութեամբ կը կատարէ այդ փրկչական աւանդը՝ այսինքն Պատարագի Ս. Խորհուրդը կենդանիներու և ննջեցեալներու համար։

Պատարագի նիւթը.— Պատարագի համար մեր եկեղեցին ունի բաղարջ անխմոր հաց՝ Նշխար ու Սնապակ անջուր գինի։ Կատարողներն են քահանայն, վարդապետը, Եպիսկոպոսը, պատրիարքը, կաթողիկոսն որոնք միայն իշխանութիւն ունին պատարագել։ Ասոնք պատարագ մատուցած օրը կը կոչուին ժամարար։

Ժամարարը Պատարագէն առաջ հսկումով ու աղօթքով կը մաքրուի մարմնով ու հոգւով, կը խոստովանի։ Նոյնն ընելու են ամէն անոնք որ Ս. Հաղորդ կ'առնեն, այսինքն կը մասնին Ս. Խորհուրդին։

Տեղը.— Պատարագ կը մատուցուի եկեղեցին ու մատուռն ուր օծուած վէմ-քար կայ Սեղանի վրայ։

Պատարագի օրերը.— Ս. Պատարագ կը մատուցուի Տերունի օրերը, կիրակիները, արքոց տօներուն, և շուր օրերուն իսկ, եթէ հաւատացեալ ժողովուրդը փափաքի։

Մեծ պահքին լուր օրերը, բացի շաբաթ ու կիրակի օրերէն ու Առաջաւորաց պահքի հինգ օրերէն, պատարագ չի մատուցուիր։

Ս. Ծննդեան ճրագալոյցին ու Ս. Զատկի ճրագալոյցին կը մատուցուի Ս. Պատարագ ի պատիւ այդ երկու մեծանանդէս տօներուն։

Զգեստաւորութիւն.— Ժամարարը կ'զգեստաւորուի

Աւանդատունը՝ Խորհրդատեղին մէջ նշանակուած սաղմոսն ու աղօթքը կարդալով։

Ս. Պատարագի զգեստներուն ձեւն առնուած է Ահարոնեան քահանայական զգեստէն։

Երբ ժամարարը կ'զգեստաւորուի, դպիրները կ'երգեն «Խորհուրդ խորին» շարականը զոր գրած է ութը տունով Խաչատուր Վարդապետ Տարօնեցի ԺԲ. դարուն։ Է.—Ը. տուներուն մէջ բացատրած է քահանայական զգեստներուն նշանակութիւնը, իսկ Թ. վերջին տունը «Թագաւոր երկնաւոր»ն առնուած է Ծաղկազարդի շարականէն։

Զեռք լուալ.— Ժամարարը Բեմին առջեւ գալու ատեն, Ս. Սեղանին մերձենալէն առաջ, «Լուացից սրբութեամբ զձեռս իմ» սաղմոսն ըսելով կը լուայ իր ձեռքերն՝ ի նշան ներքին մաքրութեան։

Խոստովանութիւն.— Այնուհետեւ ժամարարը ժողովուրդին դառնալով՝ հրապարակաւ կը խնդրէ որ Աստուած իր մեղքերուն թողութիւն տայ։ Ներկայ եկեղեցականներէն մէկն Աստուծոյ ողորմութիւնը կը խնդրէ՝ թողութիւն չնորհելու անոր մեղքերուն։ Ժողովրդին կողմէ դպիր մը կը խնդրէ ժամարարէն որ յիշէ զիրենք Ս. Պատարագի ատեն։ Ասկէ ետք կը բարձրանայ Բեմ «Մտից առաջի» սաղմոսով, և «Ի յարկիս Սրբութեան» աղօթքի ատեն կը քաշուի վարագոյրը։

Սպաս դնել.— Դպիրները մեղեդի կ'երգեն, երբ քահանայն կ'ըսէ Գրիգոր Նարեկացւոյ աղօթքն և Ընծայարանին առջեւ երթալով՝ նչխարը կը դնէ Մաղզմային վրայ և գինին խաչաձև կը լեցնէ Սկիհի մէջ։ Յետոյ Սկիհն ու Մաղզման քօղով ծածկելով՝ կը խաչակնքէ։

Երբ ժամարարն եպիսկոպոս է, վարագոյրը չքաշուած, Մեղեդիէն առաջ կ'երգեն «Ընտրեալդ» երգը։

Խնկարկել.— Վարագոյրը բացուելով՝ քահանայն կը խնկարկէ Ս. Սեղանին ու Ս. Սպասին, կ'ելնէ Բեմէն,

կը խնկարկէ ժողովրդին, յետոյ նորէն Բեմ կ'ելլէ։ Այս արարողութիւնը նշանակ է Քրիստոսի աշխարհ գալով՝ Աւետարանական անուշահոտութիւնը մեր մէջ տարածելուն։

Երեքարբեան երգ. — Փառաբանութեան ատեն որ կ'սկսի Ողորմեա՛ = «Ողորմիր ինձ՛ Աստուա՛ծ» ով սարկաւագն Աւետարանը կը բարձրացնէ ու կը շրջաբերէ ի տես ժողովրդին։

Ընթերցուած. — Մարգարէական ու Առաքելական գիրքեր կարդալ կը նշանակէ թէ մարգարէները գուշակելով ու առաքեալները քարոզելով՝ ծանուցին Քրիստոսի տնօրինութիւնները։

Ասկէ ետք կ'սկսի Քարոզը։

Աւետարան. — Առնցմէ ետք սարկաւագը կ'սկսի կարդալ Աւետարանն որ Քրիստոսի տնօրինութեան գիրքն է իրրև լրումն օրէնքներու և մարգարէներու։

Դաւանութիւն. — Աւետարանէն ետք «Փառք քեզ, Տէր Աստուած»ին կը յաջորդէ Հաւատամքն որով մեր Քրիստոնէական հաւատքի ուղղափառ դաւանութիւնը կը յայտնենք։

Վերաբերում. — Երբ սարկաւագը կ'ըսէ «Մի ոք յերախայից»ը, կ'սկսի Խորհրդաւոր պատարագը։ Սարկաւագը կ'ազդարարէ ժողովրդին որ եթէ մէջերնին չմկրտուածներ, թերահաւատներ ու չապաշխարողներ կան, չմօտենան Ս. Խորհրդին։ Այս միջոցին պատարագիչը կ'առնէ ծառայի կերպարանք, այսինքն ժամարարն եթէ եպիսկոպոս է, կը հանէ խոյրը, եմիփորոնը, հողաթափները, որովհետև մինչև այդ ատեն ժամարարը Քրիստոսի օրինակ էր, իսկ այդ միջոցին կը դառնայ Ս. Խորհրդին սպասաւոր։

Սրբասացութեան երգով կը կատարուի Ս. Ընծային վերաբերումը. ասիկա Քրիստոս իր կամքով Խաչ բարձրանալով՝ մարդոց ընծայուելուն խորհուրդն ունի։

Հին ատեն այդ միջոցին բոլոր ժողովուրդը թափօրով հաց ու գինի կը բերէր ու կը դնէր Ընծայարան կոչուած սեղանին վրայ, իսկ մեր եկեղեցին ատոնց տեղ սահմանած է Սպասի հացն ու գինին։

Ողջոյն. — Սարկաւագն ողջոյն առնելով ժամարարէն՝ կ'իջնէ ողջոյն կուտայ ժողովրդին։ Ողջունի նշանակութիւնը սա է. Յիսուսի պատուէրին համեմատ անոնք որ կը փափաքին պատարագ մատուցանել տալ՝ հաշտուելու են իրարու հետ և սիրով ողջոյն տալու են իրարու։

Սրբագործութիւն. — Երբ դպիրները կը վերջացնեն «Սուրբ, Սուրբ, Սուրբ,» ժամարարը ձեռքը կ'առնէ Նշխարը, կը խաչակնքէ վրայէն և բարձրացնելով՝ կ'ըսէ «Առէ՛ք, կերէ՛ք»։

Նոյնպէս գինին օրհնելով՝ կը բարձրացնէ ու կ'ըսէ. «Արբէ՛ք ի սմանէ»։ Սրբագործութիւնը կ'աւարտի, երբ ժամարարը կ'երկրպագէ Սեղանին և վեր բարձրացնելով ընծայները՝ կը խնդրէ որ Ս. Հոգին իջնէ անոնց վրայ և հացն ու գինին դառնան Քրիստոսի ճշմարիտ Մարմին ու Արիւն։

Յիշատակութիւն. — Այնուհետև ժամարարն ու սարկաւագները կ'սկսին յիշատակել կենդանի ու հանգուցեալ հաւատացեալներն ու անոնց համար աղօթել Աստուծոյ Ս. Պատարագի միջնորդութեամբ։

Սարկաւագները Սեղանի աջ կողմը երթալով՝ կը յիշատակեն մեր սուրբերն ու նշանաւոր հայրապետները՝ Ս. Թադէոս ու Ս. Բարթողիմէոս առաքեալները, Գր. Լուսաւորիչ, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Գրիգորիս, Մեծն Ներսէս, Սահակ Պարթև, Դանիէլ, Խաղ եպիսկոպոս, Մեսրոպ վարդապետ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Կլայեցի, Ներսէս Լամբրոնացի, Յովհան Որոտնեցի, Գրիգոր ու Մովսէս Տաթևացի և առ հասարակ հայոց հովիւներն ու հովուապետները։

Ցետոյ կը յիշեն ուրիշ սուրբեր։

Իսկ Սեղանի ձախ կողմը գալով՝ գոհութիւն մատուցանելէ ետք, կը յիշատակեն Հայոց Հայրապետը, Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Պատրիարքներն ու ամէն կենդանի հաւատացեալները։

Ճաշակում. — Դպիրները «Հայր մեր»ը երգելէն ետք, սարկաւագը կը ձայնէ Պռոսխու

երկինքն ու երկիրը լի են քու փառքերովդ։ Օրհնութիւն ըլլայ Քեզի բարձունքին մէջ, օրհնեալ ես որ եկար ու պիտի դաս Տիրոջ անունով։

Ովսաննա՛ բարձունքին մէջ։

Թելադրութիւններ. — Ս. Պատարագն ինչի՞ խորհուրդ է։ — Ո՞վ սահմանեց։ — Ի՞նչպէս։ — Որո՞ն է Իսկական Պատարագը։ — Որո՞նք են Պատարագին նիւթերը։ — Ո՞վ կը կատարէ։ — Ե՞րբ կը մատուցուի Պատարագ։ — Ս. Պատարագի զգեստներուն ձեւն ո՞ւրկէ առնուած է։ — Խորհուրդ Խորհնն ե՞րբ կ'երգեն։ — Այդ շարականին մէջ ի՞նչեր բացատրուած են։ — Քահանայն ձեռքն ինչո՞ւ կը լուայ։ — Ե՞րբ և ինչո՞ւ կը խոստովանի։ — Ե՞րբ բեմ կը բարձրանայ։ — Ե՞րբ սպասը կը դնէ։ — Ե՞րբ կը խնկարկէ։ — Պռոսխուտէի տաեն ի՞նչ կ'ընեն։ — Ինչո՞ւ Մարգարէից ու Առաքելոց Թուղթերը կը կարդան։ — Աւետարանն ի՞նչ է։ — Հաւատամքով ի՞նչ կը յայտնենք։ — Ե՞րբ կ'օգտի Խորհրդաւոր պատարագը։ — Քահանայն ի՞նչ փոփոխութիւն կը կրէ։ — Հին տաեն վերաբերու

ծին Ս. Հաղորդութիւն կուտան որով անդամ կ'ըլլայ Քրիստոսի եկեղեցւոյն։ Քահանայն եկեղեցական հանդէսով մկրտուածը կը տանի ու կը յանձնէ ծնողքին։

3. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ապաշխարութեան խորհուրդը սա է. Քրիստոնեայն մկրտութենէ ետք գիտակցաբար գործած մեղքերը խոստովանելով քահանային առջև՝ թողութիւն կը խնդրէ։

Խոստովանելու համար ի նշան կատարեալ զղջման կը ծնրադրենք քահանային առջև և կ'ըսենք Մեղայ։ Այս քահանայն կը կոչուի «խոստովանահայր», խոստովանողն ալ «խոստովանորդի»։

Խոստովանահայրը հարկ եղած խրատները տալէն ու չափով մը ապաշխարանք դնելէ ետք՝ արձակուած կը շնորհէ խոստովանորդւոյն։

Այն խոստովանահայրն որ խոստովանութիւնը կը յայտնէ ուրիշի մը՝ եկեղեցւոյ օրէնքով կը զրկուի քահանայութենէ։

4. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ապաշխարելէ ետք կը հաղորդուինք Յիսուսի Մարմնով = Նշխարով ու Արիւնով = գինիով, որով քաւութիւն ու թողութիւն կ'ըլլայ մեր մեղքերուն և յաւիտենական կեանքի ժառանգորդ կ'ըլլանք։

Հաղորդութիւն կը նշանակէ «Կցորդութիւն = Միանակցութիւն»։

5. ՊՍԱԿ = ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Պսակի խորհրդէն առաջ քահանայն կ'օրհնէ հարսին ու փեսին հանդերձները՝ հաշուն որ նախածնողքին սկզբնական զգեստին օրինակն է։ Յետոյ եկեղեցի կ'երթան հարսնաւորներուն հետ և քահանայն նախապէս

խոստովանցնելով փեսացուն ու հարսնցուն՝ կը հարցնէ թէ երկուքնին համաձայնա՞ծ են այս ամուսնութեան, կը յիշեցնէ պսակի խորհուրդը և կը յորդորէ անբաժան ու սիրով ապրիլ իրարու հետ։ Պսակը կ'օրհնէ աղօթքով։ Պսակի ատեն փեսին ու հարսին գլուխը նարօտ կը դնէ, և անոնց կուտայ օրհնեալ գինիէն որ յիշատակ է Քրիստոսի այն հրաշքին որով Գալիլիոյ Կանա քաղաքը հարսնիքի մէջ ջուրը գինւոյ փոխուեցաւ։

6. ԿԱՐԳ = ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգը = Ձեռնադրութիւնը Ս. Խորհուրդ մըն է զոր եպիսկոպոսը կուտայ Ընծայեալին՝ մատակարարելու եկեղեցւոյ փրկարար խորհուրդները, եկեղեցական պաշտամանց վերաբերեալ արարողութիւնները կատարելու և ժողովրդին քարոզելու Աւետարանը։

Եկեղեցւոյ միայն վերին վեց աստիճանները ձեռնադրութեամբ կը տրուին։

Ծիսական բացատրութիւնը տե՛ս «Աստուածպաշտութեան պաշտօնեայները։»

7. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՑ

Հայ եկեղեցին հիւանդներու համար սահմանած է աղօթքներ՝ անոնց մեղայ թողութեան ու բժշկութեան համար։ Քահանայն այս խորհուրդը կը կատարէ հիւանդին վրայ ձեռք դնելով Աստուծոյ անունով, բժշկութեան աւետարան կարդալով և Ս. խաչով ու Աւետարանով տեառնագրելով։ Երբ հարկ ըլլայ, քահանայն կը խոստովանցնէ ու կը հաղորդէ։ Այս կը կոչուի թոշակ։

Այս խորհուրդը վերջին օծման փոխարէնն է մեր Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ մէջ։

Թելադրութիւններ. — Որո՞նք են Հայ Եկեղեցւոյ եօթն սրբարար խորհուրդները։ — Ատոնց միջոցաւ ի՞նչեր կը ներգործուին մեր մէջ։ Քահանայն ե՞րբ նարօտ կը դնէ մկրտուողին գլուխը։ — Ե՞րբ կը թափէ միւռոնը։ — Ի՞նչու։ Քահանայն քանի՞ անգամ կը մխրճէ մանուկն աւազանին մէջ։ — Որո՞ւն անունով։ — Երախայն մկրտուելով՝ ի՞նչ կ'ըլլայ։ — Կնքահայրն ի՞նչ կ'ըսէ։ — Որո՞ւ բերնէն։ — Հին ատեն ի՞նչ սովորութիւն կար։ — Կնքահօր ձեռքի մոմն ի՞նչ նշանակ է։ — Քահանայն ե՞րբ կը դրոշմէ, ինչո՞վ։ — Ի՞նչու։ — Մկրտուողին ե՞րբ Ս. Հաղորդ կուտան։ — Ի՞նչու կ'ապաշխարենք։ — Ո՞րուն առջև կը խոստովանինք։ — Ո՞ր քահանայն կը ղրկուի քահանայութենէ։ — Ի՞նչու կը հաղորդուինք։ — Պատկի ատեն ի՞նչ ծէսեր կը կատարուին։ — Պատկն ինչո՞վ կ'օրհնուի։ — Օրհնեալ գինին ինչի՞ նշանակ է։— Որո՞նք կը ձեռնադրուին։ — Ի՞նչու կը ձեռնադրուին։ — Հայ Եկեղեցին հիւանդներուն համար ի՞նչեր սահմանած է։ — Քահանայն հիւանդին վրայ ի՞նչ կ'ընէ։ — Մենք վերջին օծումն ունի՞նք։

ԺԱ. ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասարակաց աղօթքէն ու Ս. Խորհուրդներու ծէսերէն զատ Հայ եկեղեցին ունի սա՛ սրբազան արարողութիւնները։

Միւռոնի Ս. Օրհնութիւն. — *Հայոց Կաթողիկոսները կը կատարեն Ս. Միւռոնի օրհնութիւնը՝ աղօթքով, օրհնութեամբ ու հոգեւոր երգերով։ Ս. Միւռոնը կը կոչուի նաև Իւղանոյշ որով կը կատարուին եկեղեցական ամէն օծութիւններ։*

Նորակառոյց եկեղեցւոյ օծում։

Խաչի ու պատկերի եւն. օծում. — *Մովսէս Աստուծոյ հրամանաւ օծեց տաճարին խորանն ու բոլոր սպասները։ Քրիստոնէական եկեղեցին կ'օծէ, կ'օրհնէ ու նուիրական կը դարձնէ նորագործ խաչերը, նորանկար պատկերները, նաև օրհնելով կը սրբէ անօթները, զգեստները Միսարանի հրահանգներուն համաձայն։*

Խաչահանգիստ=Խաչվուայ. — *Ինչպէս որ Հին ուխտի ատեն հրեշտակն իջնելով Պրոպատիկէ աւազանը՝ կը յուզէր ջուրը և կը բժշկուին միայն հոն գտնուած այն հիւանդներն որ առաջին անգամ ջուրը կը նետուէին, այսպէս ալ եկեղեցին ընդունած է ջրի օրհնութիւնն և առանձին կարգ սահմանած է։ Քահանայն խաչով ու աւետարանով կ'օրհնէ ջուրն որով ջուրը կը սրբուի ու հաւատացեալները կը սրբուին։*

Ցուղարկաւորութիւն. — *Հայ եկեղեցին միւս եկեղեցիներուն նման ննջեցեալներու թաղումը կը կատարէ մեծ հանդէսով ու աղօթքով։ Թաղման կարգն երեք տեսակ է. Տղայաթաղ, Հասակաւորներու եւ Եկեղեցականներու։*

Բոլոր ննջեցեալները թաղելու համար՝ սա՛ ծէսերը կան—լուացում, պատնէշ սպիտակ կտաւով, մոմ վառել և խունկ ծխել, թաղման, Այգուց, Եօթնօրեայ, Քառասնից, Տարելիցի կարգ, Գերեզմանօրհնէք։ Եկեղեցականներու թաղման կարգն աւելի հանդիսաւորութեամբ կը կատարուի։ Սոյն ծէսերէն զատ ննջեցեալ եկեղեցականը կ'զգեստաւորեն և կ'օծեն Ս. Միւռոնով։

Լուանալն ու խունկ ծխելը նշան են յարգանքի։

Պատնեշը նշան է անապականութեան։

Ամբիծէք գիշերը կը կատարուի ննջեցեալին ներելի մեղքերու թողութեան համար։

Այգուց. — *Եօթնօրեից կարգերը Հին ուխտէն առնուած են։ Քառասնիցը յիշատակ է Քրիստոսի քառասնօրեայ համբարձման։*

Տարելիցն ու Գերեզմանօրհնէքը *կատարելով՝ կ'աւետենք ննջեցեալներու երկրորդ գալստեան յոյսը։*

Ցիշատակ մեռելոց. — *Մեր բարեպաշտ նախնիք, ինչպէս հիմայ ալ, իրենց պարտաւորութիւն կը համարէին մեռելոցի օրերը գերեզմանատուն երթալով՝ օրհնել տալ*

իրենց նախնեաց գերեզմանն և անոնց յիշատակը յարգել։

Հինգ տաղաւարի յաջորդ օրը մեռելոց է. այդ օրը բոլոր ննջեցեալներուն համար եկեղեցին հոգեհանգիստ կը կատարէ։

Տնօրհնէք. — Ս. Ծննդեան ու Ս. Յարութեան տոներուն քահանայն Ս. Աւետարանով ու Ս. Խաչով կ'օրհնէ իր ծուխերուն տուները։

Կալօրհնէք, Հնձան օրհնէք. — Կալն ու հնձանը կ'օրհնեն, անոր համար որ կը մատակարարեն Ս. խորհրդին նուիրական ընծայները՝ հացն ու գինին։ Քահանայն հին ատեն իր ապրուստին համար տասնորդ կ'ստանար հնձանէն որ կը կոչուի պտղի։

Մատաղ. — Տէրունի ու Սրբոց նշանաւոր տօներուն ի յիշատակ մեր ննջեցեալներուն՝ մատաղ կ'ընենք, հոգեհանգ աղքատներուն բաշխելու համար։ Աղը կ'օրհնենք՝ մատաղցու կենդանին սրբելու սկզբնական աղ։

Թելադրութիւններ. — Որո՞նք են օրբաղան արարողութիւնները — Ս. Մեւառոն ի՞նչ կ'ընեն։ — Ո՞վ կ'օրհնէ։ — Քրիստոնէական եկեղեցին իր ինչերը կ'օծէ։ — Խաչահանգիստն ինչի՞ օրինակ է։ — Ինչո՞վ կ'օրհնեն։ — Հին ուխտի ատեն ի՞նչ սովորութիւն կար։ — Թաղման կարգը քանի՞ է։ — Ի՞նչ ծէսեր կան։ — Ինչի՞ նշան են լուանալը, պատնելը, մմը, Ամրիծքը, Այգուցը, Եօթնօրէքը, Քառասնեցը։ — Ո՞ր տները մեռելոց ունին։ — Ի՞նչ կ'ընեն այդ օրը։ — Տնօրհնէք ե՞րբ կը կատարեն։ — Ո՞վ կ'օրհնէ։ — Ի՞նչու կ'օրհնենք կալերը, հնձանները։ — Ե՞րբ մատաղ կ'ընենք։ — Ինչո՞ւ կ'ընենք։ — Ի՞նչը կ'օրհնենք։ — Որո՞նք Հին ուխտէն մնացած են և որո՞նք յատուկ են Քրիստոնէութեան։

ԺԲ. ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր նախնեաց մեզի աւանդած սովորութիւնները կը կոչուին Բարեպաշտական աւանդութիւններ որոնք Աստուածապաշտութեան ջերմեռանդութիւնն արծարծելու յայտարար նշաններն են։

Մաս=Նշխար. — Մաս կը բաժնուի անոնց որ Ս. Պատարագի չեն հաղորդուած՝ Ս. Սեղանէն անմաս չթողլու համար։ Մասը կը պատրաստուի բաղարջ հացէ և մինչեւ Պատարագի վերջը կը պահուի սեղանին վրայ։

Ժամուց, գանձանակ, պնակ. Կամաւոր նուէր մըն է ժամուցը զոր ժողովուրդը կուտայ ժամարար քահանային՝ յիշելու համար ննջեցեալներն ու կենդանիները Ս. Պատարագին։

Իսրայելացւոց ատեն կար Գանձանակը. հոս դրամական նուէր կը նետէին եկեղեցւոյ պէտքերուն և աղքատներուն ողորմութեան համար։ Ասոր տեղ հիմայ Պնակ կը շրջաբերի։

Ակէ զատ քահանայն գանձանակ կը շրջաբերէ՝ ժողովրդին կամաւոր նուէրն ստանալու համար։

Ձիթենի բաժնել. — Ծաղկազարդի առտուան ժամերգութեան «Փառք ի բարձունս»ի ատեն ձիթենի ոստեր կը բաժնեն ի յիշատակ Քրիստոսի Երուսաղէմ մտնելուն, երբ հրեայներն ընդ առաջ գացին անոր՝ ձիթենւոյ ու արմաւենւոյ ճիւղերով։

Կարագ բաժնել. — Ոտնլուային կարագ իւղ կը քսեն ի յիշատակ այն կնոջ որ իւղով օծեց Յիսուսի գլուխը Սիմոն բորոտի տունը։

Խաղող օրհնել. — Մեր բարեպաշտ նախնիք իրենց այգիներուն խաղողի բերքէն իբրև երախայրիք կը նուի-

ըէին եկեղեցւոյ՝ գինւոյ բաժակը պատրաստելու համար։ Եկեղեցին սահմանած է օրհնութեան աղօթքներ կատարել որ նուիրատու ժողովրդին այգիներն անվնաս պահպանուին ու արգասաւորուին։

Ուստի Վարդավառին կամ Ս. Աստուածածին, Ս. Պատարագի միջոցին խաղողի օրհնութիւն կը կատարուի։

Ջուր սրսկել ու աղաւնի թռցնել. — *Հայոց հեթանոսութեան ատեն սովորութիւն էր Վարդավառին ջուր սրսկել ու աղաւնի թռցնել։ Քրիստոնէութեան ատեն ջուր սրսկելը նկատուեցաւ յիշատակ ջրհեղեղի ու աղաւնի թռցնելը՝ Նոյի տապանէն դուրս աղաւնի թռցնելուն։*

Թելադրութիւններ. — *Որո՞նք են բարեպաշտական ուսանդութիւնները։ — Ինչի՞ նշան են։ — Միւռոն ի՞նչէ կը պատրաստուի։ — Որո՞նց կը բաշխուի։ — Ի՞նչ է ժամուցը։ — Ինչո՞ւ կուտայ։ — Իսրայելացւոց ատեն ի՞նչ կար։ — Քահանայն ինչո՞ւ գանձանակ կը շրջաբերէ։ — Ո՞ւր կ'երթան ուխտի։ — Ինչո՞ւ։ — Ե՞րբ և ինչո՞ւ ոսկ կը բաշխենք։ — Ե՞րբ կարագ կը բաժնեն։ — Ինչո՞ւ։ — Ե՞րբ կ'օրհնեն խաղողը։ — Ինչո՞ւ։ — Ե՞րբ կ'ըլլայ Հրավառութիւն։ — Ե՞րբ և ինչո՞ւ ջուր կը սրսկեն ու աղաւնի կը թռցնեն։ — Որո՞նք Հին ուխտէն մնացած են ու որո՞նք Հայ հեթանոսական կրոնքէ։ — Որո՞նք յատուկ են Քրիստոնէութեան։*

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔ

ԺԳ. ՀԱՒԱՏՈՑ ՀԱՆԴԱՆԱԿ

ՀԱՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

—

Ա. Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից։

Ասով կը դաւանինք թէ 1. Կայ մի Աստուած, անիկա ունի երեք անձ՝ ՀԱՅՐ, ՈՐԴԻ և Ս. ՀՈԳԻ։ Եւ կ'ընդունինք Ս. Երրորդութիւն և մի Աստուածութիւն։ 2. Թէ Աստուած իր Որդւոյն ու Ս. Հոգւոյն հետ ոչինչէն ստեղծեց երկինքը, երկիրն ու բոլոր տեսանելի ու անտեսանելի բաները՝ արարածները։ 3. Թէ անիկա ամենակալ է և բոլոր արարածները կը կառավարէ ու կը պահպանէ իր իշխանութեան տակ։

Բ. Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, Ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին, այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, Լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, Ծնունդ եւ ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք։

Ասով կը դաւանինք թէ 1. Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն է Յիսուս Քրիստոս։ 2. Անիկա Միածին է, այսինքն չկայ ուրիշ մէկն Անոր նման։ 3. Անիկա ծնած է Հօր Աստուծմէ յաւիտեանէն առաջ, ինչպէս լոյսը լոյսէն, այսինքն ինչպէս որ լուսոյ ճառագայթներն անընդհատ կերպով յառաջ կուգան արեգակէն, ու ստեղծուած չէ։ 4. Անիկա իսկակից է Հօր Աստուծոյ հետ, ու ամէն ինչ Անով եղած է։

Գ. Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարեմայ Սրբոյ Կուսէն Հոգովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։

Ասով կը դաւանինք 1. Աստուծոյ որդին երկինքէն իջաւ, այսինքն երկրիս վրայ տեսանելի դարձաւ։ 2. Անիկա մարմնացաւ, այսինքն մարդկային բնութիւն առաւ Ս. Կոյս Մարիամէն Ս. Հոգւով։ 3. Անիկա կատարեալապէս մարդ եղաւ, այսինքն՝ ոչ թէ միայն մարդկային մարմին առաւ, այլ և մարդկային հոգին ու միտքը, ու եղաւ ճշմարտապէս մարդ ու կատարեալ Աստուած։

Դ. Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։

Ասով կը դաւանինք 1. Աստուածորդին Յիսուս Քրիստոս չարչարուեցաւ, այսինքն ցաւ զգաց ու մարդկային բնութեամբ կրեց բոլոր տանջանքները։ 2. Անիկա իր յօժար կամքով Խաչի վրայ բարձրացաւ որ մեզ ազատէ յաւիտենական պատիժէն ու մեղքէն։ 3. Անիկա մարմնով մեռաւ Խաչի վրայ ու իբրև մարդ թաղուեցաւ։

Ե. Յերրորդ աւուր յարուցեալ։

Ասով կը դաւանինք թէ Աստուածորդին Յիսուս Քրիստոս մարդկային բնութեամբ մեռնելէն ետքը, երրորդ օրն Աստուածային զօրութեամբ կենդանացաւ՝ յարութիւն առաւ։

Զ. Ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդաջմէ Հօր։

Ասով կը դաւանինք 1. Աստուածորդին Յիսուս Քրիստոս մարդկային մարմնով Երկինք Համբարձաւ։ 2. Անիկա նստաւ Հօր աջ կողմն ու ատով ցոյց տուաւ թէ Անիկա Հօր Աստուծոյ հետ հաւասար զօրութիւն և պատիւ ունի։

Է. Գալոց է նովին մարմնով եւ փառօք Հօր ի դատել զկենդանեսն եւ զմեռեալս Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Ասով կը դաւանինք 1. Աստուածորդին Յիսուս Քրիստոս դարձեալ աշխարհ պիտի գայ Հօր փառքով։ 2. Անիկա պիտի դատէ ողջ մնացածներն ու մեռեալները։ 3. Անոր փառքի թագաւորութիւնը վերջ չունի։

Ը. Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յԱնեղն եւ ի Կատարեալն՝ Որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան՝ քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն։

Ասով կը դաւանինք 1. Ս. Հոգին Ս. Երրորդութեան երրորդ անձն է։ 2. Անիկա կատարեալ Աստուած է և իսկակից Հօր և Որդւոյն, և երկրպագելի Անոնց

հաւասար։ 3. Ս. Հոգին խօսեցաւ օրէնքներու, մարգարէներու միջոցաւ։ 4. Ս. Հոգին իջաւ Յորդանան Յիսուսի մկրտուած ատենը։ 5. Ս. Հոգին Պենտեկոստէի օրը Վերնատան մէջ պատմեց և քարոզեց առաքեալներուն Յիսուսի խօսքերը։ 6. Ս. Հոգին կը բնակի սուրբերուն մէջ։

Թ. Հաւատամք ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Ս. Եկեղեցի։

Անով կը դաւանինք 1. Յիսուս Քրիստոս Իր հաստատած եկեղեցւոյն՝ հաւատացեալներուն հետ է միշտ ու անոր չնորհք կուտայ։ 2. Այդ եկեղեցին Մի է, Սուրբ է, Ընդհանրական և Առաքելական կը կոչուի, որուն միակ գլուխն է ինք Յիսուս Քրիստոս։

Ժ. Ի մի մկրտութիւն, ապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

Անով կը դաւանինք 1. Մարդ մկրտուելով՝ կ'ազատուի Սկզբնական մեղքէն ու արժանի կ'ըլլայ Ս. Հոգւոյն չնորհքն ընդունելու և կը դառնայ երկնաւոր Հօր որդեգիր։ 2. Ճշմարիտ խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ՝ մարդ թողութիւն կ'ստանայ իր մեղքերուն։

ԺԱ. Ի յարութիւն մեռելոց։

Անով կը դաւանինք. Վերջին դատաստանին օրը Աստուծոյ հրամանաւ բոլոր մեռեալ մարդոց մարմինները պիտի կենդանանան, յարութիւն պիտի առնեն ու պիտի միանան իրենց հոգիներուն հետ, և այնուհետեւ պիտի ըլլան անապական ու անմահ։ Իսկ անոնք որ ողջ են՝

մէկ ակնթարթի մէջ պիտի փոխուին ու պիտի դառնան անապական ու անմահ։

Մեռեալներու յարութեամբ բոլոր տիեզերք պիտի փոխուի նոր երկինք ու նոր երկիր պիտի ըլլայ։

Ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս։

Անով կը դաւանինք. 1. Հոգիներն ու մարմինները պիտի դատուին Յիսուս Քրիստոսէ, և իւրաքանչիւրը պիտի ստանայ իր ըրածին փոխարէնը։ 2. Մեռեալներու յարութենէն ետքը պիտի սկսի նոր յաւիտենական կեանքը։ Այս կեանքն արդարներուն համար պիտի ըլլայ երանելի, իսկ մեղաւորներուն համար՝ տանջանք։ Երանելի կեանք կը կոչուին ԴՐԱԽՏՆ ու Երկնքի արքայութիւնը. իսկ տանջանքը՝ ԴԺՈԽՔ։

Մինչև հոս է Հաւատամքը։

«Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ եւ Առաքելական Ս. Եկեղեցի։

Ս. Գրիգոր Լուսաւորիչն ըսաւ

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ

Միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Թելադրութիւններ. — Ա. հաւատալիքով ինչեր կը դաւանինք: — Բ. ո՞վ: — Գ. ո՞վ: — Դ. ո՞վ: — Ե. ո՞վ: — Զ. ո՞վ: — Է. ո՞վ: — Ը. ո՞վ: Թ. ո՞վ: — Ժ. ո՞վ: — ԺԱ. ո՞վ: — ԺԲ. ո՞վ: — Ո՞րն է Հաւատամքի յաւելուածը: — Ո՞վ ըսաւ «Իսկ մեք փառաւորեսցուք»:

ԺԳ. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն Քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ, խոստովանիմք Տէր զքեզ, և երկիրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք, Տէր, զքէն վասն մեծի փառաց քոց: Տէր թագաւոր սուրբ երկնային, Աստուած և Հայր ամենակալ: Տէր և Որդի Հօր Միածին՝ Յիսուս Քրիստոս և Սուրբ Որդի: Տէր Աստուած՝ Գառն Աստուծոյ և Որդի Հօր որ առեր զմեղս ի կուսէն: Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի, և արդ՝ ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեա՛ց մեզ: Զի դու միայն Սուրբ, դու միայն Բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ Սուրբ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր, և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Արժանի արա՛, Տէ՛ր, զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղայ պահեա՛ զմեզ: Օրհնեա՛լ ես Տէ՛ր Աստուած՝ հարցն մերոց, գովեա՛լ և փառաւորեա՛լ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն: Օրհնեա՛լ Տէ՛ր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երեք անգամ կրկնէ): Տէ՛ր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես ասացեմ, Տէ՛ր, ողորմեա՛ ինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ. ցո՛յց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ: Տէ՛ր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Տէ՛ր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ: Իքէն է, Տէ՛ր, աղբիւր կենդանութեան և լուսով երեսայ քով տեսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ Տէ՛ր:

ՄԱՂԹԱՆՔ. — *Փա՛ռք, պատի՛ւ և երկրպագութի՛ւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Թելադրութիւններ. — Հայ Եկեղեցին այս «Փառք ի բարձունս» ի մէջ ինչեր կը դաւանի և զորո՞ւք կը փառաբանէ: — Ո՞վ երգեց առաջին անգամ Փառք ի բարձունսը: — Հրեշտակներն երգին մինչև ո՞ր մասն երգեցին: — Միւս մասերն ի՞նչ խորհուրդ ունին, Յիսուսի ո՞ր անօրինութիւնները կը փառաբանեն: — Ո՞ր մասն աղաչանք ու աղօթք է: — Ի՞նչեր կ'աղաչենք ու կ'աղօթենք: — «Լացին գիշեր»ը ի՞նչպէս կ'երգենք «Փառք ի բարձունս»ը: — Ի՞նչ արարողութիւն կայ այդ միջոցին: — Բայց ի «Լացի գիշեր»էն «Փառք ի բարձունս»ը ի՞նչերու ընկերակցութեամբ կ'երգուի:

Գ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցեմ հեստեւեալները.

Ս. Պատարագը ... խորհուրդն է և սահմանեց...։ Իսկական պատարագն է...։ — Պատարագի նիւթերն են...։ — Կը կատարեն Ս. Պատարագը ...։ — Կը մատուցուի ... ուր որ ...։ — Ս. Պատարագ չի մատուցուիր... օրերը ...։ — Ս. Պատարագի զգեստներն առնուած են...։ — Խորհուրդ խորհինը կը բացատրէ...։ — Քահանայն ձեռքը կը լուայ ... և կը խոստովանի...։ — Բեմ կը բարձրանայ. ...։ — Սպասը կը դնէ...։ — Կը խնկարկէ...։ — Հաւատամքով կը յայտնենք...։ — Խորհրդաւոր Ս. Պատարագը կ'սկսի...։ Եւ կը արբագործուի...։ — Հին ատեն Վերարերումն...։ — Ողջոյն կը նշանակէ...։ — Սեղանին աջ կողմը կը յիշատակուին...։ — Ձախ կողմը...։ Քահանայն կը ճաշակէ Ս. խորհուրդը...։— Շնորհակալութեան աղօթքը ...— Ս. Պատարագը կ'աւարտի...։ — Հայ եկեղեցւոյ եօթը արբարար խորհուրդներն են...։ — Առանց միջոցաւ կը նուիրագործուին...։ Քահանայն նարօտ կը դնէ ...։ Կը թափէ Ս. միւռոնը...։ — Քահանայն ... երախայն...։ — Կնքահայրը կ'ըսէ...։ Հին սովորութիւնն էր...։ Կնքահօր ձեռքի մատերը...։ — Քահանայն կը դրոշմէ...։ — Մենք կը խոստովանինք...։ — Քահանայն կը զրկուի քահանայութենէ...։ — Կը հաղորդուինք ...։ — Պատկի ատեն կը կատարուի ...։ — Պատկը կ'օրհնուի...։ — Կը ձեռնադրուին...։ — Հայ եկեղեցին հիւանդներուն համար սահմանած է..։ — Թաշակ կը կոչուի...։ — Արբազան արարողութիւններն են...։ — Ս. միւռոնով ...։ — Կ'օրհնէ...։ — Քրիստոնէական եկեղեցին կ'օծէ...։ Խաչահանգիստն օրինակ է...։ Թաղման կարգի ծէսերն են ...։ — Մեռելացին ...։ — Տնօրհնէք կը կատարեն ..։ — Կ'օրհնենք...։ — Մատաղ կ'ընենք...։ — Հին ուխտին մնացած են...։ — Քրիստոնէութեան յատուկ են..։ — Բարեպաշտական ուսանողութիւններն են...։ — Միւռոնը կը պատրաստուի...։ Կը բաշխուի ...։ — Ուխտի կ'երթան ...։ — Խաղողը կ'օրհնուի ...։ — Հրամարութիւն կ'ընայ...։—Ջուր կը արկեն և աղաւնի կը թռցնեն...։—Հայ հեթանոսական կրօնքէն մնացած են...։ — Ցատուկ են Քրիստոսութեան...։

Ժ Ե. ԱՂՕԹՔՆԵՐ

—

1. ՃԱՇԷՆ ԱՌԱՋ

Աչք ամենեցուն ի Քեզ, Տէր, յուսան եւ Դու տաս զկերակուր նոցա ի ժամու. բանաս զձեռս Քո եւ լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամաց քովք:

2. ՃԱՇԷՆ ԵՏՔ

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց, տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Զլիութիւն սեղանոյս անհատ եւ անանուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց: Նմա փառք յաւիտեանս. ամէն:

3. ԱՌԱՒՕՏԵԱՆ

Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան Քո: Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ Քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք Մեր զփրկութիւն Քո, եկեսցէ եւ բնակեսցի առ մեզ Աստուածութիւն Քո եւ ողորմութիւն Քո հովանի եւ պահապան լիցի ի վերայ պաշտօնէից Քոց: Եւ զմեզ՝ զծառայս Քո արժանի արա ի տուէ եւ ի գիշերի եւ յամենայն ժամու միշտ խորհել ի սէր պատուիրանաց Քոց եւ գոհանալով՝ փա-

ռատրել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

4. ԵՐԵԿՈՅԵԱՆ

Տէր Աստուած մեր, Դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի. ընդ սուրբ երկիւղ Քո բեւեռեալ պահեա զմիտ եւ զխորհուրդ մեր, որպէս զի յամենայն ժամ Քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն եւ Քեզ հանցուք զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆՔԻ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

—

1. Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:

Այս պատուիրանով Աստուած կը հրամայէ մեզի որ զԱյն միայն ճանչնանք ճշմարիտ Աստուած. հաւատամք Իրեն, յոյս դնենք Իրեն վրայ, սիրենք, երկիրպագենք ու աղօթենք: — Կ'արգիլէ ուրիշ աստուածներ ունենալ և զանոնք պաշտել Աստուծոյ պէս:

☞ *Հրեշտակներն ու սուրբերը յարգելով՝ չենք մեղանչեր այս պատուէրին դէմ, որովհետև մեր այդ պատիւն ու յարգանքը կը վերաբերին անոնց Աստուածային շնորհին ու զօրութեանն որոնց միջոցաւ անոնք ծառայած են Աստուծոյ ու կատարած են բարի գործեր:*

2. Մի՛ արասցես դու քեզ կուռս ամենայն նմանութեան, մի՛ երկրպագանիցես նոցա եւ մի՛ պաշտեսցես զնոսա:

Այս պատուիրանով Աստուած կը հրամայէ մեզի որ մենք ո՛և է առարկայ կուռք չշինենք ու անոր Աստուածային պատիւ չընծայենք, այսինքն չպաշտենք, յոյս չդնենք անոր վրայ, ինչպէս Աստուծոյ վրայ:

☞ *Այս պատուիրանին դէմ չենք մեղանչեր Ս. Պատկեր գործածելով: Ս. Պատկերի գործածութիւնը*

կռապաշտութիւն չէ, որովհետև մենք զանոնք չենք պաշտեր Աստուծոյ պէս, այլ միայն կը յարգենք, ա՛ն ալ ոչ թէ ձեռագործ պատկերը, այլ անոր վրայ նկարուած անձը։ Նկարուած տէրունական պատկերներու մէջ Աստուծոյ կ'երկրպագենք, իսկ սուրբերու պատկերներու մէջ կը յարգենք անոնց աստուածահաճոյ սրբութիւնը։

Ս. Պատկեր գործածելով՝ նպատակնիս է յիշել Աստուծոյ և Իր սուրբերուն գործերն որ անոնցմէ օրինակ առնենք։

3. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց։

Աստուած այս պատուիրանով կը հրամայէ մեզի որ մենք Իր անունն առնենք բերանիս իբրև սրբութիւն, յարգենք այն ամենքն ինչ որ Անոր նուիրուած է, ինչպէս Ս. տաճարներ, մատուռներ, պատկերներ ու եկեղեցական սպաններ։

Աստուած կը պատուիրէ որ մեր աղօթքներու և խօսակցութեան ատեն երկիւղածութեամբ յիշենք և արտասանենք Իր անունը։ Ի զուր երդում չընենք Իր անունով, իսկ եթէ երդում ըրած ենք, հաստատ պահենք մեր երդումը։

Քահանային ներկայութեան, Ս. Խաչի ու Ս. Աւետարանի առջև արտասանած խոստումն երդում կը կոչուի։

4. Յիշեա՛ սրբել զօր շաբաթու, զվեց օր գործիցես եւ արասցես զամենայն գործս քո, իսկ զեօթներորդ օրն՝ շաբաթ նուիրեա Տեառն քում։

Այս պատուիրանով Աստուած կը հրամայէ մեզի որ շաբաթ օրը (քրիստոնեայներուն համար կիրակին), նոյնպէս և ուրիշ տօներ նուիրուինք սուրբ գործերու։ Աստուած

կը պատուիրէ 6 օր աշխատիլ ու գործել մարմնաւոր գործեր, իսկ կիրակին ու տօնի օրեր հանգչիլ ու կատարել Աստուծոյ հաճելի գործեր։

Աստուծոյ հաճելի գործերն են. 1. եկեղեցի երթալ, 2. ներկայ ըլլալ Աստուածպաշտութեան, աղօթել, կարդալ Ս. Գիրքը, սորվիլ Աստուծոյ օրէնքները, 3. մեր ազգայիններուն բարիք ընել, այսինքն աղքատներուն ողորմութիւն տալ իբրև պարտք, հիւանդներուն այցելել, որբերուն խնամք տանիլ, օգնել խեղճերուն ևն։

Բայց ներելի է կիրակի օր անասուններու կեր ու ջուր տալ, հրդեհէ ու հեղեղէ մարդիկ ազատել ու հիւանդները հոգալ։

5. Պատուեա՛ զհայր քո եւ զմայր, զի բարի լինիցի քեզ եւ երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի։

Այս պատուիրանով Աստուած կը հրամայէ մեզի որ մենք պատուենք մեր ծնողքն իբրև երախտագիտութեան նշան՝ միշտ յարգանքով վարուինք, անոնց ուրախութիւն ու մխիթարութիւն պատճառենք, անոնց օգնենք հիւանդութեան, ծերութեան, կարօտութեան ատեն, աղօթենք անոնց համար, մտիկ ընենք ու կատարենք անոնց բարի խրատները։

Աստուած այս պատուիրանով կը հրամայէ որ յարգենք այն մարդիկն որ մեզի համար երկրորդ ծնողք են, ինչպէս դաստիարակները, ազգին համար գործողներն ու նահատակները։

Աստուած այս պատուիրանը կատարողին կուտայ երկար կեանք ու բախտաւորութիւն։

6. Մի՛ սպաններ։

Աստուած այս պատուէրով կը հրամայէ մեզի նիւ-

թական ու բարոյական վնաս չընել թէ՛ մեր անձին ու թէ՛ ուրիշ անձի, և մարդասպանութիւն չընել։

Ուրիշին կը վնասենք ծեծով, կռիւով, վէճով, խիստ վարմունքով, ոխակալութեամբ, ատելութեամբ, նախանձով, բարկութեամբ և խօսքով վիրաւորելով։

7. Մի շնար։

Աստուած այս պատուէրով կը հրամայէ մեզի որ մենք մաքուր ըլլանք, չար մտածումներ չընենք, հեռանանք գէշ խօսակցութիւններէ, չար երգերէ ու պիղծ գործերէ։

8. Մի գողանար։

Աստուած այս պատուէրով կը հրամայէ մեզի որ մենք չխլենք, չյափշտակենք, չպահենք ուրիշին ունեցածները, չարատաւորենք ուրիշին բարի անունը, գտած բաներնիս չպահենք, առեւտուրի մէջ չխաբենք, մշակներու, ծառայներու վարձքը չկտրենք, մեր պարտքը վճարենք ու մեզի պահ տրուած աւանդը վերադարձնենք։

9. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ։

Աստուած այս պատուէրով կ'արգիլէ մեզ որ սուտ վկայութիւն չընենք դատարանին ու հասարակութեան առջև, այլ ըլլանք ճշմարտախօս։ Կ'արգիլէ զրպարտել բամբասել, ուրիշի խօսածը կամ գրածը խեղաթիւրել։ Կ'արգիլէ նաև մատնել, վնասել, արժանաւորն անուանարկել ու անարժանները գովել։

10. Մի ցանկար տան ընկերի քո, մի ամենայնի որ ինչ նորա իցէ։

Ասով կը պատուիրէ որ մենք չար աչք, չար ցանկու-

թիւն չունենանք մեր ընկերոջ ունեցածին վրայ։ Զնախանձինք անոր բախտաւորութեան, յաջողութեան, յառաջդիմութեան ու առ հասարակ անոր ներքին ու արտաքին յատկութեանց վրայ, չարաչար չգործածենք անոր բարեմտութիւնն ու ընկերական հաւատարմութիւնը, այլ ունենանք սրտի սրբութիւն ու գոհ ըլլանք մեր ունեցածով։

Թելադրութիւններ. — Ա. պատուիրանով Աստուած մեզի ինչ՞ը հրամայած է։ — Բ. ոմ։ — Գ. ոմ։ — Դ. ոմ։ — Ե. ոմ։ — Զ. ոմ։ — Է. ոմ։ — Ը. ոմ։ — Թ. ոմ։ — Ժ. ոմ։

Ե՞րբ չենք մեղանչեր Ա. ին դէմ։ — Բ. ին դէմ։ — Որո՞նք են Աստուծոյ հաճելի գործերը։ — Կիրակի օր ինչ՞ը ընել ներելի է։ — Ե՞րբ չենք մեղանչեր Զ. ին դէմ։

Բ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՈՒՏԻՔ ՈՒ ՊԱՀՔ ՕՐԵՐ

Ուտիք օրեր. — Այն օրերն որոնց համար պահեցողութեան հրաման չկայ և կարելի է ուտել ինչ որ ուզենք՝ կը կոչուին Ուտիք օրեր։ Մեր եկեղեցւոյ ամէնէն հին սովորութիւնն էր Տէրունի տօներն ուտիք օրուան բերել. ուստի երբեմն տօնը կիրակիի փոխուած է և երբեմն ալ Տէրունի տօնին պատճառաւ պահքը խափանուած է։ Այսպէս Յարութեան յիսուն օրերուն և Ծննդեան ութ օրերուն պահքը խափանուած է։

Կերակուրներու պահք. — «Պահք» բառին ճիշտ իմաստն է զգուշանալ, ինքզինք բանէ մը զրկել, ժուժկալել։ Հին Կտակարանի ու Աւետարանի մէջ «Պահք» կը նշանակէ պարզապէս կերակուրէ զգուշանալ, չուտել այսինքն ծոմ պահել։ Բայց յետոյ թեթև կերակուրներով մնանիլը սկսաւ «Պահք» կոչուիլ, և պահքն եղաւ կերակուրներու տեսակին վրայ հիմնուած ժուժկալութիւն մը։ Առաջ միայն բանջարեղէնները ներուեցան, յետոյ ընդեղէնները, վերջապէս բուսականներէ քամուած նիւթը, ինչպէս ձէթ։

Մեր եկեղեցին հիմայ «պահք»ին սահման դրած է բուսական արտադրութիւնները, միակ ու բացառիկ յաւելուած ընդունելով մեղրն որ կենդանական կիթ մըն է։ Ուրիշ եկեղեցիներու մէջ սկսած են ներածել կթեղէն-

ներ, կաթնեղէններ ու ձկնեղէններ որ մեր մէջ Նաւակատիք կոչուած՝ կէս պահքին միայն կը ներուին։

Եկեղեցւոյ պահք. — Մեր մէջ Եկեղեցւոյ պահք մըն ալ կայ որ է Տէրունական ու սրբոց տօն չկատարել, արարողութեանց մէջ միայն ապաշխարութեան կարգ կատարել։ Ընդհանրապէս իւրաքանչիւր եօթնեկի Դշ. ու Ուր. օրերն Եկեղեցւոյ պահքի յատկացուած են։

Պահքի խումբեր. — Ժամանակի տեւողութեան տեսակէտով պահքերն երեք խումբի կը վերածուին, Ա. Օրապահք. Բ. Շաբաթապահք, Գ. Մեծ պահք։

1. Օրապահք. — Շաբթուան Դշ., Ուր. օրերը կը կոչուին Օրապահք. Ասոնք ամէնէն հին ու ամէնէն որոշ պահքի օրերն են։ Հրեայներն ալ ծոմ կը պահէին շաբաթն երկու անգամ, Բշ. ու Եշ.։ առաջին դարերու մէջ Բշ.ին փոխեցին Դշ.ի, որովհետև այդ օրը Տէրը գուշակեց ու յայտնեց իր Զարչարանքի խորհուրդը, և Եշ.ին Ուր.ի, զի Տէրն ինչ որ ըսաւ Դշ. օր իր Զարչարանքին համար՝ Ուր. օր կատարուեցաւ։

2. Շաբաթապահք. — Մեր եկեղեցւոյ յատուկ սովորութիւն է շաբաթ մը ամբողջ պահք պահել։ Լատինք օրական պահքեր ունին, Յոյները մեզմէ աւելի մեծ պահքեր ունին, իսկ մեր մէջ Ներսէս Բ. Բագրեւանդացի կաթողիկոսին կարգադրութեամբ Մեծ պահքէն դուրս եղող պահքերը շաբաթներու վերածուեցան և 12 շաբաթներ սահմանուեցան 12 ամիսներու համար։

Տաղաւարի պահքեր. — Տասներկու շաբաթապահքերէն հինգը սահմանուեցան սա՛ հինգ տաղաւարներու կամ մեծ Տէրունի տօներուն ի պատիւ. — «Ծննդեան պահք», «Ս. Յարութեան պահք» որ է Աւագ շաբաթ, «Վարդավառի պահք», «Աստուածածնի պահք» ու «Խաչի պահք»։

Եղանակի պահքեր. — Զորսն ալ եղանակներու պահք

են, 1 Դարնանամուտի պահք, այսինքն Մեծ պահոց Բ. շաբաթը։ 2. Ամառնամուտի՝ այսինքն Եղիական պահիք։ 3. Աշնանամուտի Պահիք՝ Վարագայ Խաչի պահիք։ 4. Ձմեռնամուտի պահիք՝ Ս. Յակոբայ պահիք։

Միւս երեք շաբաթապահիքեր. — Մնացեալ երեք պահքերն են 1. Առաջաւորաց պահիք զոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ հաստատեց։ Ժողովուրդն այս պահքը կ'անուանէ «Ս. Սարգսի պահք։» 2. Ցիսնակաց պահիք՝ Ծննդեան պահքին Ա. շաբաթը։ 3. Ս. Լուսաւորչի պահիք։

3. Մեծ Պահիք. — Եկեղեցւոյ օրինադրած պահքերուն ամէնէն երկայնն է Մեծ Պահիքն որ կը տեւէ Բուն Բարեկենդանի Բ. օրէն մինչև Աւագ շաբաթ, 48 օր։

Այս պահքին 40 օրերը՝ այսինքն «Բուն Բարեկենդան»ի յաջորդ Բ.էն մինչև «Ղազարու Յարութեան» նախընթաց Ուր. օրը կը կոչուի Բուն Քառասնորդական։ Քառասնորդական պահքը Քրիստոսի քառասնորեայ ծոմապահութեան հետեւողութիւնն է։

Իսկ Աւագ շաբաթը «Մեծ պահք»ին յարակից մասն է ու «Յարութեան շաբաթապահք»ը կը կազմէ։

Երբ Մեծ պահոց մէջ հանդիպին Տեառնընդառաջի ու Աւետման տօնները, եկեղեցական պարզութեանց համար Մեծ պահոց բոլոր հրահանգները կը զատեն, վարագոյրը կը բացուի, բաց պատարագ կը մատուցուի, բայց կերակուրի պահքը չի լուծուիր։

Մեծ պահիքի յատկանիշներն են վարագոյրին փակ մնալն որով ժողովուրդն իր. ապաշխարող կը նկատուի, գոց պատարագն և Արեւագալի, Ճաշու և Խաղաղականի յատուկ երգերն որոնք կերպով մը Ս. Պատարագի հանդիսութեան տեղը բռնած կ'ըլլան։

Աղուհացք. — Եկեղեցւոյ մէջ Մեծ պահոց բուն անունն Աղուհացից է, ինչպէս նաև Աղհացք և Աղց մի։ Այս վերջինը Շարականի մէջ կը գործածուի որ կը նշա-

նակէ «Մեծ պահքի մէջ մի՛ ըսեր»։ Աղուհացք ըսուած է, զի այդ օրերուն մէջ միայն աղուհաց ուտելու էր ամէնէն հին սովորութեան համեմատ։ Շատ տեղեր Մեծ պահքին աղուհաց կ'ուտեն։

Աղուհացը խոնարհանշան է խաղաղութեան, առատութեան ու հպատակութեան։ Արեւելեան սովորութեամբ ժողովրդին կողմէ անոնք իշխաններու և թագաւորներու կը մատուցուին ափսէի մէջ, երբ ասոնք այցելեն ո և է քաղաք կամ գիւղ իրենց իշխանութեան մէջ։

Ծոմ. — Եկեղեցւոյ նախնական սովորութեան մէջ «Պահք» կոչուածը կերակուր չուտելն էր, հետեւաբար կ'իմացուէր ինչ որ հիմայ մենք կ'իմանանք ծոմ բառով, իսկ երբ բոլորովին անօթի մնալ չկրցողներուն ներուեցաւ թեթեւ ու չկշտացնող բանջարեղէն ուտել՝ առանց պահեցողութիւնն աւրուած սեպելու, պահիք բառին իմաստը սեփականուեցաւ մսեղէն ու կենդանական կերակուրներէ զգուշանալ՝ բուսեղէններով բաւականալուն, և ծոմ բառը գործածուեցաւ իբր առանց ուտելու պահեցողութիւնը։

Եկեղեցւոյ մէջ պահքէն զատ ծոմ ալ կը պահուի Առաջաւորաց հինգ օրերուն Մեծ պահքի իրաքանչիւր եօթնեկին առաջին հինգ օրերուն և մինչև Ճաշու ժամ. իսկ մնացեալ բոլոր պահքերը ծոմ չունին։ Ս. Հաղորդութենէ առաջ ծոմ պահելու է։

Ծոմի օրերը Ս. Պատարագ չի մատուցուիր։

Միջինք. — Մեծ պահքի կէսն որ կը հանդիպի ճիշդ 24րդ. օրը Դշ. կը կոչուի Միջինք։ Այդ օրը Մեծ պահոց ճոխ սեղաններ տեղի կ'ունենան կամ արտաքոյ կարգի բաներ մը կ'եփեն, գոնէ հատիկ կը խաչեն։

Մեծ պահիքի կիրակիները նուիրուած են մէյմէկ յիշատակի։

1. Բուն բարեկենդանը = Առաջին կիրակին յիշա-

տակ է Դրախտին, այսինքն մարդկային կեանքի ամէնէն երջանիկ ու ամէնէն կատարեալ մէկ վիճակին որուն մէջ ապրեցան Ադամ ու Եւա։

2. Արտաքսման կիրակին = Բ. կիրակին, այսինքն նախածնողքին արտաքսումն այդ երջանիկ կեանքի դրախտէն ու մարդոց հիմակուան քրտինքի ու աշխատութեան կեանքի սկզբնաւորութիւնը։

3. Անառակի կիրակին = Գ. կիրակի Անառակ որդւոյ ծանօթ առակին տրուած է խորհրդաւորութիւն մը։

4. Տնտեսի կիրակին = Դ. կիրակի՝ Մարդկային շուկայի կեանքին իրողութիւնները բացատրելով՝ Եկեղեցին կը սորվեցնէ թէ ինչպէս ապրելու է։

5. Դատաւորի կիրակին = Ե. կիրակին կը յիշատակուի Դատաւորի առակը։

6. Դաղստեան կիրակին. Մեր եկեղեցին «Դալուստ» անունով կը ծանէ Քրիստոսի սա՛ տնօրինութիւնները, 1 Քառասնօրեայ գալուստ ի տաճարն։ 2. Գալուստ յերուսաղէմ, 3. Գալուստ ի չարչարանս, Աւագ շաբաթ, 4. Գալուստ ի փրկութիւն=Յիսանց կիրակամտի խրիկունները, 5. Գալուստ ի փոխումն = Ս. Աստուածածին։ 6. Դաղստեան կիրակին։

Այս իւրաքանչիւր Դալստեան Ս. Աստուածը կ'երգենք «Որ եկիր և գալոց ես, ողորմեա՛ մեզ»։

Շարականները.

Անառակին. — «Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրդ գթած. մեղաք յերկինս և առաջի քոյ, քաւիչ յանցանաց։ Ե՛լ ընդ առաջ սիրով, գրկեա՛ համբուրիւ. մաքրեա՛ զմեզ ի մեղաց մերոց։»

Տնտեսին. — «Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին և ի նմա հաստատեցեր տնտես ի պէտս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։»

Դատաւորին. — «Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զմիտս մեր՝ դատել զհոգի և զմարմին արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց, Քրիստոս։»

Դալստեան. — «Որ զխորհուրդ քո գալստեանդ յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւքն Իսրայէլի, զոր ընտրեցեր յետ Մովսիսի, որք խօսեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք։ Տո՛ւր մեզ, Փրկիչ, զողորմութիւն և զմեղաց զթողութիւն։»

Ցիսնակը.— Ցիսուն օրերու միջոց մընէ որ կը յառաջէ Ս. Ծննդեան տօնն և որ երբեմն Մեծ պահքի պէս ամբողջովին պահք էր, բայց հիմայ սովորական Դ. և Ուր. էն զատ երեք շաբաթապահքերու վերածուած է։ Ա. շաբաթը՝ Ցիսնակաց պահիք, Բ.ը՝ Զմեռնամուտի = Ս. Յակոբայ պահիք, Գ.ը՝ Ս. Ծննդեան պահիք։ Յունուար 6էն ետեւ համրելով՝ յիսուն օրեր Նոյ. 18 ին կը յանգին, անոր մերձակայ կիրակին ալ կ'ըլլայ Ցիսնակաց բարեկենդան որ կրնայ հանդիպիլ Նոյեմբեր 15էն մինչև Նոյ. 21։

Ս. Յակոբայ պահիք.— Այդ անունը կը տրուի Ցիսնակաց Գ. եօթնեակին հանդիպող շաբաթապահքին։ Զորս եղանակներէն՝ Զմեռնամուտին, և միայն նոյն եօթնեակին շաբաթ օրը Ս. Յակոբ Մծբնայ հայրապետին տօն ըլլալուն՝ պատահաբար այդ անունն առած է։

Եղիական պահիք. — Հայ եկեղեցւոյ կատարած շաբաթապահքերէն չորսը տօնական հանդիսաւորութիւն չունին, պարզապէս եղանակներու պահքեր են։ Ասոնցմէ մէկն է Եղիական պահիքը = Ամրան պահիք։ Եղանակներու պահքերը կը տեւեն Բշ. — Ուր. և Շբ. օր նաւակատիք չունին, որովհետև տէրունի չեն։

Եղիական պահք կոչուածէ պահքին յաջորդ կիրակին Եղիա մարգարէի վերացման յիշատակը կատարուելուն համար, և բնաւ պահքը յարաբերութիւն չունի Եղիա Մարգարէին հետ։

Թելադրութիւններ. — Ո՞ր օրերն ուտիք են։ — Ի՞նչ սովորութիւն կայ։ — Ե՞րբ պահք չի պահուիր։ — Ի՞նչ կը նշանակէ պահք։ — Ի՞նչ փոփոխութիւն կրեց։ — Եկեղեցին հիմայ ի՞նչպէս կը սահմանէ պահքը։ - Ո՞րն է եկեղեցւոյ պահքը։ — Պահքի քանի՞ խումբ կայ։ - Ո՞րոնք են օրապահքը։ Շաբաթապահքը։ — Ո՞րոնք են Տաղաւարի պահքերը։ — Եղանակին պահքը։ — Ո՞րն է ամենէն Մեծ պահքը։ — Ե՞րբ կ'սկսի և ե՞րբ կը վերջանայ։ — Մեծ պահքին մէջ ե՞րբ վարագոյրը կը բացուի։ — Ո՞րոնք են Մեծ պահքի յատկանիշերը։ — Ի՞նչ է Ծոմը։ — Ե՞րբ ծոմ կը պահեն։ — Ծոմի օրեր պատարագ կը մատուցո՞ւի։ Ի՞նչ կը նշանակէ Աղուհացք։ — Ինչի՞ խորհրդանշան է։ — Ո՞ր պահքն Աղուհացք կը կոչուի։ — Ի՞նչ կը նշանակէ Միջինք։ — Ո՞ր օրն է։ — Մեծ պահքի կիրակիներն ի՞նչի նուիրած են։ — Ա. Է. Բ. Դ. Դ. Ե. Ե. Զ. — Ո՞րն է իւրաքանչիւրին շարականը։ — Ի՞նչ կը նշանակէ Յիսնակ։ — Ո՞րն է Ս. Յակոբայ պահքը։ — Եղիսաբեթ պահքը։ — Ինչո՞ւ այսպէս կոչուած են։

Բ. ՆԱՒԱԿԱՏԻՔ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Նաւակատիք անունն իր բառական իմաստով կը նշանակէ «նոր շինել», «նոր կերտել»։ Ընդհանուր սովորութիւն եղած է որ նոր կերտուած ու նոր աւարտած շէնքի մը բացումը հանդիսաւորապէս կատարուի և այս առումով նորաշէն տաճարի, տան և այլն բացման ու նուիրագործութեան հանդէսը կոչուեցաւ Նաւակատիք։ — Ասոր համեմատ նորաշէն եկեղեցւոյ Նաւակատիք կը կատարուի և միայն Նաւակատիքի տարեդարձի հանդէսն ալ «Նաւակատիք» կը կոչուի։

Նաւակատիքի օրեր. — Մեր եկեղեցին նաւակատիքները յարմարագոյն կերպով սկսաւ կատարել կամ յիշատակել մեծահանդէս ծոներու նախընթաց օրերը, շաբաթապահքէն վերջ. մեղէնի արգելքն ամուր պահեց, ձկնեղէնի ու կաթնեղէնի գործածութիւնը ներեց։

Այս պարագայէն առնելով՝ մեղմացեալ պահքի կերակուրներն ալ «Նաւակատիք» կոչուեցան։

Նաւակատիքն իբրև առանձին ծոն նշանակուած է Խաչվերացի ծոնին նախընթաց օրն որ է Երուսաղէմի Ս. Յարութեան մեծ տաճարին Հեղինէ դէլխոյին ձեռքով շինուելէն ետք նուիրագործելուն և օծուելուն նաև Խաչի վերադարձին տարեդարձն որ բոլոր Քրիստոնէութեան համար կարեւոր յիշատակ մ'ըլլալով՝ հաստատուն ծոն ունեցաւ։

Նաւակատիքի օրեր են նաև հինգ տաղաւարներու նախընթաց շաբաթ օրերը։

Նաւակատիքի կերակուր. — Նաւակատիքի օրերուն միայն ներելի է գործածել կաթնեղէն ու ձկնեղէն կերակուր։

Բարեկենդան. — Շաբաթապահքերը յառաջող վերջին ուտիք օրը կը կոչուի Բարեկենդան։

Բարեկենդաններն են 1. Առաջաւորաց բարեկենդան։ 2. Եղիսական պահոց բարեկենդան։ 3. Լուսաւորչի բարեկենդան։ 4. Վարդավառի բարեկենդան։ 5. Սուրբ Աստուածածնի բարեկենդան։ 6. Խաչի բարեկենդան։ 7. Վարագայ=Ս. Գէորգի բարեկենդան։ 8. Ցիսնակաց բարեկենդան։ 9. Ս. Յակոբայ բարեկենդան։ 10. Ծննդեան բարեկենդան։

Ամենքը կիրակի օր կը հանդիպին, բացի Ծննդեան բարեկենդանէն։

Բուն բարեկենդան. — Բարեկենդաններու գլխաւորն է Բուն Բարեկենդանն որուն կը յաջորդէ Մեծ Պահքը։ Այդ օրուան ուրախութիւնն ուրիշ բարեկենդաններէ մեծ ըլլալուն՝ այս բարեկենդանը կոչուեցաւ Մեծ Բարեկենդան։

Եկեղեցին ալ նոյն եօթնեակին մէջ աւելի նշանաւոր ծոներ՝ Հայոց սուրբերը դրած է։

Աբեղաթող. — Նոյն իսկ վանքերու աբեղայներն ալ իրենց խստակեցութիւնը կը թուլցնեն Մեծ բարեկենդանին. ասկէ ծագած է այս օրուան «Աբեղաթող» անունը։

Բուն Բարեկենդանին կիրակիի խորհուրդը. — *Մեծ Պահքի ապաշխարութեան եկեղեցական երգերը կ'սկսին ու վարագոյրը կը փակուի շաբաթ իրիկունը, կիրակի օրն եկեղեց. պահք կ'սկսի. բայց ոչ կերակուրի պահք, որովհետև Բուն Բարեկենդանի կիրակիի խորհուրդը Նախահայրերուն՝ Ադամի ու Եւայի Դրախտին երջանիկ կեանքի յիշատակութիւնն է:*

Բակլախորան. — *Մեծ Պահոց առաջին օրն՝ այսինքն Բուն բարեկենդանի յաջորդող երկուշաբթին կը կոչուի Բակլախորան: Այսպէս կը կոչուի, որովհետև մինչև հիմայ վանքերու մէջ նախընթաց կիրակի իրիկունը, վերջին ուտիքի ընթրիքէն ետք, հանդէսով բակլայ կը պարպեն մեծ կաթսայի մը մէջ, Բչ. օրը կը խորովեն ու զայն աղքատներու կը բաշխեն: Բակլախորան կը նշանակէ բակլայ ուտել:*

Մեռելոց or — *Հայ եկեղեցւոյ մէջ ննջեցեալներուն համար յատուկ յիշատակութիւն ու աղօթք կ'ըլլան հինգ տաղաւարներու Բ. օրերն որոնք «Հրամայեալ հանդստեան տօն» ալ եղած են՝ հաւատացեալներուն դիւրութիւն ընծայելու, իրենց մեռեալներուն այցելելու և անոնց համար աղօթելու:*

Մեռելոց օր է նաև Բուն բարեկենդանի նախընթաց վերջին ուտիք՝ Եչ. Ս. Վարդանաց զօրավարաց օրը:

Տարւոյն մէջ ամէն պահքի ուրբաթներն ալ ննջեցեալներուն յիշատակ կ'ըլլայ «Հանդստեան հարց» ըսելով:

Թելադրութիւններ. — Ի՞նչ կը նշանակէ Նաւակատիք: — Ո՞ր հանդէսը Նաւակատիք կը կոչուի: — Ո՞րոնք են Նաւակատիքի օրերը: — Նաւակատիքի կերակուրնե՞ը: — Ի՞նչ կը նշանակէ Բարեկենդան: — Քանի՞ բարեկենդան կայ: — Ո՞րն է գլխաւորը: — Ո՞րն է Աբեղաթողը: — Ի՞նչ է Բուն բարեկենդանին խորհուրդը: — Ի՞նչ կը նշանակէ Բակլախորան: — Ի՞նչ է Մեռելոց օրը: — Ո՞րոնք են Մեռելոցները: — Ուրիշ օր մը կա՞յ:

Գ. ՏՕՆԻ ՕՐԵՐ

—

Տօն. — *Եկեղեցին Տէրունի տօները սահմանած է այն նպատակաւ որ յիշենք այն անձերն որ Քրիստոնէական հաւատքի հիմը կը կազմեն, և մարդ կեանքի հոգերուն մէջ բարոյական մխիթարութիւն մը ունենայ և Աստուծոյ շնորհակալութիւն մատուցանէ Անոր մեզի տուած բարութեանց համար: Սուրբերու տարեդարձները սահմանուած են յաւերժացնելու առաքինի մարդոց յիշատակը, որպէս զի աշխատինք անոնց կեանքի օրինակին նմանիլ:*

Տօներն երկու տեսակ են, Տէրունական ու Սրբոց:

Տէրունի տօներ. — *Քրիստոսի անօրինութիւնք կը կոչուին* Տէրունի տօներ, *ինչպէս Աւետում, Աստուածայայտնութիւն, Անուանակոչութիւն, Տեառնընդառաջ, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում, Հոգեգալուստ, Այլակերպութիւն, Ս. Խաչի, Ս. Աստուածածին, նաև Եկեղեցւոյ տօները.*

Սրբոց յիշատակներ. — *Քրիստոնէական եկեղեցւոյ որ Նոր ուխտի ալ կը կոչուի՝ սուրբերուն տարեդարձը կը կոչուի «Սուրբերու յիշատակ»:*

Հայ Եկեղեցին կը յիշատակէ նաև Հին ուխտի նահապետներն ու մարգարէներն որոնք իրենց առաքինի գործերով Քրիստոսի անօրինութեանց ակնարկեցին ու զանոնք գուշակեցին:

Կիրակի or ու Լուր or. — *Եկեղեցւոյ համար Տէրունի տօները բոլորովին կիրակի են, այսինքն այդ օրերը սուրբ են և կը կոչուին Or Արգոյ = գործի օր չեն: — Մարտիրոսաց տօները բոլորովին կիրակի չեն, սոնց շատ քիչ մասը Կիրակի եղած է:*

Այն օրերն որ կիրակի չեն՝ Լուր or կ'ըսուին եկեղեցական բացատրութեամբ։ — Կիրակի շաբթուան առաջին օրն է, հին միաշաբաթն որ Քրիստոսի Յարութեան օրն ըլլալուն՝ Կիրակի = Տէրունի անունն առաւ և բոլոր Քրիստոնէութեան համար հրամայեալ հանգստեան ու Աստուածային պաշտման նուիրուած օրն եղաւ։

Հայ Եկեղեցին ի սկզբանէ անտի նախադասեց ո և է Տէրունի մեծ տօն կատարել կիրակի օր և շաբթուան մէջ ուրիշ հանգստեան օր չունենալ։ Միայն վերջին դարերուն մէջ հետզհետէ շաբթուան լուր օրերուն մէջ ալ հրամայեալ հանգստեան օրեր սկսան ունենալ։ Ասոնք այնչափ կիրակիի հետ նոյնացած են որ ժողովուրդը մինչև հիմայ այդ օրերուն համար կը գործածէ «կիրակի բռնել» բացատրութիւնը։ Այսպիսի օրեր որ Հրամայեալ տօն ալ կը կոչուին՝ Օրացոյցի մէջ խաչանիշ կը նշանակուին։

Եթէ շաբթուան օրերէն մէկը կիրակիի նման Տէրունական դառնայ, Լուր or ըլլալէ կը դադրի։ Իսկ եթէ Տէրունի տօն մը շաբթուան մէջ հանդիպելով՝ տօնական հանգամանք չունենայ, ասիկա լուր օր ըլլալէ չի դադրիր և կը կոչուի Տէրունի ի լուր։

Լուր օրը գործի օր է, գործէ դադրելու հրաման չկայ, կամ հրամայեալ տօն չէ։

Շաբթուան օրերուն նուիրականութիւնը. — Մեր եկեղեցին շաբթուան իւրաքանչիւր օրուան առանձին նուիրականութիւն տուած է, Ս. Ներսէս Շնորհալի այս օրերուն մէյմէկ շարական–երգ նուիրած է. Բողոքականները միայն կիրակի օրը նուիրական կը համարին։

1. Կիրակին նուիրուած է Ս. Յարութեան ու Արարչութեան Ա. օրուան։ Աստուած Ա. օրը ստեղծեց լոյսը։ Այս օրուան երգն է Նորաստեղծեալ։

2. Երկուշաբթի օրը միշտակ է Հրեշտակներու և Արարչութեան Բ. օրուան։ Այս օրուան երգն է Արարչական։

Աստուած Բ. օրը ստեղծեց տեսանելի երկինքը՝ Հաստատութիւնը։

3. Գշ. օրը՝ մարգարէներու, Ս. Յովհաննու ու Արարչութեան Գ. օրուան։ Աստուած Գ. օրը ջուրը հողէն զատեց և հրամայեց հողին որ արտադրէ բոյսերը։ Այս օրուանն է Էական։

4. Դշ. օրը՝ Կուսի Աւետման ու Արարչութեան Դ. օրուան։ Աստուած Դ. օրը ստեղծեց արևը, լուսինն ու աստղերը։ Այս օրուան երգն է Խաւարն անգոյ։

5. Եշ. օրը՝ Առաքեալներու և Արարչութեան Ե. օրուան։ Աստուած Ե. օրը ստեղծեց թռչուններն ու ձկները։ Այս օրուան երգն է Ծառագայթեալ։

6. Ուրբաթ օրը՝ Քրիստոսի Թաղման, Արարչութեան Զ. օրուան։ Աստուած ստեղծեց Զ. օրը չորքոտանի կենդանիները, սողուններն ու մարդը։ Այս օրուան երգն է Զհանդուրժեալ։

7. Շաբաթ օրը՝ որ է եօթներորդ օրը, բան մը չստեղծեց, այլ հանգստացաւ։ Ասոր համար այդ օրը կը կոչուի Շաբաթ որ «հանգիստ» կը նշանակէ։ Աստուած օրհնեց ու սրբեց այդ օրն որ գործէ դադրինք և միայն Աստուծոյ ծառայենք։ Այս օրուան երգն է Տէրն յեռ Սեղծման։

Անշարժ տօներ ու շարժական տօներ։ — Տօնացոյցի հաշիւներով Տէրունի քանի մը տօներու հաստատուն օրերու ամսաթիւեր որոշուած են. ասոնք են Անշարժ տօները։

Միւս տօներն որ որոշուած հաստատուն օր ու ամսաթիւ չունին՝ կը կոչուին Շարժուն=Շարժական տօներ։

Շարժական տօները Զատկի կապուած են, այսինքն Զատիկը քանի օրերու մէջ եա և առաջ որ շարժի կամ տեղափոխուի, շարժական տօներն ալ Զատկէն առաջ կամ ետքը կը շարժին և կամ կը տեղափոխուին։

ԱՆՇԱՐԺ ՏՕՆԵՐ

1. Յունուար 5, Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Քրիստոսի։

2. Յունուար 6, Ծնունդ և Աստուածայայտնութիւն Քրիստոսի։

3. Յունուար 7, 8, 9, 10, 11, 12 օրեր Ծննդեան ու Աստուածայայտնութեան։

4. Յունուար 13, Անուանակոչութիւն Քրիստոսի։

5. Փետրուար 14, Տեառնընդառաջ։

6. Ապրիլ 7, Աւետում Ս. Աստուածածնի։

7. Սեպտ. 8, Ծնունդ Ս. Աստուածածնի։

8. Նոյեմբեր, 21 Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն։

9. Դեկտեմբեր 9, Յղութիւն Ս. Աստուածածնի։

Տեսակ մը անշարժ խումբ կարելի է համարել նաև Վերափոխումը, Խաչի տօներն ու Յիսնակաց բարեկենդանը։ Անշարժ են, զի տօնելու համար՝ յատուկ տօներ ունին, շարժական են, զի այդ յատուկ օրերն ամէն տարի նոյն ճշդութեամբ իրենց տարեդարձը չեն ունենար։

Ս. Աստուածածնի Վերափոխումն անշարժ կերպով Օգոստոս 15ին պէտք է տօնուի, բայց որովհետև յատկապէս կիրակի պէտք է ըլլայ տօնի օրը, և Օգոստոս 15ը կարելի չէ որ ամէն տարի կիրակի հանդիպի, Օգոստոս 15էն կամ երեք օր առաջ կամ ետքը կը շարժի, Օգոստոս 12-18 օրերու միջոցին, և այդ 7 օրերուն մէջ հանդիպող կիրակին կը տօնուի։

Ս. Խաչի Վերացման տօնի բուն օրն է Սեպտեմբեր 14, բայց որովհետև կիրակի օր պէտք է տօնուի, միևնոյն կերպով Սեպտ. 14 էն կամ երեք օր առաջ կամ երեք օր ետքը, այսինքն Սեպտ. 11-17 եօթն օրերու մէջ հանդիպող կիրակին կը տօնուի։

Յիսնակաց բարեկենդանի օրն ալ Նոյեմբեր 18ը որոշուած է, որովհետև Նոյեմբեր 18էն մինչև Յունուար 6 ճիշդ յիսուն օր=Յիսնակ է։ Բայց որովհետև Յիսնակը չաբաթապահք ունի և իր բարեկենդանն անպատճառ կիրակի պիտի ըլլայ, դարձեալ Նոյեմբեր 18էն կամ երեք օր առաջ կամ երեք օր ետքը, այսինքն Նոյեմբեր 15-21, եօթն օրերու մէջ հանդիպող կիրակին բարեկենդան կ'ըլլայ։

Տօներու օրը. — Տօները, ըլլա՛յ Տէրունի, ըլլայ Մարտիրոսաց, ընդհանրապէս կը տօնուին ուտիք օրեր։

Բայց կան տօներ որ պահոց օրերու մէջ ալ կը կատարուին։ Պահոց օրերու մէջ տօնուածները հետեւեալներն են։

1. Ս. Բարսեղ հայրապետ՝ Ս. Ծննդեան պահոց չաբաթ օրը։

2. Յովհան Մարգարէ ու Նինուէացւոց յիշատակը՝ Առաջաւորաց Ուր. օրը։

3. Մեծ պահոց բոլոր չաբթիները սրբոց նուիրուած են։

4. Ամբողջ Աւագ շաբաթը տնօրինական յիշատակներու նուիրուած է։ Աւագ Եչ. կիրակի է։

5. Ս. Հոգւոյն գալստեան յիշատակին նուիրուած է Եղիական կոչուած պահոց օրերը։

6. Լուսաւորչի պահքին Բշ. Գշ. Եշ. Շբ. օրերը նմանապէս սուրբերու յիշատակին յատկացուած են։

7. Ս. Յակոբայ պահքը նմանապէս։

Տաղաւար. — Այն հինգ մեծ տօներն որ չաբաթապահք, նաւակատիք, մեռելոց և քանի մը օր չարունակութիւն ունին, ինչպէս Ծննունդը, Զատիկը, Այլակերպութիւնը, Վերարերումը, Խաչվերացը կը կոչուին Տաղաւար։ Ոմանք կը կարծեն թէ ինչպէս որ Հին ուխտի մէջ մեծահանդէս տօնախմբութիւն մըն էր Տաղաւարահարքը, նոյն են Քրիստոնէութեան համար այդ տօները։

Այս տօներուն տաղաւարներ կը հաստատեն և տօնավաճառի նման հանդէսներ կը կազմակերպեն։ Ասկէ է իր «Տաղաւար» անունը։

Թելադրութիւններ. — Ի՞նչ կը նշանակէ տօն. — Եկեղեցին ինչ՞ու սահմանած է. — Որո՞նք կը կոչուին Տէրունի տօն։ — Տօներն ի՞նչ են. — Կիրակին ի՞նչ կը կոչուի։ — Որո՞նք են լուր օրերը։ — Քանի՞ տեսակ տօն կայ։ — Որո՞նք են անշարժ տօները։ — Որո՞նք նաև տեսակ մը անշարժ տօներ են։ — Տօնի օրերն ի՞նչ են։ — Ուսի՞ք թէ պահք։ — Ո՞ր տօները պահքի օրեր կը հանդիպին։ — Ո՞ր տօները Տաղաւար կը կոչուին։ — Ի՞նչ կը նշանակէ Տաղաւար։ — Որո՞նք են հրամայեալ հանգստեան օրերը։ — Ի՞նչ կը նշանակէ կիրակի բառը։ — Ո՞ր օրն է։ — Ո՞րն է «Տէրունի ի լուր»։ — Եօթնեկին օրերն ինչի՞ նուիրուած են։ — Բ՝շ. — Գ՝շ.՝. — Դ՝շ.՝. — Եշ.՝. — Ուր.՝. — Շբ.՝. — Բողոքականներն այս նուիրականութիւնն ունի՞ն։

Դ. ՏԷՐՈՒՆԻ ՏՕՆԵՐ

ՏՆՈՒՆԴ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Հրէաստանի Նազարէթ քաղքին մէջ կ'ապրէին այր և կին՝ Յովակիմ ու Աննա. երկուքն ալ բարեպաշտ էին. Յովակիմ Դաւթի ցեղէն էր ու Աննա Ղեւեայ ցեղէն։ Ասոնք զաւակ չունէին, այս բանը շատ կը տրտմեցնէր զանոնք. ուստի անոնք իրենց աղօթքին մէջ կը խնդրէին Աստուծմէ որ զաւակ մը տայ իրենց, և ուխտ ըրին որ եթէ Աստուած կատարէ իրենց խնդիրքը, զայն Աստուծոյ ընծայեն։ Աստուած լսեց անոնց աղօթքն ու տուաւ անոնց աղջիկ մը. զայն անուանեցին Մարիամ։

Մարիամու ծնունդը կը տօնենք Սեպտ. 8ին ո՛ր օր ալ հանդիպի։ Այդ տօնը ԺԴ. դարուն մեր մէջ մտաւ։

ԱՂՕԹՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի քո, Ս. Աստուածածին.
Եւ աղաչեմք զԱնարատ զկոյսդ,
Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց.
Եւ աղաչեա զՄիածին Որդիդ՝
Փրկել զմեզ ի փորձութենէ
Եւ յամենայն վտանգից մերոց։

Թարգմ. — Առջեւդ կ'իյնանք, Ս. Աստուածածի՛ն, ու կ'աղաչենք Անարատ կոյսիդ։ Բարեխօսէ մեզի համար և խնդրէ՛ քու Միածին Որդիէդ որ մեզ փորձանքներէ ու ամէն տեսակ վտանգներէ ազատէ։

Այս աղօթքին նշանակութիւնը. — Այս աղօթքին մէջ Ս. Կոյս Մարիամը կ'անուանենք, 1. Աստուածածին, որովհետև ա՛ն ծնաւ Յիսուսն որ էր Աստուած ու մարդ։ 2. Անարատ, որովհետև անիկա սուրբ ու արդար է։ 3. Ս. Աստուածածնի բարեխօսութիւնը կը խնդրենք իր Միածին որդւոյն քով որ փրկէ մեզ ամէն տեսակ փորձանքներէ ու մեր վրայ գալիք վտանգներէ։ 4. Միածին կ'անուանենք Յիսուսը, որովհետև Աստուած Անկե զաս որդի չուներ ըստ էութեան, ինչպէս որ Ս. Կոյս Մարիամն ալ ուրիշ որդի չուներ ըստ մարդկութեան։

ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Երբ Ս. Կոյսն Մարիամն երեք տարեկան եղաւ, ծնողքը զայն տարին Երուսաղէմ՝ Աստուծոյ ընծայելու համար, որպէս զի հոն նուիրուած այրիներու և կոյսերու հսկողութեան ներքև Աստուածպաշտութեան մէջ զարգանայ ու ծառայէ տաճարին։ Քահանայապետը զայն ընդունեց ու օրհնեց։ Մարիամ մեծցաւ ու պարապեցաւ աղօթքի, Ս. Գիրք կարդալու ու ձեռագործի։

Այս Ընծայման = Նուիրման տօնը կը կատարենք հաստատապէս Նոյեմբեր 21ին, ո՛ր օր ալ հանդիպի։

Այդ տօնը հազիւ երեք դարէ ի վեր մեր մէջ մուտ գտած է։

ԱՒԵՏՈՒՄ = ԱՒԵՏԵԱՑ ՏՕՆ

Ս. Կոյս Մարիամը դեռ տաճարին մէջ էր, երբ անոր ծնողքը վախճանեցաւ։ Անիկա որբ մնաց։ Երբ անիկա 4 տարեկան եղաւ, անոր դաստիարակներն ուզեցին զայն ամուսնացնել։ Բայց անիկա ըսաւ թէ ուխտած է Աստուծոյ միշտ կոյս մնալ։ Այն ատեն քահանայները Ս. Կոյսը յանձնեցին իր ազգականներէն Ծերունի Յովսէփին որուն յայտնեցին նաև Ս. Կոյս Մարիամին ուխտը։

Ծերունի Յովսէփ հիւան էր ու կը բնակէր Գալիլիոյ Նազարէթ քաղաքը։ Ս. Մարիամ անոր տունը գնաց և հոն բնակեցաւ։

Օր մը, երբ Ս. Կոյսը կ'աղօթէր, Գաբրիէլ Հրեշտակապետն անոր երեւցաւ ու ըսաւ. «Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Տէրը քեզի հետ է, կիներուն մէջ դուն օրհնուա՛ծ ես։ Ս. հոգին պիտի գայ քու վրադ ու Բարձեալ Աստուծոյ զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի։ Դուն որդի մը պիտի ունենաս ու զայն պիտի անուանես Յիսուս։ Ան մեծ պիտի ըլլայ և պիտի կոչուի որդի Բարձեալին։ Աստուած Անոր պիտի տայ Դաւթի թագաւորութիւնն որ վերջ պիտի չունենայ։» Ս. Կոյս Մարիամը խոնարհութեամբ պատասխանեց. «Թո՛ղ այնպէս ըլլայ». հրեշտակը հեռացաւ։

Աւետեաց տօնն անոր յիշատակն է։ Երբ Աստուածայայտնութեան տօնը բնաւ բաժանում չէր կրած, տօնին Ճրագալոյցի օրը յատկապէս Աւետման նուիրուած էր։ Աստուածայայտնութեան տօնին Դ. օրուան չարականը յատկապէս Աւետման յիշատակը կը պահպանէ։ Աւետումը

կատարուեցաւ Դշ. օր և ամէն Դշ. օր Տիրամօր Աւետման և Քրիստոսի մարդեղութեան նուիրուած է։

Աւետման տօնը կը հանդիպի միշտ Ապրիլ 7ին։ Յոյներն ու Լատինները Քրիստոսի Ծնունդը Դեկտ. 25ին դրած ըլլալով՝ Աւետումը Մարտ 25ին կը կատարեն, Յղութենէն Ծնունդը 276 օրուան միջոց մը կը դնեն, մինչ մեր եկեղեցին Ապրիլ 7էն Յունուար 6 կը հաշուէ 275 օր։

ԾՆՈՒՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ

Հռոմայեցւոց Օգոստոս կայսրն ուզեց աշխարհագիր=մարդահամար ընել։ Անիկա հրամայեց որ իւրաքանչիւր հրեայ երթայ իր հայրենի քաղաքը։ Յովսէփ ու Ս. Կոյս Մարիամ Դաւթի ցեղէն էին ու գացին Նազարէթէն Բեթղեհէմ։ Անոնք քաղաքին մէջ իջնելու տեղ չգտան ու բնակեցան մսուրի մը մէջ ուր հովիւները կը պահէին իրենց ոչխարները ցուրտ ու անձրեւային եղանակներուն։ Այդ մսուրին մէջ գիշերը տասնեւօթ տարեկան Ս. Կոյս Մարիամ ծնաւ իր Միածին Որդին Յիսուսը։ Անիկա փաթթեց Յիսուսը խանձարուրով ու դրաւ Մսուրին մէջ։

Այդ գիշեր Բեթղեհեմցի հովիւները բաց դաշտի մէջ կը պահէին իրենց ոչխարները։ Տիրոջ հրեշտակն անոնց երեւցաւ ու ըսաւ. «Մի՛ վախնա՛ք, ես ձեզ կ'աւետեմ մեծ ուրախութիւն մը. — Դաւթի քաղաքին մէջ ձեզի համար ծնաւ Փրկիչը։ Դուք պիտի գտնէք մանուկը խանձարուրով փաթթուած ու մսուրի մէջ դրուած։» Այդ միջոցին յանկարծ շատ հրեշտակներ երեւցան երկնքի մէջ ու սկսան երգել «Փառք ի բարձունս Աստուծոյ, և երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։ Երբ հրեշտակներն երկինք վերացան, հովիւները գացին ու

հրեշտակին ըսածին պէս գտան Մանուկը։ Երկրպագութիւն ըրին ու ետ դարձան։

Այս տօնն որ կը կատարուի Յունուար 6ին՝ կը կոչուի Ծնունդ, նաև Տօն Աստուածայայտնութեան։ Մեր Հայաստանեայց եկեղեցին զայն միասին կը տօնէ Քրիստոսի Մկրտութեան հետ, նախնական եկեղեցւոյ համեմատ։ Տօնն ունի իր Ութօրէքն իբրև Մեծ տօն ու Ճրագալոյց ալ իբրև նախապատրաստական օր։

Յոյներն ու Լատինները կը տօնեն Դեկտ. 25ին։

Նորածին մանուկն իր Ծննդեան Ը. օրը կոչուեցաւ Յիսուս։ Այդ տօնը կը կոչուի «Տօն Անուանակոչութեան» որ միշտ Յունուար 13ին կը հանդիպի ու հրամայեալ տօն է։

Ծննդեան Շարականը.

«Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ։ Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի։

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»։

Թելադրութիւններ. Որո՞նք են Նազարէթի բարեպաշտները։ — Ո՞ր ցեղէն էին։ — Զաւակ ունէ՞ն։ — Ի՞նչ ըրին։ — Աստուած ի՞նչ ըրաւ։ — Նորածնին անունն ի՞նչ դրին։ — Ե՞րբ կը տօնենք Ս. Աստուածածնի ծնունդը։ — Ի՞նչպէս կ'աղօթենք Ս. Աստուածածնի։ — Ի՞նչ է նշանակութիւնն այս աղօթքին։ — Փաբրիել հրեշտակապետն ե՞րբ և որո՞ւ աւետեց։ — Ի՞նչ աւետեց։ — Հայերն ե՞րբ կը կատարեն։ — Յոյներն ու Լատիններն ե՞րբ։ — Ծննդեան ո՞ր օրուան շաբաթն Աւետման նուիրուած է։ —Ինչո՞ւ։

* * *

Հաւատացեալ Օգոստոս կայսրն ի՞նչ ընել ուզեց։ — Որո՞նք գացին Բեթղեհէմ և ինչո՞ւ։ Ո՞ւր իջան։ — Հոն գիշերն ո՞վ ծնաւ։ — Հովիւներն ի՞նչ կ'ընեն այն միջոցին։ — Տիրոջը հրեշտակն ի՞նչ աւետեց։ — Հովիւներն ի՞նչ ըրին։ — Այդ տօնն ի՞նչ կը կոչուի։ — Մենք ե՞րբ կը կատարենք։ — Ուրիշ եկեղեցիներ ե՞րբ։ — Քանի՞երորդ օրն է Անուանակոչութիւնը։ — Ո՞րն է Ծննդեան շաբաթը։

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հրեայները Մովսէս մարգարէին օրէնքով իրենց առու անդրանիկ զաւակները ծնունդէն քառասուն օր ետքը կը տանէին Երուսաղէմի տաճարն ու Տիրոջը կը ներկայացնէին։

Օրինական զոհը կը մատուցուէր ու կը սրբուէր տղաքեր մայրը. նորածինն ալ օրհնել կու տար քահանային։ Միւս կողմէ ուրիշ օրէնք մը կը հրամայէր որ անդրանիկներն ընծայուին՝ տաճարին ծառայելու համար. իսկ երբ Ղեւեայ ցեղն ամբողջովին տաճարի ծառայութեան հրաւիրուեցաւ, ծնողք պարտաւոր մնացին իրենց անդրանիկներուն համար փրկանք մը տալ ի նպաստ Ղեւտացւոց ու անդրանիկին ազատել։ Հարուստներն արջառ, իսկ աղքատները զոյգ մը տատրակ կուտային իբրեւ փրկանք։ Այդ երկու օրէնքի կատարումն էր զոր ըրաւ Մարիամ Աստուածածին Քրիստոսի Ծննդեան քառասունը լրանալուն։

Երբ Յիսուս քառասուն օրուան եղաւ, Մարիամ Ս. կոյսն ու Յովսէփը զայն տարին Երուսաղէմի տաճարը։ Անոնք իրենց հետ բերին զոյգ մը աղաւնի։ Այդ միջոցին Երուսաղէմի մէջ կար ծերունի արդար մարդ մը Սիմէոն անունով։ Սուրբ Հոգին յայտնած էր անոր որ անիկա չպիտի մեռնէր մինչև որ Քրիստոսը չտեսնէր։ Երբ Մանուկը տաճար բերին, Սիմէոնը Ս. Հոգւով իմացաւ, դուրս եկաւ, եկաւ Մանկան առաջ, զայն գիրկն առաւ, փառք տուաւ Աստուծոյ ու ըսաւ. «Տէ՛ր, հիմայ քու խօսքիդ համեմատ արձակէ՛ քու ծառայդ, որովհետև աչքերս տեսան Փրկիչը զոր ժողովրդին համար պատրաստեցիր։» Յովսէփ ու Մարիամ կը զարմանային այս խօսքերուն վրայ։ Տաճարին մէջ կար Անն անունով կին մը։

Անոնց մարգարէուհի էր. ասիկայ Աստուած կը փառաբանէր ու ամէնուն կ'ըսէր թէ այս մանուկը խոստացուած Փրկիչն է։

Այս տօնն որ կը կոչուի Տեառնընդառաջ՝ կը կատարուի Փետր. 14ին։

Տեառնընդառաջը կը կոչուի նաև Գալուստ խառասիրեալ ի տաճարն։ Ուրիշ եկեղեցիներ Տիրամօր անունէն առնելով՝ այդ տօնը Ներկայացում կամ Սրբութիւն Սուրբ կը կոչեն։

Այդ տօնը կը կոչուի ժողովրդեան լեզուով Տերնտաս։ Հին հայերը Տերնտասի տօնին օրը յատկացուցած էին ի պատիւ Միհր Աստուածածին։ Քրիստոնէութեան ատեն այդ տօնը Տեառնընդառաջի փոխուեցաւ։

Տաղ Տեառնընդառաջի

«Քրիստոս փառաց թագաւոր,—Այսօր եկեալ յընծայումն—Կատարելով նա զօրէնս—Քառասնօրեայ դալստեամբ։ Զոր մարգարէն Եսայի — Յառաջագոյն գուշակեաց Երուսաղէմ քաղաքին — Սիմէոնի ծերունւոյ։»

Թարգմ. — «Փառաց թագաւոր Քրիստոսը կատարելով օրէնքը՝ եկաւ տաճար, ընծայուեցաւ քառասնօրեայ հասակին մէջ։ Եսայի մարգարէն զայն արդէն գուշակեց Երուսաղէմ քաղաքին՝ Սիմէոն ծերունւոյն։»

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափին մօտ կը բնակէր մարգարէ մը Յովհաննէս անունով։ Յովհաննէս կը քարոզէր ժողովրդին ու կ'ըսէր. «Ապաշխարեցէ՛ք, մօտեցած է Երկնքի = Քրիստոսի արքայութիւնը։ Անոր քով կը հաւաքուէին ամէն կողմէ մարդիկ. իրենց մեղքերը կը խոստովանէին։ Յովհաննէս զանոնք կը մկրտէր Յորդանանու մէջ։

Երբ Յիսուս երեսուն տարեկան եղաւ, Նազարէթէն

եկաւ Յովհաննէսի քով մկրտուելու։ Յովհաննէս հրաժարեցաւ զայն մկրտելէ ու ըսաւ. «Ես Քեզմէ մկրտուելու եմ, Դուն ի՞մ քով կուգաս։» Յիսուս պատասխանեց. «Թո՛յլ տուր, որովհետև այսպէս պէտք է կատարուի ամէն արդարութիւն», այսինքն դուն պէտք է մկրտես զիս։

Երբ Յիսուս մկրտուեցաւ, դուրս ելաւ ջրէն, երկինք բացուեցաւ ու Ս. Հոգին աղաւնւոյ կերպարանքով իջաւ Անոր վրայ։ Երկինքէն ձայն մը լսուեցաւ։ «Ատիկա իմ սիրելի որդիս է, զոր ես ընտրեցի։»

Այդ տօնը Յունուար 6ին է։ Քրիստոսի Մկրտութիւնն Աստուածայայտնութեան տօնին գլխաւոր յիշատակներէն մէկն ըլլալով՝ միշտ զոյգ կ'ընթանայ Քրիստոսի Ծննդեան յիշատակին հետ բոլոր ութ օրերուն մէջ։ Ցատակ կերպով Քրիստոսի Մկրտութիւնը կը յիշատակուի Աստուածայայտնութեան օրը Զրօրհնէքի արարողութեամբ, և Ը. օրուան շարականներն ալ Մկրտութեան նուիրուած են։

Ծննդեան առտուն, Ս. Պատարագի աւարտման կը կատարուի Զրօրհնեքն որ Քրիստոսի Յորդանան գետի մէջ Մկրտութեան յիշատակութիւնն ու օրինակն է։

Տեղ տեղ սովորութիւն կայ Զրօրհնէքը գետի կամ լճի եզերք, կամ ծովու վրայ կատարել։ Ասիկա աւելի Յունաց մէջ կը կատարուի։ Մենք՝ Հայերս եկեղեցւոյ մէջ կը կատարենք Զրօրհնէքը։

Երգ Զրօրհնեաց

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ — Ս. Բարիչն Աստուած ի Յորդանան եկեալ՝ — Կամէր մկրտել ի ծառայէն իւրմէ, — Զառնոյր Կարապետ զմկրտելն ի յանձն։

Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր — Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։— Գե՛տ, մի զարհուրի՛ր,

քո արարիչն եմ ես, — Եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս։

Թարգմ. — «Որքա՜ն զարմանալի է մեզի յայտնուած այս մեծ խորհուրդը — Արարիչ Աստուածը Յորդանան գալով՝ կ'ուզէր մկրտուիլ իր ծառայէն։ Բայց Կարապետ Յովհաննէսը յանձն չէր առնել մկրտել զայն։

Յորդանան այս բանը լսելով՝ կը փախչէր։ Վտակը = ալիքը վտակին պատգամաւոր կ'երթար (այս խորհուրդը յայտնելու համար։) Դե՛տ, մի՛ զարհուրիր, ես քու արարիչն եմ, եկած եմ որ մկրտուիմ ու լուանամ (ուրիշներուն) մեղքերը։

Այսօր ձայնն հայրական — Յերկնից իջեալ հաճոյական — Սիրեցելոյ որդւոյ վկայ — Ա՛յ յորդոր է, — Դեռ յորդոր է, — Դեռ Յորդանան — Յորդորական ձայնիւ երգէր — Մեծ Կարապետն Յովհաննէս։

Թարգմ. Այսօր Հայր Աստուծոյ հաճութեան ձայնը կը լսուի երկինքէն ու կը վկայէ իր սիրելի Որդւոյն մասին։ Ա՛յ յորդոր է գեռ յորդոր է, գեռ Յորդանան։ Մեծ Կարապետ Յովհաննէսը յորդորական ձայնով կ'երգէր։

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Յիսուս ուզեց ցոյց տալ իր Աստուածային փառքն իր աշակերտներուն։ Անիկա իր աշակերտներէն Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսին հետ եկաւ Թաբոր լեռն ու սկսաւ աղօթել։ Աշակերտները յոգնած ըլլալով՝ քնացան։ Երբ արթնցան, տեսան որ իրենց Վարդապետը կերպարանափոխուած էր. Անոր երեսը կը փայլէր արեգական պէս ու հանդերձները ձիւնի պէս սպիտակ եղած էին։ Անոր հետ կը խօսէին Մովսէս ու Եղիա մարգարէները։ Պետրոս հիացած՝ բացագանչեց. «Վարդապե՛տ, լաւ է հոս ըլլալ, երեք տաղաւար չինենք, մէկը Քեզի, մէկը Մովսէսի ու միւսն՝ Եղիային։» Այն ատեն լուսաւոր ամպ մը եկաւ ու հովանի եղաւ անոնց։ Ամպէն ձայն

մը եկաւ որ կ'ըսէր. «Ատիկա է իմ սիրելի որդիս, Ասոր մտիկ ըրէք»։ Աշակերտներն այս ձայնէն սաստիկ վախցան և երեսի վրայ ինկան։ Յիսուս անոնց մօտեցաւ, արթնցուց ու ըսաւ, «Ելէ՛ք, մի՛ վախնաք։» Աշակերտները գլուխնին վեր բարձրացուցին և տեսան միայն Յիսուս իր սովորական կերպարանքով։

Այս տօնը կը կոչուի Այլակերպութիւն = Պայծառակերպութիւն։ Տօնախմբութիւնն երեք օր է, Կիրակի՝ բուն տօնը, Բշ. օր դարձեալ Հրամայեալ տօն ու Մեռելոց յիշատակ, Դշ. Լուր տէրունի մը։ Յոյներն ու Լատինները կը տօնեն Օգոստոս 6ին, իսկ մենք կը տօնենք Զատկէն 98 օր ետքը։

Հետեւապէս 35 օրուան չարժականութիւն կրնայ ունենալ Յունիս 28էն մինչև Օգոստոս 6։

Ս. Թարգմանիչները մեր մէջ մտցուցին այս տօնը. Շնորհալին հաստատեց Բ. ու Գ. օրուան տօները։

Այլակերպութիւնը Վարդավառ ալ կը կոչուի որ հին հեթանոսական ժամանակէն մնացած մեծ տօնի մը անունն է։ Վարդավառ կը նշանակէ Զրցանութիւն = Զրցանք։ Վարդավառն Առաւնորի = Նոր տարւոյ տօնն էր։ Հայոց Նոր տարին ամառը կ'սկսէր Նաւասարդի սկիզբը՝ Օգոստոս 11ին։

Շատ հեթանոսական տօներ նպատակնին ու յիշատակնին փոխելով՝ անուններին պահեցին Հայոց Քրիստոնէութեան մէջ, ինչպէս այս Վարդավառը, Տեառնընդառաջը, Ծաղկազարդը, ևլն.։

Հին Վարդավառի յիշատակներն են աղաւնի թռցնել, ջուր սրսկել որ հիմայ ալ Այլակերպութեան տօնին առթիւ կը գործադրուին։

Շարական Վարդավառի. — «Նման Մովսէսի Հեղիաս սպասէ յանուն Նորա, ցնծան Թաբոր և Հերմոն, նմա յաւերժ յանձն արա՛ զանձինս մեր։»

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Հրեայներն ամէն տարի կը կատարէին Եգիպտոսէ ելլելու տօնն որ կը կոչուէր Պասէք կամ Պասք = Զատիկ։ Այդ տօնէն վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա գեղն ու այն տեղէն գնաց դէպ ի Երուսաղէմ։ Երբ Անիկա հասաւ Ձիթենեաց լեռը, հրամայեց Իր աշակերտներէն երկուքին որ մօտակայ գեղէն աւանակ մը բերեն։ Աշակերտները բերին աւանակը, անոր վրայ փռեցին իրենց հանդերձները, ու Յիսուս նստաւ։ Անոր հետեւեցաւ մեծ բազմութիւն մը։ Շատեր հաւատացին որ Յիսուս Դաւթի ցեղէն խոստացուած Փրկիչն է և սկսան պատուել զԱյն։

Ոմանք արմաւենւոյ ճիւղեր կը կտրէին ու ճամբուն վրայ կը ձգէին, ուրիշներ ալ իրենց հանդերձներն աւանակի ոտքերուն տակ կը փռէին ու այս երգը կ'երգէին. «Ովսաննա՛ Դաւթի որդւոյն, օրհնեա՛լ է Տիրոջ անունով եկող թագաւորը։ Ովսաննա՛ բարձունքին մէջ։» Քաղաք մտնելու ատեն, մեծ բազմութիւն մը դիմաւորեց Քրիստոսը, ու զԱյն չտեսնողները կը հարցնէին. Ո՞վ է սիկա։ Ժողովուրդը կը պատասխանէր. Ասիկա Յիսուսն է՝ Նազարէթ քաղաքի մարգարէն։

Քրիստոսի Երուսաղէմ գալստեան տօնը կը կոչենք Ծաղկազարդ որ Զատկէն շաբաթ մը առաջ կը կատարուի։ Ծաղկազարդը հին Հեթանոսական տօն մըն էր Հայոց մէջ, որ ժամանակներու և պարագայներու նմանութեամբ Երուսաղէմ գալստեան տօնին հետ խառնուեցաւ և մէկուն անունը միւսին տրուեցաւ։

Ժողովրդին բերնին մէջ Ծաղկազարդը Ծառզարդար ալ կը կոչուի։

Ձիթենի. — Եկեղեցւոյ մէջ ձիթենւոյ ոստեր կը

գործածուին Ծաղկազարդի առտուն և կը բաշխուին թէ՛ պաշտօնեայներուն, դպիրներուն և թէ՛ ժողովրդին «Փառք ի բարձունս»ի ատեն, և իւրաքանչիւրին ոստը կը մնայ իրեն նուիրական յիշատակ մը։

Ձիթենւոյ ոստերն օրհնութիւն չունին. ուր որ ձիթենի յառաջ չի գար, ուռենւոյ ճիւղեր կը փոխանակուին։

Արեւմտեան եկեղեցւոյ մէջ արմաւենւոյ ճիւղերով հիւսկէն ու զարդարուն ոստեր ալ կը գործածեն։

Դռնբացէ. — Ծաղկազարդի իրիկունը կը կատարուի «Դռնբացէք»ի արարողութիւնը։

Ղազարու յարութիւն. — Ղազարոս անունով հիւանդ մը կար Բեթանիա գիւղը։ Անոր երկու քոյրերը Մարիամ, Մարթա մարդ ղրկեցին Գալիլիա՝ Յիսուսի որ գայ Ղազարոսը բժշկէ։ Երբ մարդիկը լուր կը բերէին, Ղազարոս մեռաւ։

Յիսուս երբ Բեթանիա եկաւ, Ղազարոս արդէն չորս օրէ ի վեր մեռած էր ու թաղած էին խեղճը։ Ազգականներէն շատերն եկած էին որ Մարիամն ու Մարթան մխիթարեն։ Յիսուս գերեզմանին մօտեցաւ ու ըսաւ. «Վերցուցէք գերեզմանին քարը։» Մարթան ըսաւ. «Տէր, արդէն հոտած է, որովհետև չորս օրուան թաղուած է։» Յիսուս ըսաւ. «Մարթա, չըսի՞ քեզի որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կը տեսնես։»

Քարը վեր առին. Յիսուս աչքերն երկինք բարձրացուց ու ըսաւ. «Հայր, շնորհակալ եմ քեզմէ որ ինծի լսեցիր։ Ու ես գիտէի որ ամէն ատեն ինծի կը լսես. ու խնդրեմ այս անգամ ալ մտիկ ըրէ որ այս ժողովուրդը հաւատայ թէ Դուն ես զիս ղրկողը։» Այս ըսաւ ու բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարոս, արի՛, դուրս ե՛լ։» Մեռեալն իսկոյն դուրս ելաւ, ձեռքերն ու ոտքերը պատանքով պատած, իսկ երեսը վարշամակի մէջ փաթ-

թուած։ Յիսուս ըսաւ, «Արձակեցէք կապերն ու թողէք որ երթայ։»

Մարիամի հետ եկած հրեայներէն շատերը տեսան Յիսուսի ըրածն ու հաւատացին անոր։

Տօնը. — Ղազարու Յարութիւնը Քրիստոսի նշանաւոր հրաշքին յիշատակութիւնն է որ կը կատարուի իբրև Տէրունի տօն և իբր փրկագործ Տէրունականներուն չարքին նախադուռը։ Ծաղկազարդը յառաջող չաբաթ օրը Ս.Ղազարու տօն չէ, Ղազարու Յարութիւնը Ծաղկազարդին նախընթաց օրը տեղի ունեցած չէ, որովհետև այդ հրաշքէն ետք Քրիստոս պահ մը Եփրայիմ քաղաքեցաւ ու նորէն Զատկի առթիւ Բեթանիա եկաւ, և Երուսաղէմ մտնելուն նախընթաց չաբաթ օրը Ղազարու տան մէջ պատուական ընթրիքի մը ներկայ գտնուեցաւ։ Եկեղեցին այդ ընթրիքին օրուան հետ միացուցած է նոյն իսկ Ղազարու յարութեան յիշատակը։

Ղազարու յարութեան շարականը.

Կենդանութեանց բաշխող Քրիստոս — ի Բեթանիա եկաւորեալ այսօր — Բարեկամին Ղազարու — Պարգեւէ զկենդանութիւն։

«Կեանք բաշխող Քրիստոսը Բեթանիա գալով այսօր՝ (իր) բարեկամ Ղազարոսին կեանք պարգեւեց։»

Շարական Ծաղկազարդի.

Զ Քրիստոս թագաւոր Որ էն յաթոռ փառաց — Տեսաք ի յերկրի՝ նստեալ ի նոր յաւանակի։

Այսօր ընդ հրակերպական դասուցն օրհնաբանէին ծերքն ոստովք և տղայքն արմաւենեօք. Ովսաննա՛ օրհնեա՛լ եկեալ ի յանուն Տեառն։

Թելադրութիւններ. — Հրեայներն ի՞նչ սովորութիւն ունէին։ — Օրինական զոհն ինչ՞ու կը մատուցանէին։ — Օրէնքն ի՞նչ կը հրա-

մայէր։ — Յետոյ ի՞նչ բարեփոխութիւն կրեց։ — Յիսուս ինչ՞ու տաճարը բերին։ — Ե՞րբ։ — Ի՞նչ ընծայ տուին։ — Երուսաղէմի մէջ ո՞վ կար այն միջոցին։ — Ս. Հոգին ի՞նչ յայտնած էր։ — Ի՞նչ ըսաւ։ — Ուրիշ ո՞վ կար։ — Ի՞նչ ըսաւ։ — Այդ տօնն ե՞րբ կը կատարենք։ — Ուրիշ ի՞նչ անուն ունի։ — Ժողովուրդն ի՞նչ կ'ընէ այդ տօնին։ — Ինչ՞ու։ — Ո՞րն է Տեաւնընդառաջը։

* * *

Յովհաննէս ո՞ւր կը բնակէր։ — Ի՞նչ կը քարոզէր։ — Յիսուս ե՞րբ եկաւ Յովհաննէսէն մկրտուեցաւ։ — Յովհաննէս ի՞նչ ըսաւ։ — Յիսուս ի՞նչ պատասխանեց։ — Երբ Յիսուս մկրտուեցաւ, ինչե՞ր եղաւ։ — Այդ տօնն ե՞րբ է։ — Ինչ՞ու այդ օրն կը կատարենք։ — Ե՞րբ կը կատարուի Զրօրհնէքը։ — Ի՞նչ սովորութիւն կայ։ — Ո՞րն է Զրօրհնէքի երգը։

Յիսուս ո՞ւր և որո՞նց յայտնեց Աստուածային փառքը։ — Աշակերտներն ի՞նչ եղան։ — Ի՞նչ տեսան։ — Քանի՞ օր կը տևէ տօնը։ — Մենք ե՞րբ կը տօնենք։ — Յոյներն ու Լատիններն ե՞րբ։ — Ե՞րբ մեր մէջ մտաւ։ — Ինչ՞ու Վարդավառ կը կոչուի։ — Այդ տօնին ինչե՞ր կը կատարուին։ — Ո՞րն է Վարդավառի շարականը։

* * *

Հրեայներն ի՞նչը կը տօնէին։ — Յիսուս ե՞րբ եկաւ Բեթանիա։ — Ո՞վ և ի՞նչ հրամայեց։ — Ժողովուրդն ինչե՞ր ըրաւ։ — Այդ տօն ի՞նչ կը կոչուի։ — Ծաղկազարդն ո՞ւրկէ մնացած է։ — Ի՞նչ կ'ըսէ ժողովուրդը։ — Այդ օրը, եկեղեցւոյ մէջ ի՞նչ սովորութիւն կայ։ — Ե՞րբ կը կատարուի Թռնդացեքը։

* * *

Ո՞վ էր Ղազարոս։ — Յիսուսի ի՞նչ ըսին։ — Քանի՞ օրուան մեռած էր Ղազարոս։ — Ե՞րբ Յիսուս Բեթանիա եկաւ։ — Յիսուս ի՞նչ ըրաւ։ — Ղազարոս ի՞նչ եղաւ։ — Որո՞նք հաւատացին Յիսուսի։ — Ղազարու Յարութիւնն ինչի՞ յիշատակութիւն է։ — Յիսուս ուրիշ ի՞նչ հրաշքներ ըրաւ։ — Տարբ. Դասընթացքի մէջ ինչե՞ր սորվեցաք այս մասին։ — Ո՞րն է Ղազարու յարութեան շարականը։

Դ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցիչ հեսեւեալները.

Ուտիք օրերն են...։—Սովորութիւն է...։—Պահք չի պահուիր...։ — Պահք կը նշանակէ...։ — Պահքի խումբերն են...։ — Օրապահ են ...։ — Շաբաթապահք են...։ — Տաղաւարի պահքերն են...։ — Եղանակի պահքերն են...։ — Մեծ պահքի յատկանիշներն են ..։ — Ծոմն է...։ — Աղուհացք կը նշանակէ...։ — Խորհրդանշան է...։ — Միջինք կը նշանակէ...։ — Մեծ պահք կիրակիները նուիրուած են...։ Ցիսնակ կը նշանակէ...։ — Ս. Յակոբայ պահքն է...։ — Եղիսկան պահքն է...։ — Նաւակատիք կը նշանակէ...։ — Նաւակատիք օրերն են...։ — Նաւակատիքի կերակուրներն են...։ — Բարեկենդան կը նշանակէ...։ — Բարեկենդաններն են...։ — Աբեղաթող կը կոչուի...։ — Բակլախորան կը նշանակէ...։ — Բուն բարեկենդանի խորհուրդն է ...։ — Մեռելոցի օրերն են...։ — Տօն կը նշանակէ...։ — Եկեղեցին սահմանած է Տօն...։ — Տէրունի տօն կը կոչուին...։ — Լուր օրեր են ...։ — Կիրակին կը կոչուի...։ — Անշարժ տօներն են...։ — Պահքի օրեր կը հանդիպին...։ — Տօնները...։ — Տաղաւար կը կոչուին...։— Հրամայեալ հանդիսական օրերն են...։ — Տէրունի ի լուր կը նշանակէ ...։ — Եօթնեկի օրերը նուիրուած են...։ — Նազարէթի բարեպաշտներն էին...։ — Ունեցան...։ — Ս. Աստուածածնի Ծնունդը կը կատարենք...։ — Կ'աղօթենք սապէս...։ — Այս աղօթքին նշանակութիւնն է...։ — Գաբրիէլ հրեշտակապետն աւետեց...։ — Հայերը կը կատարեն այս տօնը..։ — Յոյներն ու Լատինները...։ — Օգոստոս կայսրն ուզեց...։ — Բեթղեհէմ գացին...։ — Իջան...։ — Գիշերը ծնաւ...։ — Հովիւները...։ — Մենք Ծնունդը կը կատարենք ..։ — Ուրիշ եկեղեցիներ...։ — Անուանակոչութիւնն է...։ — Ծննդեան շաբաթն է...։ — Հրեայներն օրինական զոհը կը մատուցանեն...։— Օրէնքը կը հրամայէր...։ — Յիսուս տաճար բերին...։ — Ընծայ տուին...։ — Սիմէոն ծերունին կ'սպասէր...։ — Ըսաւ...։ — Այդ տօնը կը կոչուի...։ — Եւ կը կատարենք...։ — Այդ տօնին կ'ընենք ...։ — Յովհաննէս ըսաւ...։ — Յիսուս պատասխանեց...։ — Երբ Յիսուս մկրտուեցաւ...։ — Զբօրտնէք կը կատարենք...։ — Յիսուս յայտնեց Աստուածային փառքը...։ — Աշակերտներն...։ — Մենք կը կատարենք այդ տօնը...։ — Յոյներն ու Լատինները...։ — Այդ տօնը

կը կոչուի...։—Եւ այդ օրը կը կատարեն...։— Հրեայները Զատիկը կը տօնեն...։ — Յիսուս եկաւ...։ — Այդ տօնը կը կոչուի...։ — Ծաղկազարդին սովորութիւն է...։ — Դռնբացէքը...։ — Յիսուսի տունէն մեծ հրաշքն է...։ — Ղազարոս...։ — Քոյրերը...։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ծաղկազարդէն մինչև Զատիկ եղող եօթնեակը կը կոչուի Աւագ շաբաթ և շաբթուան իւրաքանչիւր օրն ալ նոյն Աւագ անունը կը կրեն, Աւագ Բ., Աւագ Գ., Աւագ Դ., Աւագ Ե., Աւագ Ուր., Աւագ Շաբաթ։ Զատկի շաբաթ ալ կը կոչուի Աւագ շաբաթը։

Աւագ շաբթուան վեց օրերն ալ նուիրուած են Քրիստոսի վերջին օրերուն անօրինութեան։

Աւագ Բ. — Թզենին անիծելուն և տաճարը մաքրելուն օրն է։

Եկեղեցին կը յիշէ նաև Որդւոց Որոտման խնդիրը, Սարարչութեան ու Մարդկութեան սկիզբը։

Աւագ Գ. — Քրիստոսի Փարիսեցիներուն յանդիմանութեան օրն է։

Եկեղեցին կը յիշէ Տասն Կուսանաց առակն և Վերջին դատաստանի բացատրութիւնը, նաև Զրհեղեղն ու մարդոց կրկին սկզբնաւորութիւնը։

Եկեղեցին երեկոյին, Ս. Աւետարանի ընթերցման ատեն, տասը փոքրիկ աղջիկներու կամ տղեկներու ձեռքը մոմ կուտայ և Աւետարանին դիմաց կը կանգնեցնէ։ Ասիկա նորամուտ ու տեսարանական սովորութիւն մըն էր և ոչ ծիսական պահանջ։

Աւագ Գ. օրուան Շարականը.

Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց —Ելին ընդ առաջ Երկնաւոր Փեսային — Վառեալ լապտերօք։

«Իմաստուն կոյսերը լապտերներու համար իւղ պատրաստելով՝ ելան դիմաւորելու Երկնաւոր Փեսայն։»

Աւագ Դշ.— Կը յիշատակուի Յուդայի մատնութիւնը։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Հրեից Պասէք. — Հրէական Պասէքի տօնը Զատիկ կը կոչուի որ յիշատակ է հրեայներուն Եգիպտոսէ ելլելուն։ Այդ տօնէն առաջ կը մաքրուին, կը պատրաստուին ու յետոյ սեղան կը բազմին։ Ընտանիքին հայրը կ'առնէ խաղողի բաժակ մը, կ'օրհնէ Աստուածը խաղողին համար, յետոյ ամենքը կը խմեն և վերջն ալ իրենց ձեռքը կը լուան։ Այն ատեն զենուած զատկական գառը սեղան կը բերուի անխմոր չօթերով=բաղարջով։ Ասիկա կը կոչուի Զատկական Ընթրիք։ Պասէքը կը տեւէ եօթ օր։ Զատիկը զենելու և ուտելու էին միայն Երուսաղէմի մէջ։

Աւագ Եշ. — Զատկական Ընթրիք. — Յիսուս ալ այդ սովորութեան համեմատ պատուիրեց իր աշակերտներէն երկուքին որ Երուսաղեմ տան մը մէջ պատրաստութիւն տեսնեն Զատիկը տօնելու համար։

Աշակերտները պատրաստեցին ինչ որ Յիսուս հրամայեց։

Իրիկունը Յիսուս իր աշակերտներով մտաւ պատրաստուած վերնատունը։ Անիկա ընթրիքէն առաջ իր աշակերտներու ոտքերը լուաց՝ խոնարհութեան օրինակ տալով անոնց։ Յետոյ սեղան նստաւ անոնց հետ և կերաւ Զատկական գառը։ Խօսակցութեան ատեն Յիսուս ըսաւ «Ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս։» Անոնք տարակուսած՝ իրարու նայեցան ու երկիւղով իրարու կը հարցնէին. «Միթէ՞ ես եմ Տէր։» Յուդան որ պիտի մատնէր, ըսաւ. «Միթէ՞ ես եմ։» Յիսուս պատասխանեց. «Դու կ'ըսես։» Յուդա իսկոյն դուրս ելաւ։

Ընթրիք ուտելու ատեն Յիսուս վերցուց հացը, օրհնեց, կտրեց ու տուաւ աշակերտներուն. և ըսաւ, «Առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմինս։ Ասիկա ըրէք իմ յիշատակիս համար։» Յետոյ առաւ բաժակը, գոհացաւ և անոնց տուաւ, ըսելով. «Ասկէ խմեցէ՛ք, ամենքդ, այս է իմ՝ Նոր ուխտի արիւնն որ շատերուն թողութեան համար պիտի թափուի։ Ամէն անգամ որ խմէք՝ զիս յիշեցէք։» Այսպէս Յիսուս հաստատեց Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը։

Աւագ Հինգշաբթի յիշատակները զանազան ժամանակներու բաժնուած ըլլալով՝ Ընթրիքին յիշատակութիւնը կը պատասխանէ Պատարագին որ յատուկ արարողութիւնով կը կատարուի նոյն օրը և նշանաւոր տեղը կը գրաւէ Վերարերման սրբասացութեան հանդիսաւորութիւնը։ Վերարերման սրբասացութիւնն է «Զերգս հոգեւորս։»

Լատինները Քրիստոսի մարմնոյ ու արեան խորհրդին ի պատիւ յատուկ տօն մը ունին, բայց ոչ Աւագ Եշ.։ Ատոր հաստատութիւնը հին չէ, այլ նոր։

Աւագ. Եշ։ օրուան ծանօթ շարական.

«Այսօր կանգնեցաւ աւազան Մկրտութեան ի թողութիւն մեղաց մերոց։»

Եւ սրբասացութիւնն է

Զերգս Հոգեւորս. Որ վերայ նստիս ի կառս հրանիթս քառակերպեան, անճառելի բանդ Աստուած։ Այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արարածոցս յանձն առեր բազմել ընդ աշակերտսն։ Եւ Սերովբէքն և Քերովբէքն հիացեալ՝ զարմանային և պատութիւնք վերին սքանչացեալ՝ աղաղակէին ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց։

Ոսնալուայ. — Քրիստոս իբր վերջին օրինակ խոնարհութեան և իբր ողջոյն=«մնաք բարով» և իբրև նշանակ Ս. Հաղորդութեան խորհրդին պահանջած սրբութեան ու մաքրութեան՝ իր աշակերտներուն ոտքերը լուաց։ Այս գործողութեան յիշատակութիւնը կը կատարուի իրօք ոտքեր լուալով, Աւագ Եչ. իրիկունը։ Ըստ հին արարողութեան, ոչ թէ թուով ու չափով ոտքերը պիտի լուացուին, այլ եկեղեցւոյն մեծը քահանայներուն ոտքը լուալէն ետք, անոնք ալ պիտի նստին լուալու իրենց կարգին, և բոլոր ներկայ ժողովրդին ոտքերը պիտի լուան։

Ոսնալուայն խորհուրդ չէ, այլ խորհրդական կոչուած արարողութեան կարգէն է, և ըստ այնմ Ոսնալուային լուացողներն ալ նոյն բարեպաշտական զգացումներ ունին։

Լուացման ատեն սովորութիւն է միայն աջ ոտքը լուալ, թէև Քրիստոս առաքելոց երկու ոտքերն ալ լուացած ըլլայ։ Լուացումէն ետք պարզ կարագ իւղով փոքրիկ օծում մը ալ կ'աւելցուի որ թէև Վերջին Ընթրիքին պատմութեան մէջ յիշուած չէ, բայց Աւետարանին մէջ քանի մը անգամ ոտքի լուացում կը պատմուի, ազնիւ իւղովը օծելն ալ կը յիշուի, և այդ հիմամբ ջրով լուացման ալ կ'աւելցնենք իւղով օծումը։

Ոսնալուայի երգերէն մէկն է

Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի վասն Յուդայի։
Այսօր վերացաւ, վերնատուն նստաւ և գառն կերաւ։
Որք որ փափաքին, ուտել զայն մարմին, որով սրբեսցին։

Թելադրութիւններ. —Ո՞ր եօթնեակն Աւագ շաբաթ կը կոչուի. — Ուրիշ ի՞նչ կը կոչուի. — Վերջերէն ինչի՞ նուիրուած են. — Բշ. — Գշ. — Դշ. — Որո՞նք են յաստուց շարականները. — Հրէից ո՞ր

տօնը Պասէք կը կոչուի. — Ինչի՞ յիշատակ է. — Այդ տօնին ի՞նչ կ'ընեն. — Մենք ալ կ'ընե՞նք. — Այդ տօնը կատարելու համար Յիսուս ի՞նչ պատուիրեց. — Ընթրիքն ո՞ւր և ե՞րբ ըրաւ. — Ընթրիքէն առաջ ի՞նչ ըրաւ. — Ինչե՞ր պատուիրեց. — Ո՞րն է ատոր շարականը. — Ոսնալուայն ինչո՞ւ կատարեց. — Ատոր յիշատակն ի՞նչպիսի արարողութեամբ կը կատարուի. — Ոսնալուայն խորհուրդ է՞ թէ խորհրդական արարողութիւն. — Ի՞նչ տարբերութիւն կայ խորհուրդին և խորհրդական արարողութեան միջև. — Ո՞րն է Ոսնալուային երգը։

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

Յիսուսի խաչելութիւնը. — Յիսուսի թշնամիները —հրեայ քահանայապետներ, դպիրներ ու ժողովրդին ծերերն անոր փառքը տեսնելով՝ խորհուրդ ըրին որ զԱյն սպաննեն։ Յուդա գնաց Յիսուսը մատնեց Աւագ Ուրբաթ։ Լուսնալիք գիշերը և փոխարէնը ստացաւ 30 արծաթ։

Յիսուսի թշնամիները բռնեցին զԱյն ու տարին Պոնտացի Պիղատոսի քով որ Հրէաստանի կառավարիչն էր և սկսան բամբասել և չարախօսել Անոր վրայօք թէ Անիկա կը քարոզէ ու կը մոլորեցնէ ժողովուրդը, Ինքզինք Աստուծոյ որդի կ'անուանէ ու կ'արգիլէ կայսեր տուրք տալ։

ՀՐԵԱՅՆԵՐԸ ՅԻՍՈՒՍԸ ԿԸ ԶԱՐԶԱՐԵՆ

Զինուորները Յիսուսը տարին Գողգոթա լեռը, հանեցին Անոր հանդերձներն և խաչեցին Աւագ Ուր. ցորեկին։ Անոր աջ ու ձախ կողմը խաչեցին երկու աւազակներ։ Յիսուսի Խաչին վրայ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»=Յ. Ն. Թ. Հ.։

Խաչուելէն երեք ժամ ետքը, երկրիս երեսը խաւար պատեց ու աստղերն երեւցան։ Յիսուս աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած. ընդէ՞ր թողեր զիս.» և քիչ մը ետքը ըսաւ. «Ծարաւ եմ։» Զինուորներէն մէկը սպունգը թաթխեց քացախի մէջ ու եղեգի ծայրով մո-

տեղուց Անոր բերին։ Յիսուս քացախն ընդունեց ու ըսաւ. «Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ հոգիս։» Յետոյ գլուխը խոնարհեցուց և աւանդեց հոգին։

Այն ատեն արեգակը խաւարեցաւ, երկիրը շարժեցաւ ու տաճարին վարագոյրը պատռեցաւ։ Ներկայներէն հարիւրապետն ու ժողովուրդը տեսնելով՝ ըսին. Արդարև Սա՛ Աստուծոյ որդին էր։

Այս տօնը կը կատարուի Աւագ Ուր. օր։

Շարական խաչելութեան.

Խաչի քո, Քրիստոս, երկրպագեմք, զԽաչելութիւնդ քո մեծացուցանեմք, զԹաղումդ քո փառաւորեմք։ Եկա՛ք, հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն Խաչին իւրոյ զնորհեաց պարգեւս աշխարհի։ Փառք՝ սուրբ Խաչիդ. Ալելուիա։

Աղօթք Քրիստոսի խաչելութեան.

«Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր Սուրբ և Անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ։»

Յովսէփ Արեմաթացի այս աղօթքն ըսած է Քրիստոս Խաչէն իջեցնելու ատեն. ուստի կ'ըսուի ի դէմս Աստուծորդւոյն։

Սուրբ և Աստուած կ'անուանենք զԱյն, որովհետեւ Անիկա Աստուծոյ որդին է և Ինքն ալ Աստուած է, և Անոր մէջ մեղք մը չկայ։

Հզօր կ'անուանենք, զի ամենակարող է ու յաղթեց մահուան։

Անմահ կ'անուանենք, որովհետեւ անիկա յաւիտենական է, և թէև մարմնով մեռաւ, բայց Աստուածութեամբ անմահ է, և հզօր Աստուծոյ ու Ս. Հոգւոյն հետ էակից։

Այս աղօթքով կը խնդրենք Աստուծմէ որ 1. իր Խաչի ու Մահուան արդիւնքով ներէ մեր մեղքերը, մաքրէ մեր հոգին ու սրբէ մեր սիրտը։ 2. կը խնդրենք որ իրրև Տէր Աստուած ողորմի և օգնէ մեզի։

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Յիսուսի թաղումը. — Յովսէփ Արեմաթացին որ Յիսուսի ծածուկ աշակերտած էր՝ եկաւ Պիղատոսին ու խնդրեց որ թոյլ տայ իրեն Յիսուսի մարմինը Խաչէն իջեցնել ու թաղել։

Գողգոթա եկած էր Նիկոդիմոսն ալ որ նոյնպէս Յիսուսի ծածուկ աշակերտած էր։ Յովսէփ պատրաստեց մաքուր կտաւ, իսկ Նիկոդիմոսը բերաւ հարիւր լիտրի չափ անուշահոտ եղ։ Յովսէփ Գողգոթայի մօտ ունէր պարտէզ մը ու այդ պարտէզին մէջ կար գերեզման մը։ Յովսէփ ու Նիկոդիմոս Խաչէն իջեցուցին Յիսուսի մարմինը, օծեցին, պատեցին կտաւով ու դրին գերեզմանին մէջ, իսկ գերեզմանի դուռը ծածկեցին մեծ քարով ու մեկնեցան։

Հրեայներու քահանայապետներն եկան Պիղատոսի քով և խնդրեցին զինուորներ սպասցնել Յիսուսի գերեզմանին քով որ գերեզմանը պահպանեն՝ մի գուցէ Յիսուսի աշակերտները գողնան Անոր մարմինն ու ժողովրդին մէջ տարածեն թէ Անիկա Յարութիւն առաւ։

Պիղատոս հրամայեց որ ամէն զգուշութիւն ի գործ դնեն այս մասին։ Անոնք գացին, կնքեցին Գերեզմանի քարն ու պահապաններ սպասցուցին։

Յիսուսի Թաղման Տօնը. — Քրիստոսի Թաղման տօնը կը կատարուի Աւագ ուրբաթ իրիկուն, Աւետարանին ցոյց տուած ժամերուն համեմատ։ Մեր Տօնարանին ցոյց տուած ժամերուն համեմատ։ Մեր Տօնացոյցին մէջ միայն հանդիսաւոր Նախատօնակ մը նշանակուած է, չարականէն զատ Ս. Աւետարան ու Ս. Աստուած։

Իսկ այժմ սովորութիւն եղած է յոյներու հետեւողութեամբ թափոր դառնալ, և Թաղում մը ալ պտըտցնել աւելի կամ նուազ զարդարանքով։

Յիսուսի Թաղման Շարականը.

Պարգեւատուն ամենեցուն—Այսօր խնդրի պարգեւս ի Պիղատոսէ—Եւ Արկողն զլոյս որպէս զօթոց—հաւանի պատել ի Յովսէփայ։

«Ամենուն պարգեւատու (Քրիստոսը) այսօր ինքն իբրեւ պարգեւ կը խնդրուի Պիղատոսէն։ Անիկա որ լոյսն իբրեւ հանդերձ կը հագնէր՝ յանձն կ'առնէ Յովսէփէն պատնուիլ։

Թելադրութիւններ. — Յիսուսի Թշնամիներն որո՞նք էին և ի՞նչ ըրին։ — Ո՞վ մատնեց Յիսուսն և ե՞րբ։ — Թշնամիներն ի՞նչ ըրին։ — Յիսուսի մասին ի՞նչ ամբաստանութիւն ըրին։ — Յիսուս ո՞ւր խաչուեցաւ։ — Ե՞րբ։ — Խաչին վրայ ի՞նչ գրեցին։ — Ինչե՞ր տեղի ունեցան։ — Արեգակն ե՞րբ խաւարեցաւ։ — Որո՞նք են Մատնութեան ու Խաչելութեան շարականները։ — Ո՞րն է Խաչելութեան աղօթքը։ — Այս աղօթքով ի՞նչ կը դաւանինք։ — Ինչե՞ր կը խնդրենք։ — Որո՞նք թաղեցին Յիսուսը։ — Ո՞վ էր Յովսէփ Արեմատացին։ — Նիկոդիմո՞սը։ — Յիսուսն ի՞նչպէս պատեցին։ — Ի՞նչ սովորութիւն կար։ — Ո՞ւր էր գերեզմանը։ — Քանի՞ ինչե՞ր գրին։ — Ինչո՞ւ։ — Ե՞րբ և ի՞նչպէս կը կատարենք Թաղման տօնը։ — Ո՞րն է Հայոց և ո՞րն է յունական սովորութիւնը։ — Ո՞րն է Թաղման շարականը։

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի առտու կանուխ Քրիստոսի գերեզմանին քով մեծ շարժում մը եղաւ։ Տիրոջ հրեշտակն երկնքէն իջաւ, գերեզմանին քարը մէկ կողմ գլորեց, նստաւ վրան։ Անոր դէմքը փայլակի նման էր ու հանդերձները ձիւնի պէս սպիտակ։ Այն ատեն Յիսուս Յարութիւն առաւ մեռեալներէն։ Պահապանները զայս տեսնելով՝

պահուտեցան և երեսի վրայ ինկան մեռածներու պէս։ Երբ սթափեցան, գացին պատմեցին ինչ որ պատահած էր։

Այս միջոցին Գալիլիացի կիներ, — Մարիամ Մագթաղենացի, Մարիամ Յակոբեանը, Սողոմէն և ուրիշներ եկան Յիսուսի գերեզմանին քով որ օծեն Անոր մարմինը։ Անոնք մտան պարտէզ և տեսան որ քարը գլորած էր գերեզմանէն։ Մարիամ Մագթաղենացի երկիւղէն քաղաք վազեց ու պատմեց Յիսուսի աշակերտներուն։ Միւս կիները մօտեցան այրին և տեսան երկու հրեշտակներ որոնք աւետեցին թէ «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»։

Ս. Յարութեան տօնը. — Ս. Զատիկը Քրիստոնէական եկեղեցւոյ մեծ խորհրդաւոր ու ամէնէն փառաւոր տօնն է։ Ասոր յիշատակը կապուած է հրէից Պասէքին հետ որ մեր մէջ ալ Հայոց Զատիկ անունով ճանչցուած է։ Քրիստոսի Յարութեան տօնը Մարտ 24 էն մինչև Ապիլ 25 կրնայ հանդիպիլ։

Քրիստոսի Յարութեան տօնը կ'սկսի Զատկի նախընթաց իրիկուընէ և կը տեւէ 49 օր չարունակ որուն վերջին օրը Հոգեգալուստն է։ Տարուան մէջ ալ բոլոր 52 կիրակիները Յարութեան տօն են և երբ ուրիշ տօն ալ հանդիպի, Յարութիւնը չի յիշուիր, այլ միւս Տէրունիներուն հետ կը խառնուի։

Հին Հայոց Զատիկը. — Հին հեթանոս հայոցմէ մնացած տօն մըն է Զատիկն որ եղանակներու զատուելէն կամ գիշերահաւասարներու տարւոյն երկու մասերուն իրարմէ զատուելէն առնուած անուն մըն է։ Այս տօնը միջոցներու համեմատութեամբ հրէական Պասէքին համահաւասար նկատուած է. և հրէական Պասէքը Քրիստոնէութեան մէջ Քրիստոսի յարութեան տօնին վերածուելով՝ այդ փառաւոր տօնն ալ Զատիկ Յարութեան կոչուած է մեր մէջ։

Կարմիր հաւկիթ. — Զատկին սովորութիւն է կար-

միր հաւկիթ ուտել։ Շատ տեղ հաւկիթը կը ներկեն անպատճառ Աւագ Եշ. օր։

Բուն բարեկենդանին սովորութիւն եղած է վերջին ուտիքին ընել խաշած հաւկիթը, կամ ինչպէս կ'ըսեն հաւկիթով կը կնքեն ուտիքի կերակուրներու չարքը և Զատկին կը քակեն կնիքը՝ կարմիր հաւկիթն ուտելով Ճրագալոյցին։

Ցինուցիք=Ցիսուցիք. — Այս անունը կը տրուի Զատկէն մինչև Հոգեգալուստ 50 օրերուն միջոցին որ ամբողջովին Տէրունի տօներ են ի պատիւ Յարութեան ու վերջին տասը օրերը նաև ի պատիւ Համբարձման. իսկ վերջին յիսուներորդ օրն ալ Ս. Հոգւոյն դալստեան։ Այս յիսուն օրերն ուտիք են, միայն Շնորհալիէն սկսեալ Համբարձմանէն ետք եկող ուրբաթներն ու մէկ չորեքշաբթին պահքի օր եղած են կերակուրի կողմէ, եկեղեցւոյ մէջ տէրունի տօնը ամփոփոխ մնալով։

Զատկի յաջորդ առաջին չորս կիրակիներն առանձին անուն ունին.

1. Կրկնազատիկ որ ժողովրդական անուն մըն է և կը տրուի Զատկի Բ. կիրակին. «Նոր կիրակի» ալ կը կոչուի։ Կրկնազատիկ կը կոչուի՝ որովհետև արդէն Յարութիւն՝ Զատկի օր ըլլալով հանդերձ, Քրիստոնէութեան ալ Նոր Կիրակին յիշատակը կը տօնուի այդ օրը։ Նոր կիրակի կը կոչուի, որովհետև Քրիստոսի Յարութենէն ետք առաջին նոր կիրակի մըն էր Քրիստոնէութեան համար։

2. Կանանչ կիրակի կամ Աշխարհամատրան կիրակի կը կոչուի Զատկի Դ. կիրակին։ Աշխարհամատրան կոչուած է այդ կիրակին, որովհետև այդ օրն է որ կը տօնուի Քրիստոսի տիեզերական ու նոր կանաչցած եկեղեցւոյն հաստատութեան յիշատակը։ Աշխարհամատրան բառը կը գործածուի իբրև աշխարհաժողով բաղմութեան յատկացեալ եկեղեցի։ Այդ անունը տրուած է Սիոնի

վերնատան ուր Քրիստոս վերջին զատկական ընթրիքը կատարեց ու Հաղորդութեան խորհուրդը հաստատեց։ Հոս սովորութիւն ըրին հաւաքուիլ առաքեալները Քրիստոսի Համբարձումէն ետք և նոր հաւատացեալներու հետ հաղորդութիւն ու աղօթք կը կատարէին առանձին։ Այս վերնատունը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները։

Հայոց եկեղեցւոյ յատուկ է եկեղեցւոյ անունով տօներ կատարել. ասոնց գլխաւորն է «Աշխարհամատրան տօն»ը՝ այսինքն Վերնատունին Քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալու յիշատակը։ Աշխարհամատուռը բոլոր Քրիստոնեայ եկեղեցիներու նախատիպն եղաւ և նշանակ եկեղեցւոյ Նուիրականութեան։

Կանաչ կիրակի անունը ժողովրդական հանդէսէ մը առնուած է իբրև դալարիքի տօն և կանաչներով զարդարուելու պարագայ մը՝ Մայիս 1ին պէս տօն մը։ Կանաչ կիրակին հայացի է, իսկ Մայիս 1ին տօնը օտարամուտ։ Հայոց Մայիսի տօնը Կանաչ կիրակին է։

Դ. Կարմիր կիրակի. — Ցինանց Դ. կիրակին կը կոչուի Կարմիր կիրակի. ան ալ ժողովրդական հանդէս մըն է, որովհետև չատերը կանաչնալէն ետքը նախաճաշի կարմիր կակաչներով կը զարդարուին։

Թելադրութիւններ. — Կիրակի առտու կանուխ ինչ պատահեցաւ։ — Այդ միջոցին որո՞նք գացած էին Ցիսուսի գերեզմանը։ — Ո՞վ վազեց քաղաք։ — Ս. Յարութիւնն ինչ տօն կը կոչուի։ — Ասոր յիշատակն ինչի՞ հետ կապուած է։ — Ե՞րբ կրնանք կատարել Զատիկը։ — Քանի՞ օր Զատիկ է։ — Կիրակիներն ինչի՞ նուիրուած են։ — Ինչ հրահանգներ կան։ — Հին Հայոց Զատիկն ինչի՞ տօն էր։ Ս. Յարութիւնն ինչո՞ւ Զատիկ կոչուած է։ — Զատիկն ինչ սովորութիւն կայ։ — Կարմիր հաւկիթն ե՞րբ կը ներկեն։ — Բուն բարեկենդանին։ — Ո՞ր օրերը Ցինունք կը կոչուին։ — Այդ օրերն ուտի՞ք են թէ պահք։

— Զատկին յաջորդող կիրակիներն ի՞նչ անունով կը կոչուին։ — Ինչո՞ւ կ'ըսուի Կրկնազատիկ։ — Կանաչ կիրակին ինչի՞ յիշատակ է։ — Ո՞ր եկեղեցւոյ յատուկ է եկեղեցւոյ տօն կատարելը — Ինչո՞ւ կը կոչուի Կանաչ կիրակի։ — Կարմիր կիրակի՞։

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Քրիստոս իր յարութենէն ետք 40 օր ալ մնաց երկրիս երեսը, և յաճախ կ'երևար իր աշակերտներուն։ Քրիստոս երբ վերջին անգամ երևցաւ, անոնց ըսաւ։ «Դուք Երուսաղէմէն մի՛ հեռանաք, այլ սպասեցէք Ս. Հոգւոյն գալստեան։ Անիկա քանի մը օրէն պիտի իջնէ ձեր վրայ և դուք պիտի ստանաք զօրութիւն Իմ մասիս վկայելու։» Այս ըսելով՝ տարաւ զանոնք Ձիթենեաց լեռը և հոն պատուիրեց երթալ քարոզել ժողովրդին և մկրտել «Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։» Ցետոյ բարձրացնելով Իր ձեռքերը՝ օրհնեց զանոնք ու իր յարուցեալ ու հոգեւոր մարմնով երկինք համբարձաւ։ Աշակերտները երկրպագութիւն ըրին և ուրախութեամբ դարձան Երուսաղէմ։

Տօնը. — Այդ խորհրդական տօնը կը կատարուի Զատկին քառասներորդ օրը, Հինգշաբթի, որ կրնայ հանդիպիլ Ապրիլ 30էն մինչև Յունիս 3։ Համբարձման տօնը կ'երևայ որ մեծ նշանակութիւն չունէր շաբթուան մէջ իյնալուն, թէև Միջին դարերուն գլխաւոր Տէրունիներու ձեւն առած էր, վասն զի Նախատօնակ անգամ չունէր։ Խրիմեան Հայրիկ սահմանեց այս Նախատօնակը։ Համբարձումէն Հոգեգալուստ տասը օրերը՝ առանց յատկապէս Համբարձման տօն ըլլալու, Յարութեան շարականներ ու սաղմոսներ կ'երգուին։ Համբարձման նուիրուած շարականներ ու սաղմոսներ ալ կան։

Համբարձման շարականը.

«Համբարձաւ Տէր մեր յերկինս՝
Ասելով աշակերտացն.
Նստարուք ի քաղաքիդ Յերուսաղէմ,
Մինչև զգենուցուք զզօրութիւն ի բարձանց։»

Թարգմ. — «Մեր Տէրն երկինք համբարձաւ՝ ըսելով աշակերտներուն. Երուսաղէմ քաղաքին մէջ սպասեցէք մինչև որ երկինքէն (Ս. Հոգւոյն) զօրութիւնը = շնորհը ստանաք։»

«Միաբանեալ սուրբ առաքեալքն
Միախոհ և միակրօն՝
Միաբան նստէին ի սուրբ վերնատունն
Եւ ակն ունէին Գալստեան Ս. Հոգւոյն։»

Թարգմ.— «Ս. Առաքեալները մէկ սիրտ, մէկ հոգի դարձած ու վերնատունը նստած՝ կ'սպասէին Ս. Հոգւոյն գալստեանը։»

Վիճակ. — Համբարձման տօնը Վիճակ ալ կը կոչուի, որովհետև Քրիստոսի Համբարձումէն ետք, առաքեալներն ու աշակերտները ժողով ըրին՝ Յուդայի տեղ մէկն ընտրելու և տասներկու թիւը լեցնելու համար։ Վերջնական կերպիւ մէկու մը վրայ չկրնալով որոշում տալ՝ երկու ընտրելիներ դատեցին — Յովսէփ Յուստոսն ու Մատաթիան — և այս երկուքին վրայ վիճակ ձգեցին. վիճակն ելաւ Մատաթիայի։

Ասոր հետեւելով՝ այդ օրը ժողովուրդը վիճակ կը ձգէ իրենց բախտին՝ մանաւոր երգերով, հանդէսով և ուրախութեամբ։

Զատկէն Համբարձում 40 օր ուտիք է բոլորովին՝ աղուհացի փոխարէն և մանաւանդ Քրիստոսի այն խօսքին համար թէ ցո՛րչափ Քրիստոս իր աշակերտներուն հետ է, անոնք չեն պահեր։

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

Քրիստոսի խոստման համեմատ Զատկին յիսունեորդ օրը, առտուան ժամն իններին, յանկարծ լսուեցաւ հնչիւն մը սաստիկ հովի նման ու լեցուց բոլոր տունը։ Աշակերտներէն իւրաքանչիւրին գլխին վրայ հրեղէն լեզուներ երեւցան ու ամենքը լեցուեցան Ս. Հոգւով և սկսան խօսիլ զանազան լեզուներ։ Այսպէս Ս. Հոգին իջաւ անոնց վրայ և տուաւ զօրութիւն ու շնորհք քարոզելու և բժշկելու։

Տօնը. — Այդ տօնը կը կոչուի Հոգեգալուստ որ Համբարձումէն 10 օր ետք կը կատարուի։ Հոգեգալուստը Մայիս 10 էն Յունիս 13 կրնայ հանդիպիլ։

Հին դարերու մէջ մէկ օր միայն կը տօնէին Հոգեգալուստն և Հոգեգալստեան յաջորդ օրէն կ'սկսէր Եղիական պահքը։ Շնորհալին կարգադրեց որ ամբողջ շաբաթն ի պատիւ Ս. Հոգւոյն տօն կատարուի, յատուկ շարականներով ու ընթերցուածքներով զարդարեց և եկեղեցւոյ մէջ կատարած կարգը փոխեց, բայց կերակուրի պահքը չվերցուց։

Պենտեկոստ. — Հոգեգալուստը Պենտեկոստէ ալ կը կոչուի որ յունարէն կը նշանակէ «Յիսներորդ», այսինքն յիսուն օրերու վերջինը։ Հրեայները զայն կը հաշուէին սկսեալ ա՛յն վերջին Զատկէն զոր Եգիպտոսի մէջ ըրին ու անմիջական համբայ եղան։ Այնուհետեւ Եգիպտոսի Զատկին յիշատակը յաւերժացնելու համար՝ Պասքfին = Զատկին յիսներորդ օրը կը տօնէին զայն։ Ս. Հոգին այդ օրն իջաւ առաքեալներու վրայ։

Պենտեկոստէն հայացուցած են Յինուոնք բառով։

Հոգեգալստեան շարականը.

«Առաքելոյ Աղաւնոյ
Իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց
Ի նմանութիւն լուսոյ փայլման՝
Հրաշալինեաց զանկիզելի զաշակերտսն,
Մինչդեռ նստէին ի Ս. Վերնատան։»

Թարգմ. — «Դրկուած Աղաւնին վերէն բարձրաձայն հնչմամբ իջաւ լուսոյ փայլման պէս ու հրաշալինեց անկիզելի աշակերտները, երբոր անոնք Վերնատունը նստած էին։»

Թելադրութիւններ. Քրիստոս քանի՞ օր մնաց երկրիս երեսը։ — Յիսուս վերջին անգամ ի՞նչ պատուիրեց. — Ո՞ւր տարաւ աշակերտները. — Ինք ի՞նչ եղաւ. — Համբարձման տօնն ե՞րբ կը կատարենք. — Նախատօնակ ունի՞. — Ո՞րն է Շարականը. — Համբարձման տօնն ի՞նչ ալ կը կոչուի. — Ինչո՞ւ. — Ժողովուրդն ի՞նչ սովորութիւն ունի. — Ինչո՞ւ ուտիք է Զատկէն Համբարձում. — Ս. Հոգին ե՞րբ իջաւ առաքեալներուն վրայ. — Որպիսի՞ շնորհքներ ստացան. — Ե՞րբ կը կատարենք Հոգեգալուստը. — Քանի՞ օր կը տօնենք. — Ո՞վ կարգադրեց. — Հոգեգալուստն ի՞նչ ալ կը կոչուի. — Ի՞նչի յիշատակ է. — Պենտեկոստէն հայերէնն ի՞նչ է. — Ո՞րն է Շարականը։

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Յիսուս Խաչի վրայէն պատուիրեց Յովհաննէս առաքեալին որ իր մօրը խնամք տանի։ Այն օրէն սկսեալ՝ 16 տարի Մարիամ Յովհաննէսի քով կ'ապրէր մինչև իր մահը։

Վախճանելէն առաջ փափաքեցաւ տեսնել բոլոր առաքեալներն որոնք Հոգեգալուստէն ետքը ցրուած էին զանազան երկիրներ քարոզելու համար։ Բոլոր առաքեալները, բացի Հայաստան քարոզող Ս. Բար-

Թողիմէոս առաքեալէն, եկան Երուսաղէմ ու անոր վախճանը տեսան։ Անոնք վառած լապտերով ու սաղմոսերգութեամբ Աստուածամօր մարմինը տարին ամփոփեցին Գեթսեմանի պարտէզին մէկ այրին մէջ։ Թաղման Գ. օրն եկաւ Ս. Բարթողիմէոս՝ Հայոց առաքեալը։ Սոր խնդրանքով առաքեալները բացին այն այրն ուր Տիրամօր մարմինն ամփոփուած էր։ Բայց ո՛րքան զարմացան, երբ տեսան թէ Յիսուս Քրիստոս հրեշտակներու ձեռքով Իր մօր մարմինն երկինք տարած էր = Վերափոխած էր։ Ս. Բարթողիմէոս շատ ցաւեցաւ որ չկրցաւ Տիրամայրը տեսնել։ Միւս առաքեալները Ս. Բարթողիմէոսը մխիթարելու համար՝ Ս. Աստուածածնի պատկերն անոր ընծայեցին։ Ս. Բարթողիմէոս Հայաստան դառնալու ատեն, Տիգրիսի ափը՝ Կանդուար բերդի մօտ Հոգեաց վանքը չինեց ու այս պատկերը հոն դրաւ։

Տօնը. — Ս. Աստուածածնի վախճանման = վերափոխման յիշատակն է այդ տօնն որ Աստուածածին, Փոխումն, Ննջումն ալ կը կոչուի պարզապէս։ Որովհետև եկեղեցին կ'ընդունի թէ Քրիստոս ինքն եկաւ իր մայրը փոխադրելու. տօնին յիշատակութիւնը կը կատարուի Գալուս ի փոխումն մօր բայատրութեամբ։ Վերափոխումը հինգ տաղաւարներէն մէկն է և կը կատարուի Օգոստոս 15ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12էն մինչեւ 18 հանդիպող կիրակին։ Ունի չաբաթապահք, նաւակատիք, մեռելոց՝ տաղաւար ըլլալուն համար։ Աւելի հին դարերու մէջ երեք օր միայն կը կատարուէր, սակայն Շնորհալւոյն կարգադրութեամբ հիմայ ինն օր կը կատարուի կիրակիէն մինչեւ միւս երկուշաբթի։

Եւ որովհետև ամէն օր մեր աղօթքներու մէջ Ս. Աստուածածնի բարեխօսութիւնը կը խնդրենք, եկեղեցին կ'երգէ։

«Փառաւորեա՛լ և օրհնեա՛լ միշտ Ս. Կոյս Աստուածածին Մարիամ, Մայր Քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։»

«Մ'վ դու փառաւորեալ ու օրհնեալ միշտ Ս. Կոյս Քրիստոսի Մայր, Աստուածածին Մարիամ, մեր աղօթքը հասցո՛ւր քու Որդւոյդ և մեր Աստուծոյն։»

Խաղողօրհնեք. — Ամէն պաղաբերութեան երախայրիքն օրհնութեամբ նուիրել Աստուծոյ թէ և ոչ օրէնք, գոնէ բարի սովորութիւն մըն է։ Խաղողն իբր խորհրդանշան Հաղորդութեան՝ կ'օրհնուի եկեղեցւոյ մէջ հանդիսապէս ու ծիսական կարգադրութեամբ Ս. Աստուածածնի օրը, ո՛չ այնչափ տօնին հետ ներքին կապակցութեամբ, որքան եղանակին յարմարութեան ու խաղողներուն հասունցնալուն պատճառաւ։ Տեղ տեղ ուր խաղողն աւելի կանուխ կը հասնի, Վարդավառին կ'օրհնեն զայն։

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԻՒՍ ՏՕՆԵՐԸ

Տիրամօր յիշատակը փառաւորելու համար՝ Եկեղեցին Աստուածածնի անուան ութը տօներ հաստատած է այլ և այլ ժամանակներ։ — Ցղութիւն Ս. Աստուածածնի, Ծնունդ Ս. Աստուածածնի, Ընծայումն Ս. Աստուածածնի, Վերափոխումն, Գիւս Տփոյ, Գիւս Գօտւոյ։

1. Գիւս Տփոյ. — Ս. Աստուածածնի մնտուկին գիւտն է Գիւս Տփոյ։ Կ'ասանդուի թէ երկու Պոլսեցիներ պալատական եղբայրներ՝ Գալբէոս ու Կանդիդոս Երուսաղէմ ուխտի երթալով՝ զանազան տեղեր պտտած ատենին կը լսեն թէ Գալիլիոյ անուն անյայտ մէկ գիւղին մէջ հրեայ պառաւի մը տանը մէջ հրաշքներ կը գործուին։ Հետաքրքրուելով՝ կը տեսնեն հոն փոքրիկ մնտուկ մը որուն մէջ պահուած էր Ս. Աստուածածնի գլխուն շա-

ջակը։ Իրենք ալ ուխտի կ'երթան և վրան ծածկոց մը դնելու պատրուակաւ լաջակին մնտուկը կը վերցընեն, չիտակ Կ. Պոլիս կը բերեն Լեւոն կայսեր օրով (457–474) և մեծ թափորով կը զետեղեն Ս. Աստուածածնի եկեղեցին։ Ցունաց մէջ Ցունիս 2ին կը կատարուի ատոր տօնը։

Սիմէոն Կաթողիկոսն էր որ 1774ին այդ տօնը մեր մէջ մտցուց։

2. Գիւս Գօսւոյ. — Ե. դարուն սկիզբն Երուսաղէմի մէջ Ս. Աստուածածնի պատկանող գօտի մը երեւան կ'ելլէ ու Կ. Պոլիս բերուելով՝ Աստուածածնի եկեղեցւոյն մէջ կը պահուի և կ'ըլլայ բարեպաշտական առարկայ մը։ Այդ Գիւս Գօսւոյն կը տօնեն Օգոստոս 31ին։ Այս տօնն ալ Սիմէոն կաթողիկոսի օրով մեր մէջ մտաւ և զայն կը տօնենք Աստուածածնի Գ. կիրակին։

Թելադրութիւններ. — Յիսուս Խաչին վրայէն ինչ պատուիրեց Յովհաննէսին. Ս. Աստուածածին վախճանալէն առաջ ինչ փափաքեցաւ. — Ո՞ր առաքեալը չէր տասաւ. — Ինչպէս թաղեցին. — Ս. Բարթողիմէոս ե՞րբ հասաւ. — Առաքեալներն ինչ տեսան. — Առաքեալները Ս. Բարթողիմէոսի ինչ ընծայ ըրին. — Ինչու. — Վերափոխման տօնն ինչի յիշատակ է. — Ուրիշ ինչ կը կոչուի. — Ե՞րբ կը կատարենք. — Հիմայ քանի՞ օր առաջ է. — Ո՞վ կարգադրեց. — Ո՞րն է Ս. Աստուածածնի աղօթքը. — Ատով ինչ կը խնդրենք. — Խաղողօրհնէքն ե՞րբ կը կատարենք. — Ինչու. — Ուրիշ տեղեր ինչ կ'ընեն. — Ցոյներն ե՞րբ կ'օրհնեն. — Ո՞րոնք են Ս. Աստուածածնի միւս տօնները. — Ինչ է Գիւտ Տփոյ. — Ե՞րբ ու ինչպէս գտնուեցաւ. — Տօնն ե՞րբ հաստատուեցաւ. — Ինչ է Գիւտ Գօսւոյն. — Ե՞րբ ու ինչպէս գտնուեցաւ. — Տօնն ե՞րբ հաստատուեցաւ։

ԽԱՉԻ ՏՕՆ

Ընդհանրապէս «Խաչ» ըսելով կ'իմանանք նոյն իսկ այն քառաթեւն որ ծառայած է Քրիստոսի խաչելութեան և կը կոչուի Խաչափայտ, Կենաց փայտ։

Խաչին պատիւն ու նոյն իսկ պաշտօնն ընդհանուր է ամէն եկեղեցիներու մէջ, աղօթքներ կ'ուղղուին Խաչին, կը բարձրացնեն Խաչին զօրութիւնը, Խաչին կը վերագրեն այնպիսի ձիրքեր ու արդիւնքներ որ անձերու սեփական են և ոչ թէ իրերու, մինչև իսկ Խաչը կը նկատուի միջնորդ ու գործիչ։

Բայց բուն Խաչինվերաբերեալ ամէն պարագայները կ'ընծայենք ամէն արհեստակերտ խաչի ալ եթէ օձեալ ըլլայ, հոգ չէ թէ ինչ նիւթէ ըլլայ։ Խաչին վերագրած պատիւն ու պաշտօնը, գովեստն ու արդիւնք կ'ուղղենք Խաչեալ Փրկչին։ Խաչը փրկութեան իբրև գործիք կ'անձնաւորէ իրեն մէջ նոյն Խաչեալ Փրկչին անձնաւորութիւնը։ Այդ տեսութեամբ եկեղեցւոյ մէջ հաստատուած են Խաչի տօներն որ կապակցութիւն ունին պատմական պարագայի մը հետ։ Երբ խաչելութեան յիշատակով կը փառաւորենք Խաչը, Խաչեալ Փրկիչն է որ կը պաշտուի։

Մեր եկեղեցին կը կատարէ սա՛ Խաչի տօները։ 1. Երեւման խաչ, 2. Խաչվերաց, 3. Վարագայ խաչ ու 4. Գիւս խաչ։

ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉ

Կիւրեղ Երուսաղէմի Հայրապետը պաշտօնի անցած ատեն տեղի ունեցաւ Խաչին երեւումն Երուսաղէմի մէջ։ 351ին Հոգեգալստեան առտուան ժամը 3ին անաւոր մեծութեամբ լուսաւոր Խաչ մը երեւցաւ երկնքի վրայ, մէկ ծայրը Գողգոթայի և միւսը Զիթենեաց լերան վրայ։ Ասիկա շատ ժամեր տեւելով՝ Երուսաղէմի բոլոր բնակիչներէն տեսնուեցաւ որ զղջումով ու բարեպաշտութեամբ սկսան եկեղեցի դիմել։ Այս Երեւման պատմութիւնը գրուեցաւ նոյն իսկ Կիւրեղէն որ զայն ղրկեց Կ. Պոլիս Կոստանդիանոս Բ. Կայսեր։ Ասիկա հիմայ մեր եկեղեցւոյ մէջ կը կատարուի իբր ընթերցուածք։

Ցոյներն այդ Երեւման տօնը կը կատարեն Մայիս 7ին, թէև 351 Մայիս 19ին հանդիպեր է, իսկ մենք կը կատարենք դայն Յինանց Ե. կիրակին, Զատկէն 28 օր ետքն որով այս տօնն ապրիլ 19էն մինչև Մայիս 23 կրնայ հանդիպիլ։

ԽԱՉՎԵՐԱՑ

Խաչվերացն որ կը կոչուի նաև Վերացման խաչ ամէնէն հին է Խաչի տօներէն։ Իր պատմական սկզբնաւորութիւնն ալ մինչև Քրիստոնէութեան սկիզբը կը բարձրանայ, որովհետև Խաչը վերացնելու և փառաւորելու առաջին գործողութիւնը կ'ընծայուի Տեառն եղբայր Յակոբ առաքեալին որ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսն եղած է։ Ասիկա Խաչը բարձրացնելով ի տես ժողովրդեան՝ «Խաչի քո, Քրիստոս, երկրպագեմք» օրհնութիւն — աղօթքն ըսած է։ Խաչին փառաբանութեան երկրորդ պարագայն Գիւտ Խաչն, իսկ երրորդ պարագան ալ Խաչին վերադարձն է։

Տօնը. — Մեր եկեղեցին որ մեծ տօները կիրակի կը փոխադրէ, Խաչվերացի տօնն ալ կը կատարէ Սեպտ. 14էն ետքը կամ առաջ հանդիպող մերձաւորագոյն կիրակին, որ է Սեպտ. 11էն 17 օրերուն մէջ հանդիպող կիրակին։ Տօնին յիշատակութիւնը կապ ունի թէ Տեառնեղբօր, թէ Գիւտ Խաչի և թէ Խաչի վերադարձին, բայց գլխաւորը կը նկատուի Տեառնեղբայր Յակոբ առաքեալէն մնացած աւանդութիւնը։

Ս. Խաչին գերութիւնը Պարսկաստան. — Խոսրով Պարսից թագաւորն ուզեց վրէժը լուծել Իրէն սիրելի բարեկամ Հայկազն Մորիկ կայսեր մահուան զոր Խոսրով Փոկաս կայսրը սպաննել տուած էր 602ին։ Ուստի Խոսրով յարձակեցաւ Յունաց սահմաններն և հասաւ մինչև

Քաղկեդոն և յետոյ դարձաւ Կարին։ Եւ որովհետև Հայոց նախարար Մուշեղ Մամիկոնեանի դէմ թշնամութիւն կը տածէր, զօրք ղրկեց Տարօն որ Մուշեղը դանեն ու սպաննեն։

Այդ միջոցին Տարօնի Իննակնեան վանքի մօտ կը բնակէին «եօթն խոտաճարակ» ճգնաւորներ որոնք նահատակուեցան 604ին Պարսից զօրքերէն։

Երբ 610ին Ափրիկէի իշխան Հերակլ սպաննելով Փոկասը՝ ինք գրաւեց կայսրութեան գահը, Խոսրով արշաւեց Պաղեստին, առաւ Երուսաղէմ քաղաքը, 30,000 հոգի ու Քրիստոսի Խաչափայտը գերի տարաւ Պարսկաստան. Խաչափայտը դրաւ իր բաղինին մէջ ուր մնաց մինչև 629։

Հերակլ յարձակեցաւ Խոսրովի վրայ որ վախէն փախաւ Սելեւկիա, յետոյ դարձաւ Տիզբոն։ Խոսրովի որդին՝ Կաւատ հայրը սպաննեց ու ինք թագաւորեց։ Ասոր յաջորդեց Արտաշէս մանուկը։ Հերակլ երբ լսեց այս փոփոխութիւնը, Խոսրովի փեսայ Խուէմի խոստացաւ օգնել ու թագաւոր կարգել, եթէ յանձն առնէ դարձնել Խաչափայտը։ Խուէմ յօժարակամ ընդունեց այս առաջարկութիւնն ու Խաչափայտը պատուով դարձուց Երուսաղէմ։ Հերակլ ինք անձամբ եկաւ Երուսաղէմ և իր ուսին դրած Ս. Խաչը՝ տարաւ բարձրացուց խորանն և կարգեց Վերացման Խաչի տօն Սեպտ. 14ին։

ՎԱՐԱԳԱՑ ԽԱՉ

Ս. Հռիփսիմէ Իրէն հետ բերած էր բուն Խաչափայտէն մաս մը զոր ի վերջոյ պահած էր Վան քաղաքին մօտ Վարագ բարձրլերան վրայ Գաղիղիա կոչուած ժայռին մէջ։ Այդ Խաչափայտի մասը լուսաւոր տաճարի տեսիլքով յայտնեցաւ Թոդիկ ու Յովել ճգնա-

ջորիներուն 653ին և տեղէն ելլելով՝ եկաւ հանգչեցաւ Վարագայ վանքին եկեղեցւոյն տեղը։

Վարագայ վանքին մէջ հանգչող Խաչափայտն աւելի սովորական կերպով կոչուեցաւ Ս. Նշան։ Տօնը կը կատարուի Խաչվերացէն 15 օր առաջ, այսինքն Սեպտ. 25էն մինչև Հոկտ. 1 հանդիպող կիրակին։

Վարագայ խաչը չաբաթապահք ալ ունի որ Աշնանամուտի պահքն է։

Վարագայ խաչի շարականը.

«Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո, Քրիստոս, պահպանեա՛ զմեզ, մարդասէր, յաներեւոյթ թշնամւոյն. զի զու միայն ես թագաւոր փառաց, օրհնեա՛լ յաւիտեան։»

ԳԻՒՏ ԽԱՉ

Օրէնք էր որ մահապարտներու և մանաւանդ խաչեալներու մարմինն ալ իրենց տեղը կը մնար։ Քրիստոսի մարմինը Պիղատոսի հրամանաւ թաղում ունեցաւ. բայց Խաչը մնաց Գողգոթայի վրայ միւս խաչերուն հետ և հոն թաղուած մնաց, որովհետև իրը նախատինք Քրիստոնէութեան՝ Գողգոթան աղբիւս գործածուեցաւ։ Այսպէս շարունակեց երեք հարիւր տարի։ Մեծն Կոստանդիանոսի մայրը բարեպաշտ Հեղինէ թագուհին 326ին Երուսաղէմ գնաց ու այցելեց այն տեղերը, ուր Քրիստոս ծնած, քարոզած, չարչարուած ու խաչուած էր։ Անիկա ուզեց գտնել այն խաչն որուն վրայ Յիսուս բարձրացած էր։ Յուդա անուն բանգէտ հրեայ մը Գողգոթային տեղը յայտնեց։ Թագուհւոյն հրամանաւ պեղեցին ու 20 թզաչափ խորութեան տակ գտնուեցան երեք խաչեր քովէ քով, բայց կարելի չեղաւ Քրիստոսի Խաչը միւս երկու աւազակներու խաչերէն զատել։ Նոյն պա-

հուն մեռած պատանւոյ մը դիակը հետզհետէ խաչերուն վրայ դրին՝ հրաշքի սպասելով։ Ու երբ երրորդին վրայ հանջեցեալը յարութիւն առաւ, Քրիստոսի բուն Խաչը ճանչցուեցաւ։ Յուդա հրեայն Քրիստոնէութիւնն ընդունեց որ յետոյ Կիւրեղ եպիսկոպոսն եղաւ ու իր մօրը Աննայի հետ նահատակուեցաւ։ Երուսաղէմի այն ատենուան պատրիարքը Մակար Փրկչի Ս. Խաչը կանգնեց բարձր տեղ մը, ժողովուրդը ծունր դրաւ Խաչին առջև ու երկրպագեց։ Յետոյ Խաչն Երուսաղէմի Մայրտաճարին մէջ զետեղուեցաւ ու հոն մնաց 400 տարի։

Մենք Գիւտ Խաչը կը տօնենք Խաչվերացի Է. կիրակին որ կրնայ հանդիպիլ Հոկտեմբեր 23 էն 29։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏՕՆԵՐ

Եկեղեցւոյ նշանակութիւնը. — Եկեղեցին Աստուածային հաստատութիւն մըն է ու Քրիստոսի փրկագործութեան արդիւնք։ Եկեղեցիով ճշմարտութիւններ կ'աւանդուին մեզի, խորհուրդներ կը մատակարարուին, շնորհներ կը բաշխուին ու մեղքերու թողութիւն կը տրուի։ Եկեղեցին է մեզի համար Քրիստոնէական մարմնոյ ամբողջութիւնը, անոր գլխին՝ Քրիստոսի հետ միացման նշանն ու հաւատացեալներուն եղբայրութեան կապը։ — Եկեղեցին կը ներկայացուի իբրև «տաճար», «սեղան», «խորան», «երկինք», «Աստուծոյ աթոռ», «Քրիստոսի հարս», «հաւատացեալներու մայր» և.ն., որով Եկեղեցին կ'ըլլայ բոլոր փրկագործ անօրինութեանց արդիւնք։ Այդ նկատողութեամբ արժանի էր որ տօնելի դառնար Եկեղեցին։ Եկեղեցւոյ Տօն կը նկատուին 1. Նոր կիրակին, 2. Աշխարհամատեան կիրակին, 3. Էջմիածնի տօնը, 4. Տապանակի տօնը, 5. Շողակաթը, 6. Խաչի նաւակատիքը։

Առանցմէ զատ «Տօն եկեղեցւոյ» կը նշանակեն Խաչ-

վերացի եօթնեակին Գշ., Դշ. ու Եշ. օրերը։ Այդ երեք օրերը յիշատակութիւն են նաւակատիքին Հեղինէ Դշխոյի կողմէ Երուսաղէմի մէջ շինուած սա՛ չորս մեծ տաճարներուն. — 1. Ս. Յարութիւն (Գողգոթա), 2. Ս. Ծնունդ (Բեթղեհէմ), 3. Ս. Հաւքարձուն (Զիթենեաց) ու 4. Ս. Աստուածածին (Գեթսեմանի)։

Եկեղեցւոյ շարականը.

«Լուսով աստուածութեամբ քով, Քրիստո՛ս, լուսաւորեցեր Սուրբ զեկեղեցի, պահեա՛ զսա անչա՛րժ յաւիտեան»։

Թելադրութիւններ. — Խաչին ի՞նչեր կ'ուղղենք. — Խաչն ի՞նչ կը նկատուի.— Խաչ ըսելով՝ ի՞նչ կը հասկնանք. — Խաչին ուղղաձիգներն որո՞ւն կը մատուցանենք. — Ի՞նչու համար Խաչի տօն հաստատած են. — Խաչի քանի՞ տօն ունինք. — Ի՞նչ է Խաչվերացը. — Ի՞նչի տօն է. — Պարսիկներն ե՞րբ առին Երուսաղէմը. — Խաչափայտն ի՞նչ ըրին. — Ո՞վ եւ դարձուց. — Ե՞րբ. — Ատոր տօնն ե՞րբ հաստատուեցաւ. — Ե՞րբ կրնանք տօնել. — Տօնին յիշատակութիւնն ո՞ր պարագայներու հետ կապակցութիւն ունի. — Հին տեսն ի՞նչ սովորութիւն կար. — Խաչն ո՞ւր մնաց. — Ի՞նչու. — Խաչն ե՞րբ գտնուեցաւ. — Ո՞վ էր Թելադրողը. — Ի՞նչպէս ճանչցուեցաւ Քրիստոսի Խաչափայտը. — Ո՞վ գրեց Գիւտ Խաչին պատմութիւնը. — Ե՞րբ կը տօնենք. — Ո՞րն է Գիւտ Խաչի շարականը. — Ուրիշ ե՞րբ կ'երգենք. — Խաչն ե՞րբ երևցաւ. — Ի՞նչպէս երևցաւ. — Ժողովուրդն ի՞նչ ըրաւ. — Ո՞վ գրեց պատմութիւնը. Մեր եկեղեցին տարեկա ի՞նչ կ'ընէ. — Ո՞րն է Երևման Խաչի շարականը. — Ո՞վ սաւած էր Խաչափայտին մաս մը. — Ո՞ւր պահեց. — Ո՞րոնց երևցաւ. — Վարագայ Ս. Խաչն ե՞րբ հաստատուեցաւ. — Ո՞վ հաստատեց. — Միւս եկեղեցիներն ունի՞ն. — Ի՞նչ կը կոչուի.— Ե՞րբ կը տօնենք. — Ո՞րն է շարականը. — Եկեղեցին ի՞նչ նշանակութիւն ունի. — Ի՞նչպէս կը ներկայացուի. — Ո՞րոնք են Եկեղեցւոյ տօները. — Ուրիշ եկեղեցիներ ունի՞ն այս տօները. — Ուրիշ ո՞ր տօներն Եկեղեցւոյ տօն կը նկատուին. — Ուրիշ ե՞րբ կը կատարուի Եկեղեցւոյ տօն. — Ո՞րն է Եկեղեցւոյ շարականը։

Ե. ՍՐԲՈՑ ՏՕՆԵՐ

—

Եկեղեցին կը տօնէ Հին ուխտէն ու Քրիստոնէութեան առաջին հինգ դարերէն առնուած սուրբերը։ Իսկ Ե. դարէն ետք միայն Հայ եկեղեցւոյ սեպհական սակաւաթիւ սուրբեր աւելցած են։ Ասոր համար է որ կան սուրբեր զոր մենք չենք տօներ, այլ միայն կը յիշատակենք Ցայսմաւուրքին մէջ, թէեւ կը տօնեն յոյներն ու լատինները։

Շաբթուն մէջ միայն ուտիք օրերը՝ Բշ. Գշ. Եշ. ու Շբ. օրերը սրբոց յիշատակներ կը կատարուին, բայց ոչ կիրակի և ոչ պահոց օրեր։

ԱՒԱԳ ՏՕՆԵՐ

Աւագ տօն կը կոչուին սրբոց չորս յատուկ տօներն որ Աստուածայայտնութեան պահքէն առաջ կը կատարուին հետզհետէ և կը նկատուին իբրև վկայ Քրիստոսի Ծննդեան։ Այս չորս տօներն են, 1. Դաւիթ Մարգարէ և Յակոբ Տեառնեղբայր. 2. Ստեփանոս նախավկայ, 3. Պետրոս ու Պօղոս առաքեալներ, 4. Որդիք Որոտման՝ Յակոբոս Գլխադիր ու Յովհաննէս Աւետարանիչ։

Աւագ տօներուն յատկանիշն եղած են նախատօնակն ու Այսօր դասք երգը, որոնք վերջին կարգադրութեամբ Առաջին Լուսաւորչաց՝ Թադէոս ու Բարթողիմէոս սրբազան առաքեալներուն և Գրիգոր Լուսաւորչի երեք տօներուն ալ կատարուելուն՝ կերպով մը Աւագ տօներուն պատուոյն բարձրացած կը համարուին անոնք։

ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԷ ԵՒ ՅԱԿՈԲ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ

Դաւիթ իբրև թագաւոր օրինակ էր Աստուածորդւոյն համաշխարհային թագաւորութեան։ Դաւիթի թագաւորութեան ցեղը հոգեւորապէս կենդանացաւ Միածին Որդւոյն Աստուածային անձին մէջ, որովհետև Քրիստոս Դաւիթի զաւակ էր մարմնաւոր տեսակէտով։ Ուստի Քրիստոս կոչուած է «Որդի Դաւիթի։»

Յակոբայ Ալփեայ առաքեալն որ Քրիստոսի մերձաւոր ազգականներէն մէկն էր՝ կոչուած է Տեառնեղբայր. կը կոչուի նաև Արդար։ Ասիկա եղաւ Երուսաղէմի Առաջին եպիսկոպոսն որ քարկոծմամբ նահատակուեցաւ Քրիստոսի 62 թուականին։

Շարականը.

«Յաղթող գտաւ յօրհնաբանս երանելին Դաւիթ, որ զօրացաւ ի վերայ այլազգւոյն և հաւատով պարտեաց զանօրէն զԳողիաթ. զմարգարէն արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։»

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ստեփանոս մէկն էր այն եօթն սարկաւագներէն զոր առաքեալները ձեռնադրութեամբ կարգեցին Ս. Սեղանին սպասաւոր, եկեղեցական գոյքերու և ստացուածքներու պահապան և կարօտեալներու խնամակալ=Արդի աղքատախնամներու պաշտօնը։

Ստեփանոս Քրիստոնէական հաւատքով, յուսով ու սիրով լի՝ Քրիստոնէութիւնն աներկիւղ քարոզեց և հրեայներուն խստասրտութիւնը յանդիմանեց։ Ասոր համար

քարկոծմամբ նահատակուեցաւ և եղաւ Քրիստոնէական հաւատքի առաջին մարտիրոսը։

Շարականը.

«Նահատակ բարի Քրիստոսի եղեր այսօր ի միջի մեր՝ և մտեր ի վերնատունն խորհրդոյ յաւիտենականի։»

ՊԵՏՐՈՍ ՈՒ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼՔ

Պետրոս որ երբեմն կը կոչուէր Սիմոն՝ եռանդագին պրոտով եղաւ ճշմարիտ վկայ Ս. Աւետարանի և իր ընտանեաց համարձակութեամբ Պենտեկոստէի օրը քարոզելով Քրիստոսի մահն ու յարութիւնը՝ շատերը Քրիստոնէութեան դարձուց։ Եւ երբ իր առաքելութեան պաշտօնը կը կատարէր, Ներոն կայսեր յարուցած հալածանքի ատեն գլխիվար խաչուեցաւ։

Պօղոս որ նախ կը կոչուէր Սաղոս՝ Քրիստոնէութեան ոխերիմ թշնամին էր։ Քրիստոս յայտնուեցաւ անոր, դարձի բերաւ, տուաւ անոր միտք, սիրտ, զօրութիւն ու կարողութիւն որ ըլլայ Քրիստոնէութեան պաշտպան ու Քրիստոնէական հաւատքի տարածման սատարող։ Պօղոս Աւետարանական քարոզութեամբ ատելի եղաւ հրեայներուն և երկու անգամ բանտարկութենէ ետք՝ Ներոնի հրամանաւ նահատակուեցաւ։

Պօղոս եղաւ Քրիստոնեութեան Բ. հիմնադիրը։

Շարականը.

«Որ երկոքեանքն ընտրելովք լուսաւորչաքն աշխարհի, հաստատակիր վկայեցիր քո, Քրիստո՛ս, մաղթանաւք սոցա խնայեա՛ ի մեզ։»

ՈՐԴԻՔ ՈՐՈՏՄԱՆ

Զեբեթէոսի որդիները՝ Յակոբոս ու Յովհաննէս կոչուեցան «Որդիք Որոտման։»

Յակոբոս Պետրոսի ու Յովհաննէսի հետ ականատես եղաւ Քրիստոսի Պայծառակերպութեան։ Պաղեստինի մէջ Քրիստոսը քարոզեց և Հերովդէսի հրամանաւ 44ին նահատակուեցաւ։ Առաքեալներու դասուն մէջ առաջին մարտիրոսն է Յակոբոս «Գլխադիր»ը։

Յովհաննէս՝ իր անունով կոչուած Աւետարանին խմբագիրը՝ Քրիստոսի սիրելի աշակերտն էր որ Տիրամօր Վերափոխումէ ետք հաստատուեցաւ Եփեսոս=Այասուղուգ։ Քրիստոսի 9 թուականին աքսորուեցաւ Պատմոս կղզին ուր գրեց իր Յայտնութեան գիրքը։

Շարականը.

«Որ էն յիւութեան որդի միշտ յէէն, անեղանելի Ծնունդ հայրական, զոր ի վերուստ հնչեցին Որդիք Որոտման և յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խորհուրդ։»

Ս. ԹԱԴԷՈՍ ՈՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ

Քրիստոսի Համբարձումէն ետքը Ս. Թադէոս առաքեալն որ Յիսուսի աշակերտներէն մէկն էր՝ եկաւ Հայաստան, հետը բերաւ Փրկչին կողամուտ գեղարդն և քարոզեց Քրիստոնէութիւնը։ Հիմնեց Արտազու աթոռը և նահատակուեցաւ Սանատրուկ թագաւորէն։ Ս. Թադէոս քարոզեց Աղուանից ու Կապադովկիոյ, և նմանապէս հիմնեց Կեսարիոյ աթոռը։ Եդեսիոյ մէջ Քրիստոսի

հաւատաց Ուրհայաստանի գաւառապետ Ս. Աբգար Ուչամայի=Արշամի որդին որ փայլեցաւ բարեպաշտական կեանքով։

Ս. Թադէոսէն ետքը Հայոց քարոզեց (65) Ս. Բարթողիմէոս որ Հոգեւոյ վանքը չինեց ու հոն դրաւ Ս. Կոյսին պատկերը։ Յետոյ մորթազերծ մահով մարտիրոսացաւ Սանատրուկի հրամանաւ։

Ս. Թադէոս ու Բարթողիմէոս Հայերը լուսաւորեցին քրիստոնէական հաւատքով, ասոր համար կոչուեցան մեր Առաջին Լուսաւորիչները։ Հայ եկեղեցւոյ առաքելական քարոզութիւնը կ'սկսի Ս. Թադէոսէն ու Ս. Բարթողիմէոսէն։

Ս. Թադէոս Եդեսիոյ առաջնորդ ընտրեց Ադդէ խոյրարարն և բուն Հայաստանի առաջնորդ կարգեց Զաքարիա անունով եպիսկոպոսը։ Զաքարիա ժառանգեց Ս. Թադէոսի հիմնած Արտազու աթոռը։ Ս. Թադէոսի աշակերտն էին Ս. Սանդուխտ կոյսն ու Ս. Ոսկեանք։ Ս. Սանդուխտ կոյսն ու Ս. Ոսկեանք ալ նահատակուեցան։ Հայ եկեղեցին կը ծօնէ ասոնց յիշատակը։ Ս. Սանդուխտ որ նահատակուեցաւ իր հօր Սանատրուկ թագաւորին հրամանաւ՝ բովանդակ Քրիստոնէութեան առաջին նահատակուհին է և Հայաստանեայց եկեղեցւոյ պարծանք։

Ս. Թադէոսի ու Ս. Բարթողիմէոսի նահատակութենէն ետք, հակառակ Քրիստոնէութեան դէմ յարուցուած հալածանքին, Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ տեղ տեղ ծածուկ կը պաշտուէր մինչև Ս. Գրիգոր։

Սրբազան Առաքելներուն շարականը.

«Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք և բարձր աշտանակք, ոսկեղէն բաժակք և ժիր մատուռակք, Հայաստանեայց հայր հոգեւոր Բարթողիմէոս ու Թադէոս։»

Թելադրութիւններ. — Եկեղեցին ի սկզբան ինչ կը ասէր. — Ե. գարէն ետք ինչ ըրաւ. — Ինչու համար Յոյներն ու Լատիններըժեզմէ աւելի սուրբեր կը ունեն. — Ո՞ր օրերը միայն սրբոց ուն կը կատարուի. — Կիրակի օ՞ր. — Ո՞ր ասներն Աւագ կը կոչուին. — Ինչու. — Աւագ ասներուն յատկանիշն ո՞րոնք են. — Ո՞րոնք են Աւագ ասները. — Ո՞վ էր Դաւիթ. — Ո՞րոնց վրայ թագաւորեց. — Ինչեր ըրաւ. — Դաւիթ ինչի օրինակ է.— Ո՞ր ուն հայրն է. — Ինչու Աստուածահայը մարգարէ կոչուած է. — Քրիստոս ո՞ր ցեղէն ծնաւ. — Ցակոբ Ալփեան ինչ կոչուած է. — Ինչու. — Ինչպէս նահատակուեցաւ. — Ո՞րն է շարականը. — Ո՞վ էր Ս. Ստեփանոս. Ինչու նահատակուեցաւ. — Ո՞րն է շարականը. — Ս. Ստեփանոսի օրն ինչ սովորութիւն կայ. — Պետրոս առաքեալն ինչ եղաւ. — Պետրոս ե՞րբ և ո՞ր ուն նահատակուեցաւ. — Առաջ ինչ կը կոչուէր. — Պողոսի նախկին անունն ինչ էր. — Ե՞րբ Պողոս կոչուեցաւ. — Առաջ ինչ էր Քրիստոնէութեան, յետոյ ինչ եղաւ. — Ո՞րն է շարականը. — Ո՞րոնք Որդիք Որոտման կը կոչուին. — Յակոբոսի կանանց պարագայներն ո՞րոնք են. — Առաքեալներուն մէջ ո՞րն է առաջին մարտիրոսը. — Ինչ անուանով ծանօթ է. — Ինչ ըրաւ Յովհաննէս — Ո՞ր աքսորուեցաւ. — Ո՞րն է շարականը. — Որդւոց Որոտման ուն ո՞ր սաղմոսը կ'երգեն. — Ուրիշ ե՞ր այդ պրաձայն սաղմոսը կ'երգեն. — Ո՞րոնք և ե՞ր քարոզեցին Հայոց. — Ս. Թադէոս ուրիշ ո՞ր քարոզեց. — Ո՞ր տեղը հաստատեց. — Զո՞վ եպիսկոպոս դրաւ Եղեսիոյ. Հայոց. — Ինչպէս նահատակուեցաւ. — Ո՞րոնք աշակերտեցան Ս. Թադէոսի. — Ե՞ր և ինչպէս նահատակուեցաւ Ս. Բարթողիմէոս. — Հայոց մէջ Քրիստոնէութիւնն ինչ եղաւ. — Ո՞րն է Հայոց առաքեալներուն շարականը։

Ե. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցէք հետեւեալները.

Աւագ շաբաթ կը կոչուի...։ — Վեցօրեքը նուիրուած է...։ — Բշ ...։ — Դշ ...։ — Դշ ...։ — Պասէք կը կոչուի...։ — Յիշատակ է...։ — Հրեայները կը կատարեն...։ — Ծաղկազարդին...։ — Յիսուս Զատկական ընթրիքն ըրաւ...։ — Պատուիրեց...։ — Յիսուս Ղանդուային կատարեց...։ — Ասոր յիշատակը կը կատարենք սա՛ արարողութեամբ ...։ — Յիսուսի թշնամիներն էին...։ — Յուդան մատնեց...։ — Յիսուսի թշնամիները կ'ամբաստանէին. .։ — Յիսուս...։ Խաչին վրայ գրուած էր...։ — Խաչելութեան աղօթքով կը դատապարտենք...։ — Պատեցին Յիսուսը...։ — Հրէական սովորութիւնն էր...։ — Քովը գրին ...։ — Մեռնք Թաղումը կը կատարենք...։ — Եկած էին Յիսուսի գերեզմանը...։ — Քաղաք վազեց...։ — Զատիկը կը կատարենք...։ — Զատիկ է մեզի...։ Հին Հայոց Զատիկն էր...։ — Զատկին սովորութիւն է...։ — Ցինուելք կը կոչուին .։ — Զատկի յաջորդող կիրակիներն են...։ — Կրկնազատիկը յիշատակ է...։ — Կանաչ կիրակին. .։ — Եկեղեցւոյ յատուկ է ...։ — Կարմիր կիրակին ...։ — Քրիստոս երկրին երեսը մնաց...։ — Վերջին անգամ պատուիրեց...։ — Աշակերտները տարաւ...։ — Յետոյ. .։ — Համբարձման ասելք կը կոչուի նաև...։ — Սովորութիւն է...։ — Զատկէն Համբարձումը ...։ — Ս. Հոգին իջաւ...։ — Առաքեալները ստացան...։ — Հոգեգալուստը կը կոչուի նաև... և յիշատակ է...։ — Յիսուս Խաչին վրայէն պատուիրած էր...։ — Ս. Աստուածածնին վախճանելէ առաջ...։ — Ս. Բարթողիմէոս...։ — Առաքեալները Ս. Բարթողիմէոսի...։ — Ս. Աստուածածնի աղօթքն է .։ — Ասով կը խնդրենք...։ Խաղողը կ'օրհնուի...։ — Ս. Աստուածածնի միւս ասներն են...։ — Խաչին կ'ուղղենք...։ — Խաչը կը նկատուի...։ — Խաչ ըսելով կը հասկնանք...։ — Խաչի ուղղուածներ...։ — Խաչի ասները հաստատած են. .։ — Խաչվերացը յիշատակ է...։ — Խաչը գտնուեցաւ...։ — Հին ատեն սովորութիւն էր ...։ — Քրիստոսի Խաչափայտը ճանչցուեցաւ...։ — Երեմիան Խաչը յիշատակ է...։ — Վարդայ Խաչը յիշատակ է...։ — Ցատուկ է միայն...։ — Եկեղեցին կը ներկայացուի...։ — Եկեղեցւոյ ասներն են ... և միայն յատուկ են։

Զ. Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՈՒ ԻՐ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ ՏՕՆԵՐ

Հայոց Խոսրով Թագաւորին սպաննիչ՝ Անակ Պահլաւունի նախարարին որդին էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ որ ծնաւ (257) Վաղարշապատ քաղաքը։

Անակ Պարսկաստանէն փախստական էր և կը վայելէր Խոսրովի սէրը։ Օր մը արքունի որսի ատեն պատեհ առիթ գտնելով՝ սպաննեց Թագաւորը և փախչելու միջոցին խեղդուեցաւ Երասխ գետը։ Խոսրով ոգեվարքի պահուն հրամայեց Անակի ընտանիքը բնաջինջ ընել, միայն ազատեցան երկու մանչ՝ Սուրէն ու Գրիգոր։ Սուրէն փախցուցին Պարսկաստան, իսկ Գրիգորի Սոփիա դայեակը տարաւ զայն Կեսարիա։ Սոփիա քրիստոնեայ էր, մկրտել տուաւ Գրիգոր դրաւ անունը։ Ասիկա քրիստոնէական կրթութիւն մը ստացաւ Կեսարիոյ մէջ, ամուսնացաւ Մարիամ անունով աղջկան մը հետ և ունեցաւ 2 զաւակ՝ Վրդանէս ու Արիստակէս։

Ս. Գրիգոր երբ Կեսարիայէն դարձաւ, Տրդատ Թագաւորը հրամայեց անոր որ Հայոց Անահիտ դիցուհւոյն արձանի զլուխը ծաղկեայ պսակ դնէ. Ս. Գրիգոր չկատարեց հրամանն և խոստովանեցաւ թէ ինք քրիստոնեայ է։ Տրդատ շատ բարկացաւ և շատ չարչարանքներ տուաւ, բայց Ս. Գրիգոր հաւատքը չուրացաւ։ Հրամայուեցաւ որ մահապարտներու գուբը՝ զնտանը=Խոր Վիրապը նետեն (286)ին։

Ասոր յիշատակը կը տօնենք «Մուտն ի Վիրապ»ն անունով։

Ս. Գրիգոր հոն կենդանի մնաց 15 տարի։

Յետոյ Աստուծոյ հրամանաւ, հրաշափառ տեսիլքով Ս. Գրիգոր Խոր Վիրապէն հանեցին (301) որ աղօթքով

բժշկեց ախտաժէտները՝ Տրդատ Թագաւոր և իր համախոհ մեղսակից նախարարները։

Ասոր յիշատակը կը տօնենք «Ելն ի Վիրապէն» անունով։

Այնուհետև Ս. Գրիգոր քարոզեց Քրիստոնէութիւնն և բոլոր նախարարները, իշխաններն ու ժողովուրդը հաւատացին Յիսուսի։

Յետոյ Կեսարիա դրկուեցաւ բոլոր ժողովրդին փափաքին համաձայն Դաւոնդիոս Պատրիարքէն Հայոց Հայրապետ ձեռնադրուելու և դարձին Արածանի գետին եղերքը մկրտեց Հայ ժողովուրդը։ Շինեց շատ եկեղեցիներ, բացաւ ուսումնարաններ, սահմանեց եկեղեցական տօներ ու Աստուածպաշտութեան կարգը։

Ս. Գրիգոր իր կեանքի վերջին տարիները վարեց ճգնաւորական կեանք ու վախճանեցաւ Եկեղեաց (Երզնկայի) Սեպուհ=Սիրնքոր լերան Մանեայ այրը։ Հովիւներ գտան անոր մարմինն և թաղեցին։ Յետոյ անոր նշխարները տեղափոխեցին Ս. Էջմիածին։

Ասոր յիշատակը կը տօնենք «Գիւտ Նշխարաց Ս. Լուսաւորչի» անունով։

Ս. Գրիգոր Հայերը քրիստոնէական հաւատքով լուսաւորելուն համար՝ կոչուեցաւ Բ. Լուսաւորիչ, իսկ չարչարանքներ կրելուն՝ Մեծ խոստովանող։

Այսպէս Հայ եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով երեք տօն կը կատարէ — «Մուտն ի Վիրապն», «Ելն ի Վիրապէն» ու «Գիւտ Նշխարաց»։

Վերջինը չարաթապահք ունի։

Շարականը.

«Հովիւ քաջ բանաւոր հօտի՝ Տէր Ս. Գրիգոր, հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման սուրբ առաքելոցն։»

1. ԱՌԱՋԱՒՈՐԱՑ ՊԱՀՔ

Բուն բարեկենդանէն երեք շաբաթ առաջ կիրակին կը կոչուի Առաջաւորաց Բարեկենդան ու կիրակիին յաջորդող հօթնեակին հինգ օրերն ալ՝ Առաջաւորաց Պահք։ Այս միջոցին սաստիկ պահք կը պահուի ծոմով միասին, և նոյն իսկ Ս. Պատարագ չի մատուցուիր։ Պահքին Ուր. օրը կը յիշատակուին Յովհաննու քարոզութիւնն ու Նինուէի ապաշխարութիւնը, ոչ թէ իբրեւ Ս. Յովհան Մարգարէի տօն, այլ պարզապէս իբրեւ մեծ ապաշխարութեան օրինակ մը։ Առաջաւորք կը նշանակէ իբրեւ առաջին պահք որ Լուսաւորիչէն հրամայուած առաջին պահքին յիշատակութիւնն է։ Որովհետեւ Լուսաւորիչը Վիրապէն ելլելէն ետքը, երբ սկսաւ աւետարանել, նախ հինգօրեայ շարունակ ու անսուաղ պահքով պատրաստեց Հայ ժողովուրդը, Տրդատ թագաւորը արքայազուն իշխաններն ու նախարարներն ալ միասին բժշկութիւն ու լուսաւորութիւն ընդունելու Նինուէացւոց ապաշխարութեան նմանութեամբ։

Ուրիշ եկեղեցիներ չունին այս պահքը։ Այդ պահոց շաբաթ օրը Ս. Սարգսի յիշատակը տօնուելուն՝ պահքն ու բարեկենդանն ալ Ս. Սարգսի անունով կը կոչենք, սակայն այդ պահքին ու բարեկենդանին հետ կապակցութիւն չունին ատոնք։

«Առաջաւորաց պահք»ը Հայոց առաջին ապաշխարութիւնն է։

2. Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՔ ՈՒ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆՔ

Ս. Լուսաւորչի հետ կապուած են նաև Ս. Էջմիածնի, Ս. Հռռիփսիմեաց, Ս. Գայիանեանց տօնքերը։ Ս.

Հռիփսիմեանք 40 կոյսեր էին որոնց վերակացուն էր Ս. Գայիանէ։ Ս. Լուսաւորչի Խոր-Վիրապ եղած ատեն, Տրդատ թագաւորին հրամանաւ երբ Քրիստոնէութիւնը կը հալածուէր, 301ին նահատակուեցան նախ Ս. Հռիփսիմէ, յետոյ իր ընկերուհիները։ Ինն օր նահատակներու մարմինը բացօթեայ մնաց։ Ս. կոյսերէն Ս. Մանէ ու Ս. Նունէ միայն ողջ մնացին։ Նունէ քարոզեց Վրաց ու Աղուանից։

Ս. Հռիփսիմէ վիզէն կախած էր Խաչափայտէն մասմը զոր պահեց Վարագայ լերան վրայ հեթանոս հայոց ձեռքը չիյնալու համար և որուն գիւտը կը յիշատակենք «Վարագայ Խաչ» անունով։

Ս. Գրիգոր յետոյ ատոնց մարմինն ամփոփեց ու Ս. Հռիփսիմէի ու Ս. Գայիանէի դերեզմաններուն վրայ շինեց վկայարաններ Ս. Էջմիածնի մօտ։

Ս. Հռիփսիմեանց շարականը.

«Անձինք նուիրեալք Սիրոյն Քրիստոսի, —Երկնաւոր նահատակք և կուսանք խմաստունք — Ի պարծանս ձեր բարձրացեալ՝ — Տօնէ Մայր Սիոն դստերովք իւրովք։»

3. ՍՈՒՐԲ ՏՐԴԱՏ

Ս. Տրդատ մոլեռանդ հեթանոս էր, սակայն Ս. Գրիգորի ձեռքով ընդունեց Քրիստոնէութիւնը. Ջանաց տարածել Աւետարանի կրօնքը Հայաստանի մէջ և դրծակցեցաւ Ս. Լուսաւորչի՝ աղգային ու կղերական բոլոր ձեռնարկութեանց։

Ս. Տրդատի կինն էր Ս. Աշխեն ու քոյրն էր Ս. Խոսրովիդուխտ որոնք նմանապէս Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Քրիստոնեայ դարձան։ Երեքն ալ նիւթական

ձեռնտուութեամբ աջակից եղան Հայոց կրօնական, կրթական ու վանական հաստատութեանց կառուցման ու անոնց բարոյական բարգաւաճման։

Թելադրութիւններ. — Որո՞ւն որդին էր Գրիգոր. — Ո՞ւր ծնաւ. — Անակ կրօնով ի՞նչ էր. — Սոփիա ո՞ւր տարաւ Ս. Գրիգորը. — Ի՞նչպէս կրթել տուաւ. — Ս. Գրիգորի Կեսարիայէն դարձին ի՞նչ հրամայուեցաւ. — Կատարե՞ց. — Տրդատ թագաւորն ի՞նչ ըրաւ. — Ո՞ւր նետեցին. — Ե՞րբ. — Ո՞րն է տարի տօնը — Հոն քանի՞ տարի մնաց. — Ե՞րբ վիրապէն հանեցին. — Ի՞նչու. — Ս. Գրիգոր ի՞նչ ըրաւ. — Ո՞ւր ղրկուեցաւ. — Ի՞նչու. — Ս. Գրիգոր իր կեանքի վերջին տարիներն ի՞նչպէս անցուց. — Ս. Գրիգոր ի՞նչ կը կոչուի. — Ի՞նչու. — Հայ եկեղեցին քանի՞ տօն հաստատած է Ս. Գրիգորի. — Ե՞րբ կը տօնենք Գրիգորի անունը. — Ե՞րբ է Առաջաւորաց պահքը. — Ի՞նչ կ'ընեն այդ պահքին. — Ի՞նչի յիշատակ է. — Ո՞վ հաստատեց. — Ուրիշ եկեղեցիներ ունի՞ն. — Ատանք ի՞նչեր կ'ըսեն. — Իրաւունք ունի՞ն. — Այդ պահքն Հայոց ի՞նչն է. — Ս. Գրիգոր Լուսաւորչի հետ ո՞ր տօները կապուած են. — Որո՞նք էին Ս. Հռիփսիմեանք ու Ս. Գայիանեանք. — Ո՞ւրկէ եկան. — Ի՞նչու նահատակուեցան. — Ե՞րբ. — Ս. Հռիփսիմէ վիզէն ի՞նչ կախած էր. — Ո՞վ հաստատեց տօնը. — Ե՞րբ. — Ո՞րն է Ս. Գրիգորի շարականը. — Հռիփսիմեանցն ու Գայիանեա՞նցը. — Ատանց անունով ո՞ւրտեղ վկայարաններ կան.— Ս. Տրդատ նախ կրօնով ի՞նչ էր. — Ո՞րու ձեռքով ի՞նչ եղաւ.— Ո՞վ էր Ս. Տրդատի կինը. — Քո՞յրը. —Ատանք ի՞նչեր ըրին։

4. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆ

Ս. Լուսաւորիչը Խոր Վիրապէն ելլելէն ու Քրիստոսի հաւատքը Հայաստանի մէջ արքունիքին, նախարարներուն և ժողովրդին 65օր քարոզել սկսելէն ետքը տեսաւ այն նշանաւոր տեսիլքն ուր Միածինն երկինքէն իջնելով՝ ձեռքը բռնած ոսկի մուրճով բաղխեց այն տեղն որ էր հեթանոս Հայաստանի Սանդարամետի գետնափոր մեհեանը։ Հիմա կը գտնուի Ս. Էջմիածնի տաճարը։ Ս.

Լուսաւորիչ այսպէս հրաշալի կերպով նշանակեց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ երկնային հաստատութիւնը (302)։

Տօնը. — Միածնի իջումն ու Հայ եկեղեցւոյ հաստատութիւնը թէ՛ ընդհանրապէս Քրիստոսի եկեղեցւոյ և թէ մասնաւորապէս Հայ եկեղեցւոյ տօնն է որ կը կատարուի Հոգեգալստեան Բ. կիրակին և որ Մայիս 24 էն Յունիս 27 կրնայ հանդիպիլ։

Այս տօնը կը կոչուի նաև Տօն Կաթողիկէ Էջմիածնի։

Տօն Կաթողիկէ Էջմիածնի շարականը.

«Էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ Նմա. — Զոյնք հնչեցին սանդարամետք անդնդոց։ — Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի՝ — Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային։ — Եկայք չինեսցուք սուրբ զԱթոռանն լուսոյ, —Քանզի խմա ծագեաց մեզ փրկութիւն ի Հայաստան աշխարհի։»

5. ՏԱՊԱՆԱԿԻ ՏՕՆ

Նուիրական արկղ մըն էր Տապանակ ուիսին ուր դրուած էին Տաճարաձեւայ օրինաց աստուածադիր տախտակները։ Տապանակը սատիմի փայտէ էր՝ ներսն ու դուրսն ոսկեպատ, չորս ոտք երկայն, երկու ոտք, երեք մատ լայն ու բարձր։ Ուսի վրայ կրելու համար՝ տապանակն ունէր մէկ կողմն երկու օղակ ոսկիէ, միւս կողմը՝ երկու օղակ ոսկիէ որոնցմէ կ'անցնէին ոսկեպատ ձողեր։ Տապանակին կափարիչը կը կոչուէր Քաւութիւն որուն երկու ծայրերը կային դէմ առ դէմ կեցած երկու Քերովբէներ։ Այս Քերովբէներն աչքերնին խոնարհած Քաւութեան վրայ՝ զայն կը ծածկէին իրենց թեւերով։ Հոս մանաւանդ կը բնակէր Աստուած ու կը պաշտուէր և հոս

քահանայապետը կը մատուցանէր Բաւութեան տարեկան մեծ զոհը։ Տապանակի մէջ կը պահուէին Մանանայով լի սափորն ու Ահարոնի ծաղկեալ գաւազանը։ Տապանակը կը պահուէր Տաճարին Սրբութիւն Սրբոց կոչուած ներքին բաժնին մէջ ուր միայն քահանայապետը կրնար մտնել տարին անգամ մը։ Վերջին անգամ Սողոմոն դրաւ զայն նորաշէն տաճարին մէջ, ասկէ անյայտ եղաւ Նաբուգոդոնոսորի առեն Երուսաղէմի կործանման առթիւ։ Բաբելոնի գերութենէն ետք չենուած Երուսաղէմի տաճարը Տապանակ չունեցաւ։

Տօնը. — Վարդավառի նախընթաց նաւակատիքի օրը կը կատարուի «Տապանակի տօն»ն որ յիշատակ է «Տապանակ Հնոյ և Նորոյս սուրբ եկեղեցւոյ»։ Տապանակի տօնը կը նշանակէ Հին ուխտին հաստատութիւնն որ նախընթացն ու օրինակն եղաւ Նոր ուխտին որ է Քրիստոսի եկեղեցին։

Տապանակի շարականը.

«Տեղի ապաւէնի և Ժողովարան բանաւոր հօտի, բնակարան հրեշտակաց, նաւահանգիստ արդարոց և մեղաւորաց քաւարան՝ զարդարեալ առաքելովք և մարգարէիւք։»

6. ՇՈՂԱԿԱԹ

Ս. Լուսաւորչի տեսիլքէն առնուած է Շողակաթ անունը, ինչպէս նաև Էջմիածնի անունը։ Շողակաթ կը նշանակէ «Շող լուսոյ կաթեց» երկինքէն։ Երկու տօներն ալ—Ս. Էջմիածնի տօնն ու Շողակաթը—Լուսաւորչի տեսիլքին հետ կապուած են, միայն թէ Էջմիածնի տօնն ուղղակի տեսիլքին համեմատ Էջմիածնի Մայր-Տաճարին նաւակատիքի տօնն է։ Մայր Տաճարը Ս. Աստուածածնի

նուիրուած ըլլալով՝ Վերափոխման մեծ տօնին նախընթաց շաբաթ օրը Շողակաթի տօն կը կատարուի, այսինքն Մայր-Տաճարին նաւակատիքին տարեդարձը։ Այս տաճարը օծուեցաւ 303ին։

Շարականը.

«Ուրախ լիր, Սուրբ Եկեղեցի, — քանզի Քրիստոս արքայն երկնից—այսօր պսակեաց զքեզ խաչին իւրով — զարդարեաց զամուրս քոյ — սքանչելի փառօք իւրովք։

7. ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Համբարձման յաջորդող կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ որ իր անունն առած է պարզապէս օրուան Աւետարանէն։ Հայ եկեղեցին Նոր կիրակիէն սկսեալ՝ Զորս Աւետարանները կը կարդայ ամէն օր կարգաւ։ Քրիստոսի Երուսաղէմ գալուստան կտորները Յինանց կիրակին ինկած են, ասկէ իր անունը։ Ազգային յիշատակ մը ալ ամփոփած է. ատանդութեամբ հասած է թէ հրեշտակ մը ամէն օր Խորվիրապը Ս. Լուսաւորչին կ'այցելէր։ Համբարձման Դ. օրն ինկած ըլլալով՝ Լուսաւորչին բացատրած է թէ Քրիստոսի Համբարձումն տօնելու համար՝ հրեշտակներու դասերէն իւրաքանչիւրն օր մը հանդէս կը կատարէ, և ինք Դ. դասէն ըլլալով՝ Դ. օրը չէր ուզած իր դասին հանդէսներէն բացակայիլ։

Երկրորդ Ծաղկազարդը Մայիս 31ին Յունիս 6 կըրնայ հանդիպիլ։

Թելադրութիւններ. Ս. Գրիգոր Ի՞նչ տեսաւ տեսիլքը. Ասով ի՞նչ նշանակեց. — Տօնն ի՞նչ նշանակութիւն ունի. — Ի՞նչ կը կատարենք. Ո՞րն է շարականը. Ի՞նչ էր Տապանակ ուխտին. Ինչպէս շինուած էր. — Կոփարիչն ի՞նչ կը կոչուէր. Վրան որո՞նք

նկարուած էին. — Մանաւանդ ո՞ւր կը բնակէր Աստուած. — Տաղանակին մէջ ի՞նչեր կային. — Ե՞րբ ու ի՞նչ եղաւ Տաղանակը. — Ե՞րբ և ի՞նչու կը տօնենք Տաղանակը. — Ո՞րն է Տաղանակի շարականը. — Ի՞նչ կը նշանակէ Շողակաթ. — Ի՞նչի հետ կապուած է. — Ի՞նչի տօն է. — Ե՞րբ կը կատարենք. — Այդ տաճարն ե՞րբ օծուեցաւ. — Ո՞րն է շարականը. — Ե՞րբ կը կոչուի Բ. Ծաղկազարդ. — Ի՞նչու. — Ո՞վ և ի՞նչու հաստատեց այս տօնը. — Ե՞րբ կրնանք կատարել

8. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՈՐԴԻՆԵՐՆ ՈՒ ԹՈՌՆԵՐԸ

Սուրբ Լուսաւորչէն ետք, Հայոց Հայրապետութիւնը մնաց իր ցեղին մէջ որմէ Հայոց Կաթողիկոս եղան հետզհետէ՝ Ս. Արիստակէս ու Ս. Վրթանէս իր որդիները։ Ս. Վրթանէսի որդին Ս. Գրիգորիս Վրաց ու Աղուանից կաթողիկոս ձեռնադրուեցաւ և նահատակուեցաւ Սմարաս աւանը 342ին։ Ս. Վրթանէսի յաջորդեց իր միւս որդին Ս. Յուսիկ որ նահատակուեցաւ 362ին Տիրան թագաւորին հրամանաւ Յուլիանոս Ուրացող կայսեր զրկած պատկերը Ծովայ գաւառի Մայր եկեղեցւոյ մէջ չկախելուն համար։ Ս. Յուսիկ թաղուեցաւ Թորդան աւանը։

Ս. Յուսիկի թոռն էր Մեծն Ներսէս Պարթև Ս. Հայրապետ։ Մեծն Ներսէս չինեց դպրանոցներ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, հիւրանոցներ ու ամէն տեսակ բարեգործական հաստատութիւններ։ Ասոնց տեսուչ կարգեց իր Խադ սարկաւագը ու 366ին Վաղարշապատի մէջ Մեծն Ներսէս եկեղեցական ժողով գումարեց։ Այդ ժողովին մէջ ուր ներկայ էին թագաւորը, նախարարները, իշխանները՝ վճռուեցաւ որ այնուհետեւ Հայոց կաթողիկոսները Ս. Էջմիածնի մէջ ձեռնադրուին Չերթան Կեսարիա և իրենց վաւերացումը չստանան այն տեղի եպիսկոպոսէն։

9. Ս. ԹԱՐԳՄԱՆԻՉՔ

Մեծն Ներսէսի որդին Ս. Սահակ Պարթև հայրապետական աթոռը բարձրանալով՝ պայծառացոյց եկեղեցիները, շինել տուաւ բարեգործական ու կրթական հաստատութիւններ, սահմանեց եկեղեցական կարգեր ու կանոններ։

Ս. Սահակի օժանդակն էր Ս. Մեսրոպ Մաշտոց Հացեկացի (Տարօն=Մուշ) որ 404ին ձեւակերպեց վերաքննուած Հայ նշանագիրները։ Այնուհետեւ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ թարգմանեցին իրենց Եղնիկ, Կորիւն, Ղեւոնդ Եայլն աշակերտներու հետ՝ Ս. Գիրքը, յօրինեցին եկեղեցական ձայներն ու երգերը։ Ս. Մեսրոպի գիրը դարերու ընթացքին մէջ զանազան եղանակաւորումներ կրեց, ինչպէս տեսանք «Հայոց Պատմութեան» Միջին Դասընթացքի մէջ։

Հայ եկեղեցին ամէն տարի կը կատարէ մեր երանաշնորհ թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ տօնը։ Այդ օրը Դպրոցական ու Դրական մեծ տօնն է։ Մեր գրագէտները կը վարձատրուին «Յովսէփ Իզմիրեանցի հաստատած մրցանակով». Ս. Սահակ թաղուեցաւ Աշտիշատ, իսկ Ս. Մեսրոպ՝ Օշական։

10. ՏՕՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՁՕՐԱՎԱՐԱՑ

Ս. Վարդան զօրավար իր ճշմարիտ կրօնասէր ու հայրենասէր 1016 ընկերներով, 451ին Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտպանութեան համար նահատակուեցաւ որով պահուեցաւ մեր Ս. եկեղեցւոյ գոյութիւնը։

Ս. Վարդանանց նահատակութիւնը խրախուսիչ օրինակ է որ հայ եկեղեցւոյ կղերն ու ժողովուրդը

համերաշխ ոգւով պահեն Հայ եկեղեցւոյ անկախութիւնը:

Վարդանանց տօնի օրը յիշատակ է Մեռելոց և Ազգային Տօն:

Ս. Վարդանանց Շարականը.

«Նորահրաշ պսակաւոր և զօրազլուխ առաքինեաց, վառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու, Վարդան քաջ նահատակ՝ որ վանեցեր զթշնամին, վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զԵկեղեցի:»

11. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՔ

Ս. Սահակայ, Ս. Մեսրոպայ աշակերտներն էին «Ս. Ղեւոնդեանք» — քահանայներ ու եպիսկոպոսներ — որ Ս. Վարդանանց նահատակութենէն ետք շրջայակապ Պարսկաստանի Տիզբոն մայրաքաղաքը տարուեցան և յետոյ Նիւշապուհ քաղաքն աքսորուելով՝ հոն նահատակուեցան:

Ս. Ղեւոնդեանց տօնը կը յիշեցնէ մեզի թէ Ս. Սուրբ տարանի սրբասէր, հոգեւոր պաշտօնեայներն իրենց անձն օրինակ հանդիսացնելու են ժողովրդին որ ամէն պարագայի մէջ հաւատարիմ մնան իրենց Մայրենի եկեղեցւոյն և «նահատակուին Աղդին փրկութեան»:

Քրիստոնէութեան համար Ս. Վարդաններէն ու Ս. Ղեւոնդեաններէն առաջ նահատակուեցան Ս. Աստուածին:

Ս. Ղեւոնդեանց շարականը.

«Լուսաւորիչն ամենեցուն՝ Ղեւոնդիէ սուրբ վարդապետն — խոհական մեծ խորհրդով խրատեալ լեցոյց զաշակերտեալն, — ծաւալեալ զլոյս գիտութեան յոգիս աբրանց կատարելոց, — կամաւոր յօժարութեամբ, կատարեցան սրով զկեանս:»

12. Ս. ԱՏՈՄԵԱՆՔ

Երբ Պարսից Յազկերտ թագաւորը կը հալածէր Քրիստոնէութիւնը, Ճորայ Կապանը հրաւիրեց Հայոց զօրագունդն որուն առաջնորդն էին Աստոմ Գնունի ու Մանահիր Ռշտունի: Յազկերտ խստիւ հրամայեց որ կրակին երկրպագեն ու անողորմ տանջանքներով սկսաւ զանոնք չարչրկել: Բայց անոնք լաւ համարեցին մեռնիլ Քրիստոսի սիրոյն համար, քան թէ կրօնափոխ ըլլալ, և փախան Հայաստան:

Յազկերտ երբ որ իմացաւ, զօրք ղրկեց անոնց ետեւէն: Աստոմ ու Մանահիր նախարարներն ապաւինած էին Անձեւացեաց գաւառը: Պարսից զօրքերը զանոնք ձերբակալեցին ու նահատակեցին:

Հայ եկեղեցին Աստուածնոյ նահատակութեան յիշատակը կը կատարէ Բուն բարեկենդանէն երկու շաբաթ առաջ:

13. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Հերովդէս թագաւորի օրով կ'ապրէր Զաքարիա անունով քահանայ մը. անոր կինն էր Եղիսաբէթ: Երկուքն ալ արդար էին և Աստուծոյ բոլոր պատուէրները ճշդութեամբ կը կատարէին: Անոնք ծեր էին ու զաւակ չունէին:

Երբ օր մը Զաքարիա պաշտօն կը կատարէր, հրեշտակ մը երեւցաւ իրեն ու ըսաւ. «Մի՛ վախնար, Զաքարիա, որդի մը պիտի ունենաս, անոր անունը Յովհաննէս կը դնես: Անիկա Աստուծոյ առջև մեծ պիտի ըլլայ և շատերը պիտի դարձնէ ճշմարիտ Աստուծոյ:»

Զաքարիա թերահաւատելուն համար՝ պապանձեցաւ և նշանացի կը խօսէր ժողովրդին:

Երբ մանուկը ծնաւ Քրիստոսի ծննդէն 6 ամիս առաջ, ու 8 օր ետքը մանկան անունը դնելու համար՝ Զաքարիային հարցուցին, հայրը տախտակի վրայ գրեց «Յովհաննէս է անոր անունը։» Իսկոյն լեզուն բացուեցաւ, խօսեցաւ և օրհնեց Աստուած։ Ամենքն ալ զարմացան այս բանին վրայ։

Այս յիշատակը կը ծանենք «Ծնունդ Ս. Յովհաննու Կարապետի» անունով։ Յովհաննէս մանուկը հոգւով զօրացաւ, և անապատը քաշուեցաւ, Յորդանանու կողմերը կը քարոզէր և կ'ըսէր. «Ապաշխարեցէք, Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է։»

Յովհաննէս Կարապետի հանդերձն ուղտի մազէ էր, գօտին կաշիէ, կերակուրը մարախ ու վայրի մեղր։ Յովհաննէսին քով կ'երթային Յորդանանու կողմերէն, կը խոստովանէին իրենց մեղքերը։ Յովհաննէս զանոնք կը մկրտէր Յորդանան գետին մէջ. Յիսուս ալ եկաւ Յովհաննէսէն մկրտուելու։

Ս. Յովհաննէս մարգարէներուն վերջինն է։

Հերովդէս բանտարկեց Յովհաննէսն ու գլխատել տուաւ։ Աշակերտները թաղեցին Յովհաննէսն ու գացին պատմել Յիսուսի։

Եկեղեցին Ս. Յովհաննէսը կը ծանէ 1. «Ծնունդ Ս. Յովհաննու Կարապետի» և 2. «Գլխատումն Ս. Յովհաննու» անունով։

Թելադրութիւններ. — Որո՞նք յաջորդեցին Ս. Լուսաւորչի. — Ի՞նչեր կրեցին. — Ի՞նչու. — Մեծն Ս. Ներսէս Պարթև ի՞նչեր շինեց. — Ե՞րբ ժողով գումարեց. — Ո՞ւր. — Այդ ժողովին մէջ ի՞նչ վճռուեցաւ. — Այնուհետև ի՞նչ եղաւ Հայ եպիսկոպոսները. — Ո՞վ էր Ս Սահակ Պարթև. — Ի՞նչեր ըրաւ. — Ո՞վ էր Ս. Մեսրոպ Մաշտոց. — Ի՞նչ հնարեց. — Որո՞նք են անոնց աշակերտները. — Ի՞նչ ըրին. — Հայ. եկեղեցին ամէն տարի ի՞նչ կ'ընէ. — Ո՞ւր թաղուած են. — Ո՞ն է շարականը. — Ո՞վ էր Ս. Վարդան. — Ի՞նչ ըրաւ. —

Ս. Վարդանաց օրն ի՞նչ է. — Ո՞րն է շարականը. — Որո՞նք են Ս. Ղեւոնդեանք. — Ի՞նչ ըրին. — Ո՞րն է շարականը. — Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ. — Որո՞նք են ծնողքը — Հրեշտակն ի՞նչ աւետեց. — Ե՞րբ. — Զաքարիա ի՞նչ եղաւ. — Ե՞րբ լեզուն բացուեցաւ. — Այդ օրն ի՞նչ ծան է. — Յովհաննէս ի՞նչպիսի կեանք վարեց. — Յովհաննէս մարգարէներուն ի՞նչ է. — Ի՞նչպէս մեռաւ. — Եկեղեցին քանի՞ ծան հաստատած է Կարապետ Յովհաննէս Մկրտչին. — Ուրիշ Յովհաննէս կա՞յ։

Է. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻԻՍ ՏՕՆԵՐԸ

Ի. ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԱԼՔ

Հայ եկեղեցին կը ծանէ Քրիստոսի ընտրած Իսրայէլի երկոտասան ցեղերուն թուին համեմատ 12 առաքեալները — Սիմոն Պետրոս, եղբայրն Անդրէաս, Զեբեդեայ որդին Յակոբոս մեծ, անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Մատթէոս=Ղեւի, Թովմաս երկրորդակ, Սիմոն Կանանացի, Ղեբէոս = Թադէոս, Ալփեայ որդին Յակոբոս կրտսեր «Գլխադիր» ու Մատթիա որ Իսկարիովտացի Յուդայի տեղ ընտրուեցաւ։

Քրիստոս զանոնք իր հոգւով լեցուց ու կրթեց Իր վարդապետութեանց մէջ, և ընտրեց զանոնք ըլլալ Իր Եկեղեցւոյն հիմնադիրները։ Իսկ Սօղոս որ Յիսուսի հաւատալով եղաւ Պօղոս՝ կոչուեցաւ «Առաքեալ հեթանոսաց։»

Ասոնք աւետարանական լուսով լուսաւորեցին աշխարհը Յիսուսի պատգամին համաձայն. «Դուք էք լոյս աշխարհի»։

2. ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՔ

Յիսուս բաց ի 12 առաքեալներէ 72 աշակերտ ալ ունէր. անոնց պէտք եղած պատուէրներն ու հրահանգները տուաւ, և երկ երկու ղրկեց քաղաքներն ու գիւղերն որ քարոզեն։

Հիմայ Քրիստոսի աշակերտ կրնայ կոչուիլ ո՛վ որ Անոր վարդապետութեան կը հաւատայ, Անոր ոգին կը կրէ, կը հետեւի Անոր օրինակին և կ'ապրի՝ Անոր գործն ընելու համար։

3. ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ

Հայ եկեղեցին կը ծանէ մասնաւորապէս «Չորս Աւետարանիչներ»ն որոնք Յիսուսի Ծննդեան, Անոր երկրաւոր կեանքի գործերուն, հրաշքներուն և քարոզութեանց պատմութիւնը, Անոր Չարչարանքներուն, Խաչելութեան, Մահուան, Թաղման, Յարութեան ու Համբարձման նկարագիրը խմբագրեցին Ս. Հոգւոյն առաջնորդութեամբ։

Չորս աւետարանիչներն են Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս։

4. ՀՐԵՇՏԱԿԱՊԵ Ք ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՁՕՐՔ

Հայ եկեղեցին ի պատիւ հոգեղէն զուարթուններուն =Հրեշտակներուն կը կատարէ Հրեշտակապետաց՝ Գաբրիէլի և Միքայէլի և հրեշտակաց ոտնը։ Հրեշտակները հոգեղէն զուարթուններ են որ միշտ Աստուծոյ առջև կը կենան, Անոր հրամանները կը կատարեն, անդադար զԱյն կը փառաբանեն երկինքի մէջ ու մեզի համար Տիրոջը կը բարեխօսեն։

Շարականը.

«Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս քո ի հուր կիզելոյ, Հայր անեղական, ընդ նոսին օրհնեմք զքեզ և մեք հոգեղէնքս։»

5. ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՑ

Ս. Գրիգոր Լուսաւորչի հօրաքեռորդին էր Ս. Յակոբ Մծբնայ։ Հայ Եկեղեցին կը կատարէ այս հայրապետին յիշատակը՝ ընդունելով բարեխօս ժանտամահի ու զանազան դժնդակ հիւանդութեանց։

Շարականը.

«Յաղթող և սուրբ Հայրապետ, — նման Մեծին Մովսէսի՝ — բարձող խաչին պարծանաց — ընդդիմամարտ հանդիսիս. — զքեզ ունիմք բարեխօս — առ Հայր յերկինս վասն մեր»։

6. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ա. Նիկիոյ ժողով

«Տիեզերական» առաջին ժողովն է Նիկիոյ ժողովն որ գումարուեցաւ 325ին Նիկիա=Իզնիկ։ Ներկայ էին 318 հայրապետներ որոնք համաձայնութեամբ վճռեցին թէ «Որդին Աստուած համաղօր ու համագոյ է Հօր», այսինքն «Որդին Աստուած նոյն ինքն ի բնութենէ Հօր»։

Այս ժողովին մէջ դատապարտուեցաւ Արիոս Հերետիկոսն ու իր մոլորութիւնը հերքուեցաւ։

Նիկիոյ ժողովին մէջ խմբագրուեցաւ Հաւատոյ Հանգանակը։

Բ. Կ. Պոլսոյ ժողով

«Տիեզերական» Բ. ժողովը գումարուեցաւ Կ. Պոլիս 381ին՝ հերքելու համար Մակեդոնի ու բոլոր հոգեմարտ աղանդաւորներու հերետիկոսութիւնը։

Կ. Պոլսոյ ժողովը վճռեց թէ «Ս. Հոգին Տէր է կենդանարար, որ Հօրմէ կ'ելլէ և խոկակից ու էակից է Հօր և Որդւոյ։»

Դ. Եփեսոսի ժողով

«Եփեսոսի ժողով»ն որ գումարուեցաւ 431ին՝ դատապարտեց հերետիկոս Նեստորն ու անոր հնարած մոլորութիւնները։ Ժողովը յայտարարեց թէ «Քրիստոս երկու անձ ունի, Աստուածային ու Մարդկային», և Ս. կոյս Մարիամն ալ անուանեց Աստուածածին։

Եկեղեցին Երեք տիեզերական ժողովներուն, Պատարագէն առաջ, «Մանկուքի» ատեն՝ Սեղանին վարագոյրը փակելով՝ կ'երգէ «Ո՛վ հրաշալի նախահաւք» շարականը, կը նզովէ հերետիկոսները։ Իսկ «Ի Սուրբ Երրորդութենէ ծնեալ» շարականաւ Բեմին վրայ խնկարկութիւն ընելով՝ կը հռչակէ իր ուղղափառ վարդապետութիւնը։

Թելադրութիւններ. — Քանի՞ առաքեալ կայ. — Որո՞նք են. — Ի՞նչու 12 են. — Քրիստոս ի՞նչ ըրաւ զանոնք. — Ո՞րն է Հեթանոսաց առաքեալը. — Յիսուս քանի՞ աշակերտ ունէր. — Ի՞նչ ըրաւ. — Հիմայ ո՞վ կը կոչուի աշակերտ. — Որո՞նք են Հոգւոյ աւետարանիչները. — Իւրաքանչիւր Աւետարանի քով ի՞նչեր նկարուած են. — Ո՞ւր կրնաք տեսնել Աւետարանին այս նկարները. — Ի՞նչ խորհուրդ ունի. — Աւետարանին մէջ ի՞նչեր գրուած են. — Ի՞նչ են հրեշտակները. — Որո՞նք են պատերը. — Ի՞նչ կ'ընեն հրեշտակները. — Ո՞րն է շարականը. — Ո՞վ էր Ս. Յակոբ Մծբնայ հայրապետը. — Եկեղեցին ի՞նչ կ'ընդունի Ս. Յակոբը. — Ո՞րն է շարականը — Քանի՞ Տիեզերական ժողով կայ. — Ի՞նչու և ե՞րբ գումարուեցաւ Նիկիոյ ժողովը. — Եփեսոսի՞նը. — Կ. Պոլսո՞յն. — Ա.յդ Երեք ժողովներուն ծանրն ի՞նչ տարբերութիւն կը կատարուի. — Ե՞րբ. — Ինչո՞ւ։

ՆԱԽԱՇԱՐՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՔ

Եկեղեցին կը ծնէ Հին ուխտի բոլոր նախահայրերն ու մարգարէները։ Մարգարէներն երկու կարգ են. Ա. Եսայի, Երեմիա, Եզեկիէլ ու Դանիէլ որ Մեծ մարգարէ կը կոչուին, իսկ մնացեալ 12ը Փոքր մարգարէք—Յովելեան, Յովէլ, Ամոս, Ովսէէ, Միքիա, Նաում, Սոփոնիա, Ամբակում, Աբդիու, Անդէ, Զաքարիա ու Մաղաքիա։

Անոնց երիցութեան ժամանակագրական կարգը սա՛ է.

1. Յովելեան Քրիստոսէ առաջ 825ին քարոզեց, 2. Յովէլ մարգարէացաւ 800ին, 3. Ամոս 787ին մարգարէացաւ, 4. Ովսէէ 785–787 մարգարէացաւ, 5. Եսայի 758–697, 6. Միքիա 858–697, 7. Նաում 710–700, 8. Սոփոնիա 630ին, 9. Երեմիա 628–588, Երուսաղէմի Բաբելացւոց ձեռքով կործանիլը, 10. Ամբակում, 610, 11. Աբդիու 588, 12. Եզեկիէլ 598–590, 13. Դանիէլ 606–534, 14. Անդէ 536–520, Սոփոնիա, 15. Զաքարիա 520, 16 Մաղաքիա 416։

ՄԵԾ ՄԱՐԳԱՐԷՔ

1. Եսայի

Հրէից մարգարէներուն մէջ ամէնէն հռչակաւորն է Ամոսի որդին Եսայի=«Փրկութիւն Տեառն» որ յիսուն տարի մարգարէացաւ։ Եսայի մարգարէացաւ Մեսիայի Ծննդեան ժամանակն ու Մեսիային ձեռքով տրուելիք հոգեւոր փրկութիւնը։

Եսայի Երուսաղէմի մէջ մարգարէացաւ և Մանասէ թագաւորին հրամանաւ սղոցուեցաւ ողջ ողջ։

Եսայի կը կոչուի «Աւետարանիչ մարգարէ» ու մարգարէութիւնն ալ՝ «Աւետարան ըստ Եսայեայ»։

2. Երեմիա

Երեմիա ծնած էր Անաթովթ ու քահանայական ցեղէ էր և մարգարէացաւ Յովսիա բարի թագաւորին օրով։ Յովակիմ անոր գիրքերը կրակը նետեց և կ'ուզէր զայն այրել։ Երեմիա դուշակեց Բաբելոնի գերութիւնն և Նաբուգոդոնոսորի ձեռքով Երուսաղէմն առնուելէն ետք, 586ին մնացած հրեայներուն հետ Եգիպտոս գնաց։ Երեմիա արտասուալի կերպով հրեայներուն թշուառութիւնը կը նկարագրէ իր ողբերուն մէջ։

3. Եզեկիէլ

Բուզեայ որդին էր Եզեկիէլ, քահանայական ցեղէ Երեմիայի պէս և Բաբելոն գերի տարուեցաւ։ Եզեկիէլ կը նկարագրէ Աստուածային փառքը վսեմ տեսիլներով ու ահաւոր դուշակութիւններով՝ հրեայներուն կրկնիք նեղութիւնները։

Եզեկիէլ մարգարէացաւ 20 տարի 595–575։

4. Դանիէլ

Դաւթի թագաւորական ցեղէն էր Դանիէլ որ դեռ մանուկ՝ գերի տարուեցաւ Բաբելոն 606ին։ Որոշուած էր որ Դանիէլ իր Անանիա, Ազարիա, Միսայէլ երեք ընկերներով բնակի Նաբուգոդոնոսորի արքունիքը։ Ասոնք յատոյ բարձր պաշտօններու հասան։ Դանիէլ Նաբուգոդոնոսորի երազը մեկնելով՝ Բաբելոն քաղաքին և դաւառակին վերակացու եղաւ։ Անոր երեք ընկերները հնոցը նետուեցան Աստուածպաշտութեան համար, բայց հրաշքով փրկուեցան։

Երբ պարսիկները Բաբելոն առին, Դանիէլ դարձեալ

մնաց իր պաշտօնին մէջ։ Իր աչքով տեսաւ Գերութենէ դարձը։ Անվեհեր դաւանեցաւ Աստուծոյ անունը հեթանոս թագաւորներու առջև և մարտիրոս պիտի ըլլար, եթէ հրաշքով չազատուէր։

ՓՈՔՐ ՄԱՐԳԱՐԷՔ

1. Յովնան

Յովնան=«Աղաւնի» Յերոբովամ Բ. ի ատեն հրաման ստացաւ Աստուծմէ երթալ քարոզել ու մարգարէանալ Նինուէացւոց։ Յովնան կարծելով խուսաբիլ Աստուծոյ պատուէրէն՝ Յոպպէ=Եաֆա նաւարկեց, բայց ալեկոծութեան հանդիպելով՝ ծովը նետուեցաւ ու հրաշքով ազատուեցաւ։ Վերջը Նինուէ գնաց ու քարոզեց։

2. Ամոս

Ամոս=«Ծանր» հովիւ էր որ մարգարէացաւ Յերոբովամ Բ. ի օրով, հետեւապէս ժամանակակից էր Ովսէ, Յովէլ ու Եսայի մարգարէներուն։ Հեթանոսութեան յարած հրեայներուն քուրմերն աքսորեցին Ամոսը։

3. Յովէլ

Յովէլի վրայ մանրաման տեղեկութիւն չկայ, բայց մարգարէացաւ Ողիա թագաւորին օրով 800ին

4. Ովսէ

Ովսէ = «Փրկութիւն» մարգարէացաւ 785–725, Ողիայէ մինչեւ Եզեկիա։ Ովսէ հաւատաց Միսիայի գալստեան։

5. Միքիա

Միքիա մարգարէացաւ 750–698, ժամանակակից Եսայի մարգարէին։ Մարգարէացաւ Իսրայէլի ու Յուդայի պատուհասը, Սամարիոյ ու Երուսաղէմի աւերումը, Մեսիայի գալուստն և գուշակեց Յիսուսի ծննդեան տեղը՝ Բեթղեհէմ։

6. Նաում

Նաումի=«Մխիթարութիւն» վրայ մանրամասն տեղեկութիւն չկայ, նախաձայնեց Նինուէի կործանումը, մարգարէացաւ հրեայներուն գերութիւն ու բոլոր աշխարհ ցրուիլը։

7. Ամբակում

Ամբակումի վրայօք ալ մանրամասն տեղեկութիւն չկայ, ժամանակակից էր Երեմիայի, մարգարէացաւ 610ին։ Ամբակումի Գ. գլուխը յաղթական երգ մըն է։ Սակէ աւելի վսեմ օրհնութիւն մը չկայ Եբրայական գրուածքներու մէջ։

8. Սբդիու

Սբդիու=«Ծառայ Տեառն» մարգարէացաւ 587ին։ Ժամանակակից էր Եսայի ու Երեմիա մարգարէներուն։ Եդոմացւոց պատուհասը մարգարէացաւ։

9. Անգէ

Անգէ = «Խնջոյք» որ Զաքարիայի հետ դարձաւ Բաբելոնի գերութենէն 536ին։ Մարգարէացաւ քաջալերելու համար իր հայրենակիցները նորէն սկսիլ տաճարին շինութեան որ ընդհատուած էր։ Մարգարէացաւ թէ Քրիստոս «Ամէն ազգերու ցանկալին» Նորաշէն տաճարը պիտի գար։

10. Սոփոնիա

Սոփոնիա Շմաւոնի ցեղէն էր, ու ժամանակակից Երեմիայի։ Սոփոնիայի վրայօք մանրամասն տեղեկութիւն չկայ։

11. Զաքարիա

Զաքարիա «Տիրոջ հրեշտակ» Բարաքէի որդին էր, Աղով քահանայի թոռը, որ մեծ հօրը յաջորդեց։ Զորաբաբելի հետ դարձաւ Գերութենէն ու քաջալերեց ժողովուրդը գլուխ հանել Տաճարին շինութիւնը։ Զաքարիա մարգարէացաւ Մեսիայի գալուստը, յաղթանակը, Ս. Հոգւոյն հեղումն ու Երանաւէտ ազդեցութիւնը։

12. Մաղաքիա

Մաղաքիա «Մարգարէութիւն» վերջինը փոքր մարգարէներուն. ասոր վրայօք քիչ տեղեկութիւն կայ։ Մեղադրեց քահանայները, յանդիմանեց ժողովուրդն իրենց անօրէն գործերուն համար։ Եղիայի հոգւով ու զօրութեամբ մարգարէացաւ Յովհաննէս Մկրտչին գալուստն ու Քրիստոսի կրկին գալուստը։

Այսպէս Հին Կտակարանը կը գոցուի Մեսիայի մարգարէութեամբ ու Նոր Կտակարանը կը բացուի Մարգարէութեան կատարմամբ։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐՔ

Եկեղեցին կը ծանէ նաև Ա. — Ե. դար ապրած քրիստոնեայ հայրերն ու վարդապետներն որոնք իրենց գործերով ու գրուածքներով ծառայեցին Եկեղեցւոյ տարածման ու պայծառացման։

Թելադրութիւններ. — Եկեղեցին Հին ուխտէն որո՞նց յիշատակը կը կատարէ. — Ո՞ր Նահապետներուն. — Զսորվեցո՞ք Տարր. Ընթացքին մէջ. — Կրկնել Տարբ.ի «Նահապետք» գլխին թելադրութիւնները. — Քանի՞ կարգ են մարգարէները - Որո՞նք են մեծ մարգարէ. — Փոքր մարգարէնե՞րը. — Ժամանակագրական կարգն ի՞նչպէս է. — Ո՞րն է ամէնէն հռչակաւոր մարգարէն. — Եսայի ի՞նչպէս մարգարէացաւ. — Ի՞նչպէս մեռաւ. — Եսայի ի՞նչ կը կոչուի. — Ո՞ր ցեղէն էր Երեմիա. — Փիրքերն ի՞նչ եղան. — Ի՞նչ գուշակեց. — Ո՞ւր գնաց. — Ի՞նչ նկարագրեց. — Ո՞ր ցեղէն էր Դանիէլ. — Ո՞ւր տարին. — Որո՞նք են ընկերները. — Դանիէլ ի՞նչ պաշտօն վարեց. — Ի՞նչեր տեսաւ. — Դանիէլի գիրքն ե՞րբ կը կարդան. — Որո՞նք են Փոքր մարգարէները. — Ի՞նչ կեանք վարեցին. — Հին Կտակարանն ի՞նչպէս կը գոցուի. — Նորն ի՞նչպէս կը բացուի. — Եկեղեցւոյ հայրերն ի՞նչու կը ծանենք. — Կրնա՞ք ըսել գլխաւորները։

Զ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջացուցէք հետեւեալները.

Իսկզբան եկեղեցին կը ծանէր...։ — Ե. դարէն առաջ...։ — Սրբոց ծան կը կատարուի...։ Աւագ ծան կը կոչուին...։ — Աւագ ծաներուն յատկանիշն են...։ — Դաւիթ օրինակ է...։ — Աստուածահայր մարգարէ կը կոչուի...։ — Յակոբ Ալփեան կը կոչուի... և նահատակուեցաւ...։ — Ս. Ստեփանոս Բրիստոնեայ եկեղեցւոյ...։ Խարկոծուեցաւ...։ — Պետրոս ու Պօղոս Առաքեալները...։ Պօղոսի նախկին անունն էր...։ — Նախ... Քրիստոնէութիւն և յետոյ...։ — Որդիք Որոտման կը կոչուին...։ — Առաքեալներուն մէջ Ա. մարտիրոսն...։ և ծանօթ է...։ — Յովհաննէս Աւետարանիչ... և աքսորուեցաւ...։ — Որդւոց Որոտման ծանին կ'երգեն...։ — Հայոց քարոզեցին...։ և հիմնեցին...։ Նահատակուեցան...։ — Աշակերտեցան...։ — Հայոց մէջ Քրիստոնէութիւնը...։ — Ս. Գրիգոր որդի էր...։ — Ծնաւ...։ Անակ...։ — Սոփիա...։ — Կեսարիայէն դարձին...։ — Տրդատ հրամայեց...։ Մնաց...։ Ելաւ...։ — Զեռնադրուեցաւ...։ — Լուսաւորիչը կը ծանենք...։ — Առաջաւորաց պահքը յիշատակ է... Ցատուկ է...։ — Ս. Հռիփսիմեանք ու Ս. Գայեանեանք...։ — Ս. Գրիգոր տեսաւ...։ Ատով նշանակեց...։ — Ս. Էջմիածնի Տօնի նշանակութիւնն է...։ Կը կատարենք...։ — Տարանակ Ուխտին...։ — Շինուած էր...։ Կատարիչը...։ Աստուած կը ընակէր...։ — Յետոյ...։ — Տարանակը կը ծանենք...։ — Շողակաթը նշանակ է...։ Կապուած է...։ — Շողակաթը նաւակատիք է...։ Մայր տաճարն օծուեցաւ...։ — Բ Ծաղկազարդը յիշատակ է...։ — Լուսաւորչի յաջորդեցին...։ Կրեցին...։ — Մեծն Ներսէս շինեց...։ Գումարեց...։ Որոշուեցաւ...։ — Ս. Սահակ Պարթև...։ — Կատարած ազգային գործերն են...։ — Ս. Մեսրոպ Մաշտոց ձեւակերպեց...։ — Աշակերտներն են...։ Թարգմանեցին...։ — Հայ եկեղեցին...։ — Թաղուած են...։ — Ս. Վարդանանք...։ — Աստուծոյ ծանը...։ — Ս. Ղեւոնդեանք...։ — Յովհաննէս Մկրտիչ էր...։ Հրեշտակն աւետեց...։ — Յովհաննէս Մկրտիչ կ'ապրէր...։ Կը քարոզէր...։ Վախճանեցաւ...։ — Առաքեալներն են...։ — Քրիստոս զանոնք...։ — Ցիսուսի աշակերտներն էին...։ — Զորս աւետարանիչներն են...։ Իւրաքանչիւր Աւետարանի քով նշանակուած են... և խորհրդանշան են...։ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ էր...։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Որոշեցէ՛ք ու սահմանեցէ՛ք թէ ինչ են հետեւեալները։

Օրինակ. — *Աղաւնին եկեղեցւոյ սպաս է և կը գործածուի Ս. Միւռոն պահելու, իսկ Բազկուրարն եկեղեցւոյ զգեստ է և կը կրէ կիսասարկաւագը։*

Աղաւնի, աչտանակ, ասա, արտախուրակներ, արծուեղորդ, աւետարան։ — Բազկուրար, բազպան, բաժակաման, բուրվառ։ — Գաւազան, գրակալ, գօտի։ — Դպիր, դռնապան։ — Եմիփորոն, եպիսկոպոս։ — Ընթերցող։ — Թագ, թաչկինակ։ — Ժամագիրք։ — Խաչ, խաչվառ, խնկաման, խոյր, խորհրդատեար։ — Կանոնագիրք, կերոն, կիսասարկաւագ, կոնք, կոնքեռն։ — Հայրապետ, հողաթափ։ — Ղենջակ։ —Ճաշոց գիրք։ — Մաղզմայ, մաշտոց, մասնատուփ, մասանի, մոմ։ — Յայսմաւուրք։ — Նափորտ։ Շապիկ, շարական, շուրջառ։ — Ուրար։ — Պատկեր։ — Ջահ, ջահընկալ։ — Սաղաւարտ, սարկաւագ, սկիհ, սրբատուփ, սքեմ։ — Վակաս, վարդապետ, վեղար։ — Տապանակ, տօնացոյց։ — Փիլոն, փորուրար։ — Քահանայ. քչոց։

ԿՐԿՆԵԼ ՏԱԼ

Ա. Բ. Գ. Դ. եւայլն վերատեսութիւնները։

ՅԱՒԵԼՈՒԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ս. ԳՐՈՅ ՁԱՓԵՐՆ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԸ

1 Երկայնութեան չափեր

Թիզ 0.46 *մեդր*
Կանգուն 1.85 *մեդր*
Ասպարէզ 184.94 *մեդր*
Մղոն 1.479.50 *մեդր*

2. Հեղանիւթեայ չափեր

Մար 20.12 *լիտր*
Քոռ 201.22 *լիտր*

3. Ծրմտիրի չափեր

Տասանորդ 2.30 *լիտր*
Գրիւ 7 *լիտր*
Արդու 20.13 *լիտր*

4. Հրէական դրամներ

Արծաթ
Մնաս 1.260.16 *ղրուշ*
Սիկղ 12 *ղրուշ*
Տաղանդ 37.812.20 *ղրուշ*
Ոսկի
Մնաս 20.166.27 *ղրուշ*
Տաղանդ 605.000 *ղրուշ*

5. Հռոմէական դրամներ

Լումայ 1 բարա
Նաքարակիտ 3 բարա
Դանկ 12 բարա
Դահեկան 3.06 դրուշ
Երկդրամեան 6.12 դրուշ
Սատեր 12.24 դրուշ
Մնաս 315.00 դրուշ

Բ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ ՈՒ ՅԱՆԿ

ԸՍՏ Ս. ԳՐՈՑ

Ն. Ք.

4004 Արարչութիւն.
4003—2 Մնուանդ Կայէնի ու Աբէլի.
3875 Աբէլի զոհը, Կայէն կ'սպաննէ Աբէլը.
3074 Մահ Ադամայ.
2468 Աստուած կ'որոշէ ջնջել աշխարհը, Նոյի քարոզութիւնը.
2348 Ջրհեղեղ՝ Աշխարհի ստեղծագործութեան 1656 տարին.
2347 Նոյ տապանէն դուրս կ'ելլէ.
2247 Բաբելոնի խառնակութիւնը.
1998 Նոյի մահը.
1996 Աբրահամ կը ծնի.
1921 Աբրահամ կ'ելլէ Խառանէն.
1912 Աստուծոյ ուխտն Աբրահամու հետ.
1896 Իսահակի ծնունդը.

1856 Իսահակի ամուսնութիւնը.
1836 Եսաւ ու Յակոբ կը ծնին.
1821 Աբրահամ կը մեռնի.
1804 Եսաւ անդրանկութիւնը կը ծախէ.
1760 Յակոբ կը փախչի Եսաւի երեսէն.
1753 Յակոբ կ'ամուսնանայ Ռաքելի հետ.
1728 Յովսէփի երկու երազները, Յովսէփ կը ծախուի Իսրայելացիներուն.
1719 Յովսէփ Եգիպտոսի մէջ կը հանի պատիւներու.
1716 Իսահակի մահը.
1708 Եօթնամեայ սովին սկիզբը.
1707 Յովսէփի եղբայրներն Եգիպտոս կ'երթան ցորեն գնելու.
1706 Յակոբ ու իր տունն Եգիպտոս կ'երթան.
1689 Յակոբ կը մեռնի.
1635 Յովսէփ կը մեռնի.
1573 Փարաւոն կը հրամայէ Նեղոս գետը ձգել հրեայ արու մանուկները.
1571–1532 Մովսէսի ծնունդ, ընկեցիկ կ'ըլլայ, կ'ազատուի, մանկութիւնը։
1491 Աստուած Քորէբ լերան վրայ կ'երեւայ Մովսէսի. «Զատիկ»ը կը հաստատուի.
1490 Անապատին մէջ Խորանը կը կանգնուի. Տասը պատուիրանք.
1490–1459 Իսրայելացիք Անապատին մէջ.
1451 Մովսէսի մահն ու Յեսու.
1450–1445 Հրէական յաղթութիւններ.
1444 Աւետեաց երկիրը կը բաժնուի.
1425 Իսրայէլի հեթանոսութեան սկիզբը.
1256 Հռութ.
1249 Գեդէոն դատաւոր.
1156 Սամփսոն կը ծնի.

1155 Սամուէլի ծնունդը.
1143 Սամուէլի կոչումը.
1136–1117 Սամիսոնի քաջագործութիւնները.
1116 Սամիսոնի մահը. Տապանակը գերի կ'իյնայ.
1112 Սամուէլ դատաւոր.
1096 Սամուէլ Սաւուղը թագաւոր կ'օծէ.
1094–1080 Սաւուղի պատերազմները.
1064 Սամուէլ Դաւիթը թագաւոր կ'օծէ, Դաւիթ կը յաղթէ Գողիաթին.
1063 Դաւթի միւս յաղթութիւնները.
1062 Դաւթի ամուսնութիւնը.
1059 Սամուէլի մահը.
1056 Դաւիթ՝ Յուդայի թագաւոր. Սաւուղի մահը.
1049 Դաւիթ կը թագաւորէ բոլոր Իսրայէլի վրայ.
1033 Ծնունդ Սողոմոնի.
1024 Աբիսողոմ կ'սպաննուի.
1016 Դաւիթ կը պատրաստուի չինել Տաճարը, Դաւիթ կը հաստատէ քահանայներուն կարգը, Սողոմոն թագաւոր կ'օծուի. Դաւթի մահն ու Դաւթի սաղմոսները. Աստուած Սողոմոնի իմաստութիւն կուտայ.
1015 Սողոմոնի դատաստանը.
1012–1005 Տաճարին չինութիւնը.
1005 Տաճարին նաւակատիքը.
1001 Սողոմոնի երգերը.
993 Սաբա թագուհին կ'այցելէ Սողոմոնի.
977 Աքէա կը մարգարէանայ. Սողոմոն կը գրէ իր «Ժողովող»ը.
976 Սողոմոնի մահը. Թագաւորութիւնը կը բաժնուի.
955 Յերոբովամ կը մեռնի.
910 Եղիա մարգարէ.
897 Մարգարէից դպրոցները=Նաւաս ուր կը կրթուէին կրօնագէտ ուսուցիչները. Եղիա երկինք կը վերանայ.

896—890 Եղիսէի հրաշքները.
850 Յովհան մարգարէ.
838 Մահ Եղիսէի.
801–793 Ովսէ մարգարէ.
757–699 Եսայի տեսիլքով մարգարէ կը կարգուի.
753 Միքիա մարգարէ.
723 Սաղմանասար կը պաշարէ Սամարիան.
721 Տասը ցեղերը գերի կը տարուին Ասորեստան.
628 Երեմիա մարգարէ.
623 Սոփոնիա կը քարոզէ.
612 Ամբակում կը մարգարէանայ.
608 Երեմիա կը բանտարկուի.
606 Նաբուգոդոնոսոր Երուսաղէմը կ'առնէ առաջին անգամ.
603 Դանիէլ կը մեկնէ Նաբուգոդոնոսորի երազը.
588 Նաբուգոդոնոսոր Բ. անգամ կ'առնէ Երուսաղէմը.
570 Ազարիա հնոցը կը ձգուի։
556 Բաբելոն կ'առնուի Պարսիկներէն։
536 Հրէից դարձն ու Տաճարին վերատին չինութիւնը.
516 Վերաշէն Տաճարին նաւակատիքը.
437 Զաքարիա մարգարէ.
433 Մաղաքիա մարգարէ.
397 Հին Կտակարանի վերջին մարգարէութիւնը.
285 Եօթանասնից թարգմանութիւնը.
165—161 Մակաբայեցիք.
135 Փարիսեցիք.
110 Եսենեանք.
55 Հռոմայեցիք կը տիրեն Հրէաստանի ու կուսակալ կը դնեն.

40—17 Հերովդէս թագաւոր.
6 Ծնունդ Յովհաննէս Մկրտչին ու Նոր Կտակարանը կ'սկսի։

Յ. Ք.

1 Ծնունդ Քրիստոսի.
12 Յիսուս կ'այցելէ Երուսաղէմ.
26 Պիղատոս կուսակալ.
29 Յովհաննէս Մկրտիչ կ'սկսի քարոզել.
30 Յիսուս կը մկրտուի Յովհաննէսէն։
33 Յիսուս կը խաչուի, յարութիւն կ'առնէ.
35 Ստեփանոս կը քարկոծուի, Եկեղեցին կը հալածուի, Ս. Թադէոս կը քարոզէ Հայոց.
36 Սօղոսի դարձը.
38 Հեթանոսներու դարձը.
40 Յակոբոս կը գլխատուի Հերովդէսէն.
43 Ս. Թադէոս առաքեալ կը նահատակուի.
44 Ս. Բարթողիմէոս առաքեալ կը քարոզէ Հայոց.
60 Ս. Բարթողիմէոս առաքեալ կը նահատակուի.
63 Պօղոս կը նահատակուի.
70 Տիտոս Վեսպասիանոս կ'առնէ Երուսաղէմը. Հրեաները կը ցրուին.
71 Երուսաղէմի տաճարը կը քանդուի.
93 Յովհաննէս առաքեալ կ'աքսորուի Պատմոս կղզին.
96 Յովհաննէս առաքեալ կը գրէ «Յայտնութեան գիրքը».
97 Յովհաննէս առաքեալ կ'արձակուի աքսորէն.
100 Յովհաննէս՝ վերջին կենդանի առաքեալը կը վախճանի հարիւրամեայ.
301 Ս. Գրիգոր Խոր Վիրապէն կ'ելլէ.
303 Էջմիածնի Մայր եկեղեցին կը հիմնուի.
326 Ս. Գրիգոր կը վախճանի.

325 Ս. Արիստակէս կը յաջորդէ.
333 Ս. Արիստակէս կը վախճանի, Ս. Վրթանէս կը յաջորդէ.
341 Ս. Վրթանէս կը վախճանի.
337–347 Ս. Յուսիկ.
353–373 Ս. Ներսէս Պարթև
387–439 Ս. Սահակ Պարթև.
404 Հայոց գիրը կը գտնուի.
451 Ս. Վարդանանց նահատակութիւնը։

Գ. ԲԱՌԳՐՔՈՒԿ

Աբրահամու զոգը. Արքայութեան երանաւէտ կայանը էր հաւատացեալներուն հայրը։

Ազգաբանութիւն. Ազգահամար։

Ալելուիա. Գովեցէք Տէրը՝ Եհովան։ Ալելուիա կ'երգուէր Հին ուխտին ու կը գործածուի Նոր ուխտին ժաղովներու սկիզբն ու վերջը։

Ալփեաս. Յակոբ կրտսերին հօրն յունարէն անունը, Եբրայեցերէն կ'ըսուէր Կլէովպաս։

Աղանդ. Հերետիկոսութիւն։

Աղաւնի. Նշանակ միամտութեան, անմեղութեան ու հաւատարմութեան։

Աղեքսանդրիա. Ստորին Եգիպտոսի մէջ, Միջերկրականի եզերքը նաւահանգիստ. շինուեցաւ 332ին Ն.Ք.։

Աղքատի նուէր. Արտերու, ձիթաստաններու, այգիներու ճառաքաղն աղքատներուն թողուլ հրամայուած էր. աղքատասիրութիւնը մեծ առաքինութիւն էր։

Ամեն. Եբրայեցերէն կը նշանակէ ճշմարտապէս։

Ամլութիւն. Դժբախտութիւն կը համարուէր ամլութիւնը, մանաւանդ հրեայ կիներուն որ կը հաւատային խոստացուած Մեսիային և կը փափաքէին Մեսիայի մայր ըլլալ։

Անդամալուծութիւն. Մարմնոյն զգալու, շարժելու անկարողութիւն. քիչ անգամ բուժելի հիւանդութիւն մըն էր։

Անդրանիկ. Հրեայներն իրենց անդրանիկներն Աստուծոյ նուիրելու սովորութիւն ունէին։ Անոնց փրկանքն էր 5 սիկղ։ «Սուրբ անասուն»ներուն անդրանիկն ալ կը նուիրէին։

Անդրանկութիւն. Առանձնաշնորհում է։ Միայն անդրանիկ որդին կ'օրհնուէր հօրմէն։ Քահանային անդրանիկ որդին կը յաջորդէր հօրը քահանայութեան մէջ։

Առակ. Նոր Կտակարանի մէջ «Առակ» բառը կը նշանակէ երբեմն ճշմարիտ պատմութիւն կամ ընութենէն առնուած օրինակ ու նմանութիւն, երբեմն ալ կը նշանակէ «առած»։

Առակներով, այլաբանական ու խորհրդաւոր կերպով խօսիլ սովորական լեզուն էր Արեւելեան իմաստուններու և գիտուններու։ Մարգարէներն առակներով կը քարոզէին։

Ասորեստան. Երկիր, ինքնակալութիւն որ կործանեցաւ 625ին (Ն. Ք.). մայրաքաղաքն էր Նինուէ, արդի Մուսուլի մօտ։

Ասիճանցներու երգ. ՃԻ. — ՃԼԴ. սաղմոսներուն վերնագիրը. Հրեայներն Երուսաղէմ ուխտի գացած ատեն կ'երգէին այս սաղմոսները։

Աստուած. Աստուծոյ բուն Եբրայեցերէն անունն է Եահվէ=Եհովա որ կը նշանակէ Որեն. հրեայները կ'ըսէին նաև Ադոնայի=Տէր, Ադոնայի Եահուէ=Տէր Եահուէ, Ադոնայի Եղոհիմ=Տէր Աստուած։

Բուն Աստուած նշանակող անունն է «Եղոհիմ» որ յոգնակի է և կը գործածուի Աստուծոյ բազմապատիկ կատարելութիւնները նշանակելու, և Աստուածութեան մէջ Երրորդութիւն յայտնելու համար։

Արեմաթիա. Երուսաղէմէն 24 մղոն դէպ ի հիւսիս արեւմուտք, հիմակուան Ռամլէի տեղ։

Բաբելոն. Բաղդէտատանի մայրաքաղաքն Եփրատ գետին եզերքը, արդի Հիլէ քաղաքին մօտերը։

Բեթանիա. Ձիթենեաց լերան արեւելեան զառիվերին վրայ գիւղ. 2 մղոն հեռու Երուսաղէմէն դէպ ի հարաւ արեւելք։

Բեթղեհեմ. Քաղաք Երուսաղէմէն 6 մղոն հեռու դէպ ի հարաւ. արեւմուտք։

Բեթփագէ. «Թուզի տուն» փոքր գիւղ Ձիթենեաց լերան արեւելեան ստորոտը Բեթանիայի մօտ։

Բորոս. Հիւանդութիւն մը, մորթին վրայ թեփ թեփ կեղը։ Անբուժելի հիւանդութիւն մըն էր։ Հրեայները կը գարշէին բորոտէն ու այդ հիւանդութիւնը կը համարէին Եհովայէն զրկուած պատիժ։

Գողգոթա. Եբրայեցերէն կը նշանակէ Տեղի գանկի, Երուսաղէմի մօտ պարսպէն դուրս։ Հիմայ այս լերան վրայ է Ս. Գերեզման եկեղեցին՝ շինուած 335ին։

Գեթսեմանի=Մամուլ ձիթոյ. Պարտէզ Ձիթենեաց լերան ստորոտը, Կեդրոնեան հեղեղատին միւս կողմը։

Գեհեմ. Քաղաք ու երկիր Ստորին Եգիպտոսի մէջ, Նեղոսի մէկ բազկին մօտերը։

Գերեզման. Թաղման տեղ։ Եբրայեցիք մեծ խնամք կը տանին իրենց մեռեալներուն թաղման։ Անոնց գերեզմաններէն շատերը ժայռերու մէջ փիմափոր էին, ինչպէս Քրիստոսինը։

Գերութիւն. Աստուած շատ անգամ կը պատժէր հրեայները՝ գերի ղրկելով։ Երեք գերութիւն կայ, 1.

Յովակիմի օրով 606ին, երբ Դանիէլ և ուրիշներ տարուեցան Բաբելոն։ 2. Յովակիմի վերջին տարին 598ին երբ Նաբուգոդոնոսոր հրեայները Բաբելոն տարաւ։ 3. 588ին Սեդեկիայի օրով, երբ Երուսաղէմի տաճարը քանդուեցաւ։ Գերութեան 70րդ տարին իբր 50,000 հրեայ դարձան Պաղեստին։

Հրեայներու վերջին գերութիւնն եղաւ մեր թուականի 71ին, 100,000 հրեայներ գերի տարուեցան Հռոմէական գաւառները։

Գողիաթ. Նշանաւոր հսկայ մը Գեթացի = հայացի։

Դպիր. Հին Եբրայեցւոց մէջ գրելու և հաշուելու վարժ անձերը։ Թագաւորին հրամանները ժողովրդին կը հաղորդէին։ Հմուտ էին հրէական օրէնքի, ու վարդապետ կամ մեկնիչ էին օրէնքին։

Եբրայեցիք. Աբրահամու սերունդը։

Եգիպտոս. Ափրիկէի հիւս. արեւելեան կողմը նշանաւոր երկիր, այժմ Օսմ. գերիշխանութեան տակ Խիվուիթիւն։ Եբրայեցիք զայն կը կոչէին Մեսրայիմ=Մսրը։

Եդեմ. Դրախտի երկիրն ուրկէ կը բղխին Եփրատ, Տիգրիս, Ճորոխ=Փիսոն ու Գեհոն=Երասխ գետերը։

Եզրաս. Քահանայ ու առաջնորդ Հրէից որ Պարսից Կիւրոս թագաւորէն հրաման ստացաւ 457ին հրեայներն Երուսաղէմ դարձնելու։

Երուսաղէմ. Ս. Երկրին գլխաւոր քաղաքն ու Քրիստոնեայներուն նուիրական քաղաքը։ Իր Եաֆա նաւահանգստին հետ կը հաղորդակցի երկաթուղիով։ Աստուած Աբրահամու հաւատքն Երուսաղէմի մէջ փորձեց։ Դաւթի մայրաքաղաք ըլլալով՝ քաղաքական ու կրօնական կեդրոն դարձաւ։ Բայց Երուսաղէմի գլխաւոր փառքը սա՛ էր որ անոր հոյակապ տաճարին մէջ կը բնակէր «Միմիայն կենդանին և ճշմարիտն Աստուած», և հոն կը յայտնէր զինք, և Քրիստոսի տնօրէնութիւններն այս քաղաքին մէջ կատարուեցան։

Զմռսել. Եգիպտացիք մեռեալները կը պատէին=կը զմռսէին սապէս. դիապատիկներն որ իբր նուիրական պաշտօնեայ կը համարուէին՝ մեռեալին ուղեղը կոր երկաթով մը կը հանէին ռունգերէն, գանկը կը լեցնէին պնդիչ դեղերով։ Կը հանէին նաև փորոտիքը, բաց ի սրտէն ու երիկամունքէն և ծակ մըն ալ բանալով՝ մեռեալին ձախ կողմէն՝ կը լուային այդ մասերն արմաւի գինիով, պնդիչ ու նեխելէ պահող դեղերով ալ կը լեցնէին։ Մարմինը կ'օծէին այլ և այլ խնկեղէն իւղերով 30 օր և յետոյ բորակի մէջ կը դնէին 210 օր։

Հրեայներն այսչափ խնամքով չէին պատեր իրենց մեռեալները. մեռեալը կը դնէին կրկին կտաւներու մէջ՝ այլեւայլ համեմային նիւթեր քսելով, ինչպէս զմուռս, հալուէ ևն.։ Այսպէս Յովսէփ ու Նիկոդիմոս պատեցին Յիսուսի մարմինը։ Մարիամեանք չգիտնալով թէ այս գործողութիւնը կատարուած է, իրենք ալ նոյն պատիւն ուզեցին մատուցանել Յիսուսի։

Եղիսէ. Աշակերտ ու յաջորդ Եղիայի, մարգարէացաւ 903–838։

Եսովս. Ադամի թոռը։

Եսովմ. Մաթուսաղայի հայրն որ հաւատաց Փրկչի գալստեան, ու Եղիայի օրինակին պէս առանց մեռնելու երկինք փոխուեցաւ։

Երազ. Աստուած շատ անգամ երազներով=տեսիլքով կը յայտնէր իր կամքը, ու կարողութիւն կուտար իր ծառայներուն մեկնել երազները։

Երախայրիք. Առջի բերան հնձուած բերքերու մէկ մասն Աստուծոյ մատուցուած ընծայն կը կոչուի «երախայրիք։» Տրուած մասը բոլորին տեղն էր ցուցնելու համար թէ բոլորն ալ Աստուծոյ է։

Երիքով. Երուսաղէմէ դէպ ի հիւսիս արեւելք 18 մղոն հեռու, ու Յորդանանէն 7 մղոն հեռու։ Երիքովի

մէջ կար «Մարգարէից դպրոց», և հոս կը նստէր Եղիա։ Հիմայ կը կոչուի Ռիհան։ Երիքովէ Երուսաղէմ երթալու ճամբան նեղ ու քարուտ զառիվեր անցք մըն է, ձորերու և վախերու մէջէն։ Շատ դժուարին ու վտանգաւոր էր այս ճամբայն, և միշտ աւազակոյտ, ինչպէս էր Սամարացւոց առեն։

Երկինք. 1. Կը նշանակէ օդին, ամպերուն, մոլորակներուն, աստղերուն սահմանը։ 2. Երանելեաց աշխարհ որ կը կոչուի նաև Երկինք երկնից. հոս պիտի բնակին սուրբերը։

Զոհ. Քահանային ձեռքով Աստուծոյ մատուցուած նուէր Անոր սեղանին վրայ։ Հրեայներն ունէին երեք տեսակ զոհ։

1. Քաւութեան ողջակէզ. Մորթը հանելով՝ անասունն ողջ ողջ կ'այրէին, առանց թողելու մնացորդ մը, բաց ի մորթէն զոր կ'առնէր քահանայն։ Ողջակէզը նշանակէր «Քաւութեան»։ Անասունին ամբողջովին այրիլը կը նշանակէր զոհողին անձին բոլորովին նուիրումն Աստուծոյ։

2. Մեղքի համար. Այսինքն մանաւոր պատարագ։ Որդեծնութենէ ետք կատարուած զոհն ալ այս կարգէն էր։

3. Խաղաղութեան. Ուխտ մը կատարելու, գոհութիւնը մատուցանելու համար։

Էջ. Պաղեստինի ազնուականներն էջով՝ մանաւանդ մատակ էջով կը պտտէին. Յիսուս ալ աւանակի վրայ նստած՝ Երուսաղէմ մտաւ։

Թաբոր. Գալիլիոյ մէջ անջատ լեռ մը, Յեզրայէլի դաշտին հիւսիս արեւելեան կողմը։ Լեռն անտառուտ է և ընծայած տեսարանը՝ գեղեցիկ։ Յեզրայէլի դաշտին մէջ է Նային գիւղը։

Լաբան. Միջագետքի մէջ հարուստ իշխան մը, Բաթուէլի որդին, Աբրահամու եղբայր Նաքորի թոռը։ Անոր աղջիկն էր Ռեբեկա։

Խոզ. Հրեայներուն արգիլուած էր խոզուտել։ Հրեայները զանոնք կը բուծանէին հեթանոսներուն ծախելու համար։ Խոզարածութիւնն անարգ ու գարշելի գործ մըն էր։ Իրենց հայրենի ժառանգութիւնն անառակութեամբ վատնող թշուառներուն վերջին ապաւէնն էր այս զբաղումը։

Կայիափա. Հրէից քահանայապետ 27–36։ Սատուկեցի էր ու Երուսաղէմի թշնամի Քրիստոսի։ Ղազարու յարութենէն ետք ասոր առնը ժողովեցան քահանաները նիւթելու Քրիստոսի մահը։ Աննա ալ որ նախկին քահանայապետ էր, Կայիափայի խորհուրդ տուաւ Յիսուսը սպաննելու։ Աննա՝ քահանայապետին փեսայն էր։

Կանա. Նազարէթէն 7 մղոն դէպ ի հիւսիս, հիմայ կը կոչուի Գանա-էլ-Ճելիլ։

Կապադովկիա. Փոքր Ասիոյ հին գաւառներէն մեծագոյնը. հոս շատ հրեայներ կային։ Հիմայ Եոզկատ, Զորում ու Գայսերի սանճագները։

Կափառնայում. — Գալիլիոյ գլխաւոր քաղաքը, Յորդանանէն 5 մղոն հեռու Գալիլիոյ ծովուն հիւսիսային արեւմտեան եղերքը։ Արդի Խան Մինեէի մօտերը։

Կեդրոն. Երուսաղէմի արեւելեան կողմը ձմեռնային հեղեղ ու ձոր, ուրկէ կը հոսի այս հեղեղը։

Կեսարիա. 1. Արդի Գայսերին, 2. Պաղեստինու Կեսարիա, Եաֆայի ու Տիւրոսի մէջտեղը, Միջերկրականի եղերքը, 3. Կեսարիա Փիլիպեանց, Յորդանանուակներուն մօտ։

Հաց. Առաջաւորաց չաբաթ օրերն Աստուծոյ նուիրած հացն ոսկեղէն սեղանի վրայ կը կենար Սրբութիւն կոչուած տեղը։ 12 բաղարջ չօթ էին աղով ու կնտրկով։ Միայն քահանայները կ'ուտէին այս հացէն։

Հեթանոս. Հրեայներն այս անունը կուտային այն ամենուն որ Մովսէսի օրէնքը չէին ընդունած։

Հեբանոսաց գաւիթ. Տաճարին արտաքին գաւիթը՝ ուր կը կենային հեթանոսները։ Գաւիթին մէջ կար միջնորմ կամ վանդակապատ մը. հոս յունարէն ու լատիներէն արձանագրութիւն կ'արգիլէր սեղանին մօտ երթալ։

Հռուբ. Մովաբցի կին մը որ ամուսնացաւ իր Նոյեմի կեսրոջ ազգական Բոոսի հետ։ Այս ամուսնութենէն ծնաւ Դաւիթ, և Դաւիթէ՝ մեր Փրկիչը Յիսուս։ Հռութի գիրքը «Դաւթի ազգաբանութիւն»ն է։

Հրեասան=Պաղեստին, հիմակուան Գուսա-Շերիֆ ուրոյն սանճագն որ Յակոբայ 12 որդւոց մէջ բաժնուեցաւ։ «Աւետեաց երկիր» ալ կը կոչուի. հոս նախ Քանանացիք կը բնակէին, ասկէ «Քանանու երկիր» անունը։

Զիքենեաց լեռ. Երուսաղէմի արեւելեան կողմը լեռ մը որ քաղաքէն կը բաժնուի Կեդրոնեան հեղեղատով։ Վերան արեւմտեան կողերուն վրայ կան շատ վիմափոր գերեզմաններ։ Գեթսեմանի այս լերան ստորոտն էր։

Մանանա. Հրաշալի կերակուր՝ զոր Իսրայելացւոց տուաւ Աստուած անապատին մէջ։ Եղիամի պէս սպիտակ, բոլորակ գինձի չափ մանր սերմ։ Կը տեղար ամէն առտու ցօղին հետ։ Այս մանանայէն մաս մը ոսկեղէն ամանի մէջ դրուելով՝ իր վկայութիւն պահուեցաւ «Ուխտի տապանակ»ին մէջ։

Մարախ. Միջատ է թեւաւոր, շատակեր։ Մարախը մաքուր կերակուր էր Հրէից համար, ուստի ուտելիք։ Աղքատներուն կերակուր էր։

Մարգարէից դպրոց. Գաբաա, Նաւաթ, Բեթէլ, Գաղգաղա ու Երիքով կային «Մարգարէից դպրոց» ուր պատանիները կը կրթուէին կրօնական գիտելիքներով և կը պատրաստուէին առաջնորդ ըլլալ կրօնական պաշտամունքի մէջ։ Մարգարէներու որդիներէն շատերը կը թրթուելով այդ դպրոցներուն մէջ՝ եղան ոչ միայն կրօնի

վարդապետներ, այլև ներշնչեալ անձեր։ Կը յիշուին նաև մարգարէ կիներ, ինչպէս Մարիամ, Դեբովրա, Ողտա, Անանա, Եղիսաբէթ ու Մարիամ։

Մարիամ. 1. Մայր Քրիստոսի, 2. Մարկոս Աւետարանչի մայրը, 3. Կղէոպասի կինն ու Յակոբոս Կրտսերին մայրն որ կեցաւ Խաչին քով Աստուածածնի հետ, 4. Ղազարու քոյրը, 5. Մագդալենացի, 6. Քոյր Մովսէսի ու Ահարոնի որ իբրև մարգարէ առաջնորդեց Իսրայելացի կիներուն՝ Աստուծոյ օրհնութիւն երգելու։

Մախաւոր. Հարկահան պաշտօնեայ. հրեայները կատէին մաքսաւորները, որովհետև մեծ դժկամակութիւն կ'զգային Հռոմէացւոց կողմէ դրուած տուրքը վճարելու։ Հարկահանի պաշտօն վարող հրեայն իբրեւ հեթանոս կը նկատուէր։

Միջագետք. Եփրատի ու Տիգրիսի միջև երկիր որ հիմայ կը կոչուի Էլ Ճեզիրա=Տիարպեքիր, Էլ Զօր ու Հալէպի Ուրֆա սանճագը։

Մոգ. Մարաց ու Պարսից քուրմերու, գիտուններու ու փիլիսոփայներու տրուած անունը։ Հրէից դերութեամբ ճշմարիտ Աստուծոյ ծանօթութիւնը յայտնուեցաւ Արեւելքի մէջ։ Երեք մոգերը—Մելքոն, Գասպար, Պաղտասար—ալ հաւատացած էին Մեսիայի Գալստեան ու Աստղէն առաջնորդելով՝ եկան Բեթղեհէմ։

Յոպպէ=Եաֆա. Միջերկրականի եզերքը նաւահանգիստ։

Յովհաննէս. 1. Կարապետ Մկրտիչ, Զաքարիայի ու Եղիսաբէթի որդին, 2. Յովհաննէս առաքեալ ու Աւետարանիչ Զեբեդէոսի որդին, 3. Մարկոս Աւետարանչին անունը։

Յովսէփ. 1. Յակոբի որդին, 2. Յուդայի ցեղէն Մարիամի այրը, 3. Արեմաթացի, 4. Քրիստոսի աշակերտ որ կը կոչուի նաև Յուստոս=Բարսաբա։

Յորդանան. Ս. երկրին գլխ. գետն որ 3 ճիւղ ունի։

Յուդա. 1. Յակոբի Դ. որդին որուն սերնդէն էր Դաւիթ և ասոր թագաւորական ցեղէն ծնաւ Փրկիչը, 2. Իսկարիովտացի, 3. Առաքեալներէն մէկն որ կը կոչուի Զեբէդոս=Թադէոս՝ Քրիստոսի մօրաքեռորդին։

Նազարէթ. Երուսաղէմէն դէպ ի Հիւսիս 70 մղոն, բլրի մը կողմն և Թափոր լերին հիւսիսային արևմտեան կողմը, հիմայ կը կոչուի Նազարա։ Նային, Թափոր լերին հարաւային արևմտեան կողմը։ Հիմայ կը կոչուի Նէին։

Նեղոս. Եգիպտոսի անուանի գետը։

Նիկոդիմոս. Հրէից ազգ. ժողովին անդամ. ի սկզբան փարիսեցի ու յետոյ աշակերտ Քրիստոսի։

Նինուէ. Ասորեստանի մայրաքաղաքը՝ արդի Մուսուլի մօտ Գուշունճիգ ու Գորսապաս։

Ուխտ. Սովորաբար «ուխտ» կը նշանակէ երկու կողմէ կնքուած դաշինք կամ խոստում առ Աստուած բարի գործ մը կատարելու, բայց Հին ուխտ ու Նոր ուխտ ըսելով՝ կ'իմանանք Աստուծոյ հին ու նոր խոստումները մարդոյ։ Հին ուխտն է հրեայներուն յայտնուածը, իսկ Նոր ուխտն է Քրիստոնէութիւնը։

Ուր. Աբրահամ նահապետին ծննդավայրը, արդի Ուրֆա։

Պադմոս. Արքիպելագոսի մէջ կղզի Սամոսի ու Նաքսոսի միջև։

Պոնտացի Պիղատոս. Հռոմայեցի Ե. կառավարիչ (26—36) որ ընդհանրապէս կը նստէր Կեսարիա։ Ատելի եղաւ հրէից՝ իր խիստ ու անագորոյն վարչութեան համար։

Սաբա. Կարմիր ծովու եզերքը, հարաւային Արաբիա, մայրաքաղաք Մարէբ երկրին։

Սադուկեցի. Աղանդ մը, Քրիստոսի հակառակորդ։

Սամարիա. Իսրայէլի թագաւորութեան մայրաքաղաք. հիմայ աննշան գիւղ մըն է և կը կոչուի Սեպուստիէ։

Սիդոն. Արդի Սայտա քաղաքը։

Սիմոն. 1. Սիմէոն ծերունի, 2. Պետրոս առաքեալին անունը, 3. Սիմոն Կանանացի, 4. Սիմոն Կիւրենացի՝ Յիսուսի խաչափայտը կրողը, 5. Սիմոն փարիսեցի որուն տունը հրաւիրած էր Յիսուս Կափառնայումի, 6. Սիմէոն Բորոտ որուն հետ Յիսուս Բեթանիոյ մէջ ընթրեց, 7. Յուդա Իսկարիովտացւոյն հայրը։

Սինա. Համանուն թերակղզւոյն մէջ լեռ մը։

Սիոն. Երուսաղէմի բարձրագոյն ու հարաւային բլրակը։

Սուգ ընել. Հրեայներն ազգականներու և բարեկամներու մահուան ատեն մեծ սուգ ու կոծ կ'ընէին, կուլային, կը պատռտէին հանդերձները, կուրծքերնին կը քաղխէին, և հող կը ցանէին գլուխնին, գետինը կը նստէին, բոկոտն կ'երթային, կը փետտէին մազերնին ու մօրուքնին։ Եօթն օր կը տևէր սուգը։ Տունէն դուրս չէին բարեւեր։

Վեղար. Աշխարհուրացման ու ինքնամոռացման արտաքին նշանն է. պատուար մըն է որ աշխարհէն ու հաճոյքէն կը բաժնէ նուիրեալ անձը։

Տասանորդ. Հրեայներն եկամուտին կամ շահուն տասներորդ մասը կուտային կրօնական նպատակներու։ Այս տասանորդը սահմանուած էր Ղեւտացւոց որ իրենց տասանորդին տասներորդ մասը կուտային քահանայներուն։

Տաճրակ. Կը մատուցուէր Մաքրութեան զոհերուն համար։

Տիբերիա. Գալիլիոյ քաղաք, Գենեսարէթի արևմտեան ծովափը։

Տիւրոս. Արդի Սուր քաղաքը։

Տօն հրեական. 1. Շաբաթ՝ յիշատակ Արարչութեան հանգստեան, 2. Պասէք=Զատիկ՝ կը յիշեցնէ Եգիպտոսէ ելքը, 3. Պենտեկոստէն՝ Սինա լերան վրայ տրուած օրէնքը,

բէնքը, 4. Տաղաւարահարց՝ Քառասնամեայ պանդխտութիւն անապատին մէջ, 5. Փուրիմ=Շեքիր պայրամը՝ Համանի դաւաճանութենէ ազատուիլը, 6. Կրօնական տարեգրութիւն, 7. Աւերում Տաճարին, 8. Քիփուր՝ Ողջակէզներու տօնը, 9. Խանուկա՝ Նաւակատիք տաճարին։

Փարաւոն. Հին եգիպտացւոց թագաւորներուն տիտղոսը։

Փարիսեցի. Աղանդ, ձեւապաշտ հրեայներ, 2. կեղծաւոր։

Փիլիպպոս. 1. Զորրորդապետ Մեծն Հերովդէսի տատն, 2. Բեթսայիթացի Փիլիպպոս առաքեալ՝ որ նախ Յովհաննէս Մկրտչի աշակերտ էր։

Փիւնիկէ. Արդի Պէյրութ կուսակալութիւնը։

Փղշտացիք. Քանանու հարաւային ծովեզերքի բնակիչները. ասոնց անունով երկիրը կոչուեցաւ «Պաղեստին»։

Քարկոծել. Սովորական պատիժ էր Հրէից մէջ։ Մահապարտը քաղաքէն դուրս կը հանէին և կը քարկոծէին կամ մեծ քար մը գլորէին մարմնին վրայ։

Քրիստոնեայ. Անտիոքի մէջ 42 թուականէն ի վեր Քրիստոսի հաւատացեալներուն տրուած անունը։ Հաւատացեալները զիրար կը կոչէին եղբայր։ Հեթանոսներն ալ զանոնք կ'անուանէին Նազովրեցի։

Օրինական. Այս անունը կը տրուի այն հրեայներուն որ իրենք զիրենք նուիրած էին սորվելու և մեկնելու Հրէից օրէնքը. ընդհանրապէս փարիսեցի էին օրինականները։

ՎԵՐՋ

Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԻՐԱՆ
S.S.R.A. Ազգ. Ազգայ Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2(075)
Խ-29

«Ազգային գրադարան»
NL0151319